

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

ՆԻԺԹԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՊՐԵԿ Ը.

1. ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՈՒՄԵԿԱՅ
2. ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻԶ ԵՒ ՇՈԹՈՌԿԱՆՑ ՏՈՀՄԸ
3. ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ
(ԳԵՏԱՇԷՆԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ)

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ “ՍԻՈՆ” ԱՄՍԱԳՐԻՑ)

ԵՐՈՒՍԱԴԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1935

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ(*)

(ՅՈՎՍԷՓԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ)

1. ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ, Սասունցի Դաւիթ, Ժողովրդական լէպի երկու վարիանտներ (Արարանի և Մոկաց բարբառներով), գրի առաւ Գարեգին Սարկաւագ, Ժողովրդական նիւթեր, Գիրք Ա.: Հրատարակութիւն Թիֆլիսի Ընկերութեան Հայ Գրքերի Հրատարակութեան, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի, 1892, 8⁰ Ժ + 151 էջ:

2. ՓՇՐԱՆՔՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԻՑ, Ժողովեց Գարեգին Սարկաւագ Յովսէփեանց, Ժողովրդական նիւթեր, Գիրք Գ.: Հրատարակութիւն Թիֆլիսի Ընկերութեան Հայերէն Գրքերի Հրատարակութեան, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի, 1892, 8⁰ 139 էջ:

3. MOSAIK MIT ARMENISCHER INSCRIPTION IM NORDEN JERUSALEMS, Von Archidia-konus Owsepian von Etschmiadzin, (Hierzu Tafel 1), արտատպուած Zeitschrift des Deutschen Palästina Vereins. Band. XVII. էջ 4:

4. Die Entstehungsgeschichte des Monotheletismus nach ihren Ovelen geprüft u. dargestellt. Leipzig 1897:

(ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ)

5. ՄԻԻԹԱՐ ՍԱՍՆԵՑԻ (Կերմանեցի) 1260? — 1337. (արտատպուած «Արարատ» Ամսագրից), Վաղարշապատ, տպարան Մ. Աթ. Ս. Էջմիածնի, 1899, 8⁰ 32 էջ:

6. ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԱՅՈՑ ՄԷՁ. Գ. Վ. Յովսէփեան: Հրատարակութիւն «Լուսա» Հանդիսի, Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանի, 1902, 8⁰ 7 էջ:

7. ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՁ ԵՒ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԻՆ. աշխատասիրութեամբ Գ. Վ. Յովսէփեանի, Վաղարշապատ, տպարան Մ. Աթ. Ս. Էջմիածնի, 1903, 8⁰ էջ 200:

8. ՌՈՒՍՏԱՄ-ՁԱԼ. Ժողովրդական լէպ (Մոկաց բարբառով), գրի առաւ Գարեգին Վ. Յովսէփեան, արտատպութիւն «Աղագրական Հանդէսից» Հրատարակութիւն Աղագրական Հրատարակչական Ընկերութեան, Տպարան Մնաց. Մարտիրոսեանի, Տիֆլիս, 1905, 8⁰ 52 + 39 էջ:

9. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, արտատպուած «Հայրենիք»ից, Տիֆլիս, տպարան Օր. Ն. Աղանեանցի, 1908, 16⁰ 80 էջ:

10. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, գրեց Գարեգին Վրդ. Յովսէփեան: Հրատարակութիւն Սրբազան Օրմանեանին համակրող Նոր-Նախիջևանցիների, Բ. տպագրութիւն, Թիֆլիս, տպարան Վրաց Հրատարակչական Ընկերութեան, 1911, 8⁰ էջ 54:

11. ԽՈՏԱԿԵՐԱՑ Ս. ՆՇԱՆ, մի նմուշ Ժ. Գաբու հայ ոսկերչութեան, նկարներով, Հրատարակութիւն «Գեղարուեստ» Հանդիսի, Թիֆլիս, տպար. Մ. Մարտիրոսեանի, 1912:

12. ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԵԼԻՔ ՀԱՊԻՐԱԿԱՆ ԱԼՔՈՄԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Էջմիածին, 1902, 8⁰ 20 էջ:

13. ՆԱՀԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ. (արտատպուած «Արարատ»ից Յունուար, 1907, 8⁰ էջ 8:

14. ՁԱԳԱՎԱՆԻՑ ԺՈՂՈՎԸ, (արտատպութիւն «Շողակաթ» Ժողովածուից), Էջմիածին, տպար. Մ. Աթ. Ս. Էջմիածնի, 1913, 8⁰ 22 + 46 էջ:

15. Poezdka we Jerousalim létom 1911 goda (otdelnij ottisk Christianskawo Wostoka S. P. 1913:

16. ԳՐՁՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՁ. Մասն Գ, Քարտէզ հայ հնագրութեան, (Հայ գրի գիւտի 1500 ամեակի առթիւ): 95 տախտակով: Վաղարշ., տպարան Մ. Աթ. Ս. Էջմիածնի, 1913, 8⁰ 52 + 95 տախտակ:

17. ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ ԿԵԱՆՔԸ, (Կենսագրական նոր նիւթերով), Գարեգին Վրդ. Յովսէփեան: Արտատպուած «Արարատ»ից, 1913, Սեպտ. — Հոկտ., Դեկտ. և 1914 Յունուար: Վաղարշապատ, տպարան Մ. Աթ. Ս. Էջմիածնի, 1914, 8⁰ 18 + 31 էջ:

18. Potomstwo Tarsaica i Mina Chatouni (Ottisk iz «Christianskawo Wostoka») S. P. 1913:

19. Obraztchiki Armianskich Zerkownich Wi-chiwek (Otdelnij Ottisk iz «Christianskawo Wostoka» T. V.), Petrograd, 1916, էջ 21 և չորս տախտակ պատկերներ:

(ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ)

20. ԱԶԻԲԷԿԷՆՔ ԵՒ ՆՐԱՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ, (Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն): Արտատպութիւն «Բանբեր» Էջմիածնի Գիտական Ինստիտուտի Ժողովածուից: Տպարան Էջմիածնի Գիտական Ինստիտուտի, 1921, էջ 28:

21. ՀԱՅ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՍՏՐՁԻԳՈՎՍԿՈՒ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ, Արտատպութիւն «Բանբեր»

(*) Քաղուած է Տ. Արտակ եպս. Սմբատեանի «Ս. Էջմիածնի Միաբանութեան Գրական-Կրթական Գործունէութիւնը եւ Մայր Աթոռի Տպարանը» (1512-1920) վերնագրով անտիպ աշխատութիւնից:

7 (47.995)(09)

2-87

Yury

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

750.56 (47.925)

9 (47.925)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 թ.

ՆԻԻԹԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՊՐԵԿ Ա.



1. ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՈՒՄԵԿԱՅ
2. ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻԶ ԵՒ ՇՈԹՈՒԿԱՆՑ ՏՈՀՄԸ
3. ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ
(ԳԵՏԱՇԷՆԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ)

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ "ՍԻՈՆ", ԱՄՍԱԳՐԻՑ)



ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1935

ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՈՒՄԵԿԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՏՈՀՄԸ

Ա.

Էջմիածնի (այժմ պետական) մատենադարանի N 215/155 ձեռագիրը, ի միջի այլոց, ունի մի շատ հետաքրքրական մանրանկար. իշխանական զգեստով մի պատանի նստած է բարձրաթիկունք աթոռի վերայ, որի կողքին մակազրուած է. «Զբարի անուն և զԱվ. մեծացեալ զմեծ պատրոնն զՎախտանգն յիշեցէք ի տր. : Նաև զրազմամեղ զծողս և զծնողսն իմ զՍարգիս և զԹագուհի, և ած. զձեզ յիշէ» (պատկ. 1):

սկսուածքով, վերջից թերթեր պոկուած լինելու պատճառով. հաւանօրէն ամբողջութիւնը առաքեալի թղթերի ժողովածու էր, զուցէ և ամբողջ առաքելական թղթերի, Յայտնութեան հետ, որի համար ենթադրութեան հիմքեր ունինք, ինչպէս կը տեսնենք: Այժմ միայն 130 թերթից է բաղկացած:

Զարդարուած է մանրանկարներով, սկսուածքի և լուսանցքի զարդերով, մանրանկարչական տառերով, որ կիլիկեան



Պատկեր 1

Ձեռագիրը փոքրագիր է՝ 15×12 սմ. մեծութեամբ և 3 սմ. հաստութեամբ, կաշէպատ հասարակ կազմով, թուղթ, աջից դէպի ձախ թեքուած բոլորգրով, երկսիւն՝ իւրաքանչիւրը $10,8 \times 3$ սմ.: Սկզբում ունի երկու թերթ մագաղաթ պահպանակ՝ լատիներէն գրչութեամբ: Բովանդակութիւնը Պօղոսի թղթերն են՝ յառաջարանով. կիսատ է մնում Փիլեմոնի

ոճին մօտենալով հանդերձ, պահել է արեւելեան Հայաստանի արուեստի բնոյթն ու առանձնայատկութիւնները, մանաւանդ ձևերի ու մօտիւնների կողմից. մանրանկարչական տառերը թղթերի սկզբում կազմուած են բուսական և ութաձևերի մօտիւններով, զծերի հանդիպման տեղում զնդակներով. զործադրուած է փոշոսկի կամ խեցոսկի և ոչ երբեք թերթոսկի:

Հոռմայեցւոց թղթի սկզբում Յիսուսի պատկերն է $12 \times 7,2$ սմ. մեծութեամբ (պատկ. 2), նստած բարձրաթիկունք ա-

օղակների եւ կանթերի մօտիւններով: Երբայեցւոց թղթի 1-2 համարի դէմ՝ 123 ա. նկարուած է հիմքում մի աստիճա-



Պատկեր 2

թողի վերայ, ծածկուած երկարաձիգ բարձով և զարդարուն լաթով. տունիկայի վերայից ձգել է ուսերին մեծ, մոյգ մանիշակագոյն տոգայ, որ ձախ թեւի վերայով իջնում է ցած, ծածկում ծնկներն ու ուլոքները. կրծքից և ոտների մօտից երևում են տունիկայի գեղեցիկ ծալքերով մասերը, իսկ թեւերի տակից ներքնազգեստի ոսկեզօծ, նեղ թեզանիքը: Ունի բոլորակ և խաչազարդ նիւթուս. գլխի խիտ և կլինեմոնագոյն մազերը ճակատին երկուսի բաժանուած; իջնում են դէպի ուսերը: Դէմքն ամբողջական է, կլինեմոնագոյն, թեթեւ մօրուքով. մեծ աչքերն ինքնամփոփ եւ մտածկոտ արտայայտութեամբ. գլխի երկու կողմից «Յս» և «Քս» գրուած, կապոյտի վերայ սպիտակ դծերով. աջով խաչակնքում է և ձախում ոսկեզօծ փաթոյթ բռնել: Պահուած է բիւզանդական արուեստի մէջ ևս ընդհանրացած ձևակերպութիւնը, բայց դէմքը արեւելեան: Պատկերի վերեւի մասում ոսկեզօծ մեծ աղեղը երկինքն է ձևացնում: Թուղթն ունի եւ սլոնաձիւքի և լուսանցքի զարդ, հռատիւրեւի, արմաւենիկի եւ թեթեւ հիւսուածքի մօտիւններով (պատկ. 2), իսկ «Պաւ» մանրանկարչական տառերը արմաւենիկի կոնտուրի վերայ ութաձեւերի,

նով մատուռ գոյնզգոյն քարերից (պատկ. 3) $6,50$ սմ. մեծութեամբ, ուշադրութեան արժանի, որ գմբեթի այս ձևով արեւելեան Հայաստանի մանրանկարչութեան մէջ հրնագոյններից մէկն է. գմբեթը սրածայր է, նեղ թմբուկով, որ մեր մանրանկարչութեան մէջ յաճախում է ԺԴ. դարի ա-



Պատկեր 3

ռաջին քառորդից, ինչպէս օրինակ Գլա-
ձորի դպրոցի Թորոս Տարօնեցու գործերի
մէջ. ծագմամբ հեռաւոր արեւելքից, հա-
ւանօրէն մօնղոլական պետութեան ժամա-
նակ մեզ եկած: Նոյն թղթի Թ. 11-12
համարի հանդէպ լուսանցքում Գրիստոս,
որպէս քահանայապետ, յունական եպիս-
կոպոսի զգեստաւորութեամբ՝ եմփորոնով,
աւետարանը կրծքին սեղմած և աջով խա-
չակնքելիս. դէմքի արտայայտութիւնը խա-
ղաղ, աչքերը խոշոր, գլուխն առանց սա-
ղաւարտի, փոքր ինչ եղծուած:

Նկարուած են և Պօղոսի պատկերնե-
րը այլ և այլ դիրքերով, 32 ա. 73 ա. եւ
80 բ., վերջինը, (պատկ. 4) երեսի վերայ



Պատկեր 4

ընկած, դարձի տեսարանը, տարաբաղդա-
բար վատ պահուած վիճակում. ամբողջ
երեսը 15×12 սմ. մեծութեամբ: Երկինք
ձեւացնող կիսաշրջանից երեւում է զուրս
եկած մի ձեռք, որից երեք կարմիր ճա-
ռագայթներ իջնում դէպի Պօղոսը՝ «Սա-
ւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս» վեր-
տառութեամբ: Երբ. թղթի սկզբին՝ 114 ա.
Պօղոս նստած է ոսկեղօծ, երկարածիկ
բարձով (մութաքայ) բոլորակ աթոռի վե-
րայ, աւետարանիչներին յատուկ զգեստա-
ւորութեամբ. անկիւնում երկինքն է, որ-

տեղից զուրս է գալիս աղաւնակերպ Ս.
Հոգին, բերանից ճառագայթներ ուղղուած
դէպի հեղինակ առաքեալը:

Զարդերից յիշատակելի են պարիկ
126 բ. կրկին գլխով և կրկին զոյգ թանե-
րով արծիւ(*) 5,50 սմ. մեծութեամբ, պա-
րանոցը և պոչը զոյգ գծերով մանեկաւո-
րած, 128 ա. (պատկ. 5). աղաւնու նմա-



Պատկեր 5

նութիւն բերող մի ուրիշ թռչուն՝ պարա-
նոցն ու պոչը դարձեալ մանեկաւորած
113 բ. (պատկ. 6) 6,50 սմ. մեծութեամբ



Պատկեր 6

(*) Այդպիսի արծիւների մասին տես մեր «Խաղ-
բակեանք», եր. 177:

զարդի հետ: Ապա ուրիշ զարդերի հետ լուսանցքում կան բոլորակներ՝ կանթերով և օղակներով, որոնցից մէկի մէջ կարդացւում է 49բ. «սարոն վախ...», մնացածը եղծուած. 88բ. պա(ր)ոն վաղթ(ան)գ (որդի Ումե)կայ(*), և 120 ա., որ ամենեւին չի կարդացուում: Զարդերը եւ մանեկաւոր թռչունները սասանեան աւանդների և արեւելեան Հայաստանի հին արուեստի դրոշմ են կրում:

Բայց ամենից կարեւորը Վախտանգի մանրանկարն է, 106 ա. $12,8 \times 4$ սմ. մե-



Պատկեր 7

ծուծեամբ (պատկ. 1 եւ 7)(**), որի մասին յիշատակեցինք վերեւ, պատմական-ազգագրական նշանակութեամբ: Պատանի անմորուք Վախտանգը նստած է բարձր պատուանդանով և բարձրաթիկունք աթոռի վերայ. աջ ձեւան դրել է կալմած, բաց աւետարան, Ղուկասի սկզբնաւորութեամբ. «քալնդիրում քյաւաթ»: Թերթերի եզրները ոսկեզօծ: Իշխանը հագել է մանիշակագոյն, գեղեցիկ ծալքաւորուած, երկար, բիւզանդական տունիկայ, որ հասնում է մինչև ութքները. օձիքը, կուրծքը եւ ներքեւի քղանցքները ոլորապտոյտ, պարզ արմաւենիկի ոսկի զարդով. մէջքը սեղմուած ոսկի քամարով. թւերը բազուկների մօտ սեղմած՝ ոսկեզարդ թեղանիքով. արմուկներից վեր մի մի ժապաւէնաձեւ կապ թւին, սե ֆոնի վերայ եռանկիւնաձեւ, գիկ զակ ոսկեզարդով, որ իշխանական նշանն էր: Զարդարուեն եւ ձեւները: Գլխին դրել է՝ գագաթը քիչ բարձր եւ սրածայր՝ գլխարկ, բացուածքի շուրջը և արտաքին կողմը ոսկեճամուկ, յետեւի կողմից սեւ ու ոսկեգոյն ժապաւէններ կախուած. գլխարկի կողքից մի մասը փշացած է պատկերի մէջ: Կոշիկները սեւ են, սրածայր եւ առանց կրունկի. գարշապարի մօտից, կողքերից, զոյգ սպիտակ գծերի մի զարդ բարձրանում է մինչև ճիւղների ծայրը, նոյն գծերով որոշուած են և օտքերի թաթերը՝ ոլորի մօտ երեսի կողմից: Դէմքը նուրբ է, առանց մորուքի եւ ընչացքի, քիչ դէպի աջ թեքուած, գեղեցիկ և փոքր բերանով, սրածայր քլթով, աչքերը խաղաղ և խոշոր, ունքերը բարակ և կամարաձեւ, ականջներից օղեր կախուած, այտերի կեդրոնն թեթեւ կարմրութեամբ. ընդհանուրը լուրջ և տխուր արտայայտու-

(*) Փակագծի մէջ դրուածները մենք ենք լրացնում մնացորդներից դատելով:

(**) Պատկեր եօթը լուսանկարուած է Ախիկեանի ձեռքով գունազարդ, մեծացրած օրինակից, որ պատրաստել ենք մեր մանրանկարչութեան աշխատանքի համար:

թեամբ, մազերը կրնեմոնագոյն և երկու փոքրիկ փնջեր զլիսարկի տակից ճակատի վերայ իջած: Ձեռքերը նուրբ են, բարակ և երկար մատներով. աջով բռնել է ծնկանը դրած աւետարանը վերեւի կողքից, իսկ ձախը դրել զրքի երեսին: Ընդհանուր զգեստաւորութեամբ նման է Խութլու բուդայի՝ Սաղուն աթաբէգի որդու որմանկարին՝ Հաղբատի հարաւային պատի վերայ, որի լուսանկարը հրատարակել է ակադեմիկ Մառը(*), իսկ գունազարդ արտանկարութիւնն այժմ գտնուում է Երեւանի թանգարանում:

Հետաքրքրական է նաև բարձրաթիկունք և զարդարուն աթոռը, որի վերայ նստած է. աթոռի տակ փռուած է զարդարուն գորգ(?), տեսանելի են երեք ոտները: Նստողի ոտները զետնի վերայ չեն, այլ աթոռի խորութեան մէջ, կարծես կախուած: Ներքի մասի առաջնահայեաց կողմը զարդարուած է ճաղերի շարքով, ինչպէս սովորական է պատշգամբների համար: Աւելի բարձր նստելու աեղն է երկարաձիգ, ոսկեճամուկ բարձով եւ սաժածկուած զարդարուն լաթով, որի վերայ բազմած է պատանի Վախտանգը: Մէջքի մասը ծածկուած է կանաչ դաշտի վերայ սև խաչանիշներով զարդարուած կտորով. վերին անկիւնները ոսկեգոյն սրտաձևերի մէջ եռատերեւի օրնամենտով: Թիկունքի վերին անկիւններում մի մի շրջանակով եզերուած նեղ և երկար լուսամուտ, իսկ ճակատին ձգուած է զարդարուն տախտակ, զլիսին բոլորաձև դմբեթ, շրջապատուած աւելի փոքրիկ դմբեթիկներով, որոնք նոյնպէս փոքրիկ լուսամուտներ ունին, գուցէ և իբրև զարդ: Մի խօսքով իշխանական մի փառաւոր գահոյք է, գուցէ և նմանութեամբ եպիսկոպոսական աթոռների: Արդէն «այլ. մեծացեալ մեծ պատրոն» վերտառութիւնը պարզ ապացոյց է, որ նորա վերայ նստող Վախտանգը իշխանական ծագում ունի:

Բ.

Բայց ո՞վ է նա:

Բարեբախտաբար այս հարցի պատաս-

խանը լիովին պարզում են մատենագրական և արձանագրական մի քանի աղբիւրներ. էջմիածնի մատենադարանում ունինք մի երկրորդ ձեռագիր, N 980 նժ., պատրաստուած նոյնանուն մի պատանի իշխանի համար, որ միայն Մատթէոսի աւետարանն է, կաշեպատ կազմով, $5,50 \times 7$ սմ. մեծութեամբ, գրուած լաւ և պինդ մագաղաթի վերայ, փոքր երկաթագրից բոլորգրին անցնող ընտիր գրչութեամբ (պատկեր 8)(*) . բնորոշ տառերից չ, զ, յ, ջ երկաթագիր, իսկ ա, յ, ց, բոլորգիր: Բուն գրչութիւնը $5,1 \times 4,1$ սմ.: Ամբողջը 205 թերթից բաղկացած:

Սկզբում 1 ա. Մատթէոսի անդրին է, աւետարանը ձախ ձեռքով բռնած, իսկ աջը կրծքին դրած. յաջող մանրանկար է, բայց վատ պահուած. սկզբնաղարդը վերելից ուղղանկիւն է, ներքեւից բաց. Գ-ը մեծ ոսկեղիր, բայց խոնացած: Հատուածներն սկսւում են կարմրագեղով, միջին բոլորաձև երկաթագրով. լուսանցքին սովորական հիւսուածքի, եռատերեւի, իրար մէջ հագցրած սրտաձևերի մոտիւններով, ոսկի գաշտի վերայ: Բոլոր հատուածների գէմ զարդեր չկան. ամբողջը կարող և աղնիւ գրչի գործ է:

Յիշատակարանից տեղեկանում ենք, որ գրուած է «մատթէոսեան աւետարանս ի թվի. ԶԻԸ: յամսեանս արեգ. ԻԸ: հրամանաւ բարիարմատ և քաղցրամիտ պատրոնին . . . անկա (այսինքն Վախտանկա կամ Վաղթանկա, պակաս մասը քերուած է). որդո Ածասէր մեծ պատրոնին Ումեկին (այս անունն էլ թեթեւ քերուած, բայց նոյն գրերի վերայով տարբեր թանաքով նորոգած) և թոռին իշխանաց իշխանին ջալալին: Ի վայելումն եւ ի պահպանութի. անձին իւրոյ: և ի խրատ և ի վարժումն մանկական տիոց իւրոց»: Գրուած էր և պատանի իշխանի մօր անունը, բայց անհարազատ ձեռքը ջնջել է և տեղը «Ձուլու խաթուն» նշանակել:

Երկու ձեռագիրների ծագման մէջ եղած սերտ առնչութիւնը աչքի է ընկնում առաջին բոպէից. երկուսն էլ ստացել է «պատրոն վախտանգ» որդի Ումեկի և պա-

(*) Մեզի դրկուած լուսանկարներու մէջ կը պակսի թիւ ութը:

տանի հասակում. մէկն աւետարան է, նորա վարժութեան և դաստիարակութեան համար, միւսն էլ, մակարեբելի է, որպէս շարունակութիւն աւետարանական ուսման: Առաջինը գրուած է 1279 թուին, երկրորդը գրուած պիտի լինի նորանից ոչ շատ ուշ, հաւանօրէն 1280 թուին, յամենայն դէպս 1284 թուից առաջ, երբ նոյն Վախտանգին յիշուած ենք տեսնում ուրիշ առթիւ, արդէն իբրեւ մեկենաս. մենք կը տեսնենք, որ մինչև իսկ հիմունքներ ունինք կռահելու, թէ ո՞րտեղ պէտք է զըրուած լինին այդ ձեռագիրները և թէ ինչո՞ւ պատանի Վախտանգը «պատրոն» է կոչուած: Խնդիրն աւելի ևս ակնբեր է դառնում, երբ համեմատում ենք երկու ձեռագիրների գիրն(*) ու արուեստը, որ կատարելապէս նոյն են, թէև աւետարանի մէջ գրիչը իւր անունն է յիշում՝ «Եւզզծողս զվարդան յիշման արժանի արարէք», իսկ Վախտանգի պատկերին կցուած մակագրութեան մէջ միայն ծնողների՝ Սարգիս և Թագուհի: Անշուշտ գրչի անունը վերջին և մեծ յիշատակարանի մէջ կը լինէր, որ պակասում է այժմ:

Վախտանգի մասին աւելի մանրամասնութիւններ է տալիս Յովհաննէս Երզնկացին իւր Յաղագս երկնային շարժման աշխատութեան նախադրութեան մէջ(**): «Ես նուազտ Յոհ. Եզնկայեցի աշակերտ հոգելից հօրն և սբ. վրին. Վդա., սպասաւոր սբ. գրոց բանի: Ի թու. 217. պատահեաց զալ ի կողմանս Ածապահ թգրութեա. աշխարհիս վրաց, ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքն ի Տփլիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց: Եւ հանդիպեցաւ խօսել մեզ բան քարոզութե. ի դուռն եկեղեցոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան հայոց պր. Քարիմատինին, զոր շինեալ էր Ածասէր և բարինոգի հայրն նորա պր. Ոմեկն: և էր խօսեցեալ բանն Յղգս. երկնաին շարժմանն, վս. որոյ ախորժելի եղև զուար-

թամիտ պատանոյն Վախթանգա, որ էր որդի կրտսեր հռչակաւոր անուան պր. Ոմեկին, և մայրենի ազգաւ թոռն մեծ իշխանին Զաւալի տն. Խաչենոյ, որդի մօր բարեպաշտի, որ էր Քի. օրինօքն զարգարեալ հոգի, և ի խնդիր բանիս յորդորող զորդի. սա խնդրեաց ի մէնջ յղգս. երկնի և նորին շարժմանն: յոր հարկեալ յորդորեաց զտկարութիս մեր մեծաղգեպն տր. Յոհ. ազնուական զարմից եւ բարէտոհմիկ հարց ծնունդ. որ և շարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնդրողաց և ակնառեալ ի պատուոյ շնորհաշուք տն., և զերապատիւ եկեղեցոյ գլխոյն, ի նրբաշաւիղ և ի կորովամիտ բանից սբ. հարցն եւ վղտաց մերոց. և իմաստախոհ արանց պարզեալ, գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք վս. դիւրաւ հասկանալի լինել ընթերցողաց»:

Հայ գիտնական Մեղիսեղբէգով պարզել է, որ Երզնկացու նախադրութեան մէջ ակնարկուած եկեղեցին Մայգանի Ս. Գէորգ, կաթողիկէ կամ Բերդի մեծ եկեղեցին է(*), և որովհետեւ «պատրոն» է կոչուած Վախտանգը, կարելի է եզրակացնել, որ երկու ձեռագիրներն էլ գրուած են այստեղ(**): Նախադրութեան մէջ յիշուած «բարէտոհմիկ հարց ծնունդ» Յովհաննէս եպիսկոպոսը Հաղբատի Դոփեան նշանաւոր եպիսկոպոսն է, ԺԳ. դարում նոյնանուն երրորդը, Համազասպի յաջորդը. յաճախ յիշատակուած Հաղբատի եւ շրջակայքի արձանագրութիւնների մէջ, ինքն էլ նշանաւոր շինարար, գրչութեան և գիտութեան հովանաւոր: Նա է կանգնել Հաղբատի Ամենափրկիչ կոչուած փառաւոր խաչարձանը, զարդարուած հետաքրքրական պատկերաքանդակներով, շինել «ըզգրքատուն և զսրահ նորին», կազմել է տուել «զմեծածախ պահարանն Բրդաձո-

(*) Bulletin de l'Institut Caucasicn d'hist. et d'archéologie. 111. 1925. թ. 49. ուսերէն:

(**) ԺԳ. դարում «պատրոն» բառը յատկացուած էր եկեղեցիների շինող կամ հովանաւոր իշխաններին, բնականաբար եւ նրանց անմիջական ժառանգներին. «պատրոն» էին կոչուում նաեւ զերազաս իշխանները կամ թագաւորները իրենց ենթարկուած իշխանների նկատմամբ. տ. մեր «Խաղբակեանք կամ Պռոշեանք». 1928. եր. 71: Երրորդ՝ մասնաւոր նշանակութեամբ քիչ յետոյ:

(*) Համեմատել պէտք է պատկ. 8 եւ 1. 4 եւն.:

(**) Տպագրուած է «Տետրակ համառօտ եւ ի իմաստնախոհ բանիւք» վերնագրով, 1792 թուին Ն. Նախիջեւանում, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի հրատարակութեամբ: Մենք օգտուում ենք էջմ. N 2173 ձեռագրից, 150ա:

րոյ», ևն. (*): Ժամանակակից և գործակից Սադուն աթարէզ մեծ իշխանի, որ Մահկանաբերդի իշխանապետն էր, Հաղբատի հովանաւոր տէրը, հաւանօրէն եւ Տփլիսի ամիրան, ինչպէս նորա նախնին Քուրդ իշխանը, որ Վրաց Գէորգի III-ի, Թամարի հօր օգնականն ու զինակիցն էր ընդդէմ Օրբէլեանների ապստամբութեան (**): Յովհաննէս եպիսկոպոսի ներկայութիւնը Տփլիսում իբրեւ Հաղբատի և Մահկանաբերդի եպիսկոպոսի, միանգամայն հասկանալի է. այդ կապը պահւում էր Հաղբատի և Թիֆլիսի մէջ մինչև ԺԸ. դարու վերջերը:

Պ.

Գանձասարի երկու արձանագրութիւնները աւելի եւս պարզում են Վախտանգի անձնաւորութիւնը եւ ընդարձակում մեր տեղեկութիւնները նորա ազգակցական կապերի մասին: Մամախաթուն և իւր «պատրոն» ձարը ԶԺԷ = 1268 թուին միաբանում են Գանձասարի սուրբ ուխտին և ստանում բոլոր եկեղեցիների պատարագը աւագ հինգշաբթի պատրոն Ումեկի համար (***)։ Այս Մամախաթունը, որ ինչպէս կը տեսնենք, Վախտանգի մայրն է, իւր հետ ուխտի եկած ձարին «պատրոնն իմ» է անուանած։ Ղարաբաղի բարբառով, որի մասն է և Խաչենը, մինչև այժմ էլ «պատրուն» նշանակում է սկեսրայր հարսի համար։ Ումեկի մի ուրիշ որդու՝ ձարի արձանագրութիւնից էլ Գեական վանքում կը տեսնենք, որ Ումեկի հօր անունը, յիշուի, ձար էր։ Մի «պատրոն ձար» ՈԾԱ = 1202 թուին մի խաչ է կանգնել Ճահուկի Ապարանի կոչումով քաղաքատեղում, հաւանօրէն, նոյն Ումեկի նոյնանուն հօր հետ (****)։ Այս արձանագրութիւնից պարզ է նոյնպէս որ 1268 թուին Ումեկ արդէն մեռած էր, և

ուրեմն կողմնակի կերպով ունինք նորա Թիֆլիսում շինած եկեղեցու terminus post quem-ը, որ ըստ պրոֆ. Յովսէփ Օրբելու 1251 թուին պիտի նշանակել շինութիւնը արաբական արձանագրութեան մնացորդի հիման վերայ (*):

Իսկ թէ Մամախաթունը Ումեկի կինն էր, Ջալալ Խաչենեցու աղջիկը և Վախտանգի մայրը՝ պարզւում է նոյն վանքի մի երկրորդ արձանագրութիւնից. «ՁԼԵ» թրւականին «նուաստ աղախին Քրիստոսի Մամախաթուն դուստր ինքնակալ իշխանաց իշխանին Ջալալ Դաւայ Հասանին տեառն Խաչենո եւ բարեպաշտ մաւր իմոյ Մամքանին եւ ամուսին մեծ պարոնին Ումեկին» մեծ յուսով ուխտ է գալիս Գանձասարի վանքը իւր Վախտանգ որդու հետ եւ միաբանները խոստանում են Վարդավառի տօնի պատարագը հօրն ու մօրը՝ քանի ինքը կենդանի է, մահուանից յետոյ՝ իրեն (**):

Ինչո՞վ նշանաւոր հանդիսացաւ կեանքի մէջ «զուարթամիտ» և գրասէր Վախտանգը, ոչինչ յայտնի չէ. գիտենք միայն, որ նա վախճանուած է 1244 թուին եւ թաղուած Վայոց Ձորի Եղեգիս աւանում, որ Օրբէլեանների իշխանութեան կեդրոններից մէկն էր, փոխանակ իւր հօր շինած եկեղեցու հովանու տակ կամ Գեական վանքում, որ իւր եղբօր ձարի գերեզմանատունն էր։ Եղեգիսում թաղուելու հանգամանքն անյայտ է, բայց, գուցէ, կարելի է բացատրել նորանով, որ ազգակցական կապեր ունէր Օրբէլեանների հետ։ Վախտանգի մօրաքոյրը Մինախաթուն՝ Տարսա-յիճ Օրբէլեանի երկրորդ կինն էր, Ստեփանոս Օրբէլեանի խորթ մայրը (***): Նորա գերեզմանի արձանագիրն է.

+ Թվին ԶՂԳ. Այս և հանգիստ պարոն Վաղրանկին որդւոյ պարոն Ումեկին (****):

Վախտանգի անուան հետ կապուած մեզ յայտնի թուականների հիման վերայ կարող ենք, գրեթէ, ճշգրտեամբ, որոշել

(*) Ջալալեան. Ա. 70: Երզնկեան, «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ», Վաղարշապատ, 1886. 43: Ստուգել ենք եւ Խաչարձանը լուսանկարել անձամբ:

(**) Մեր «Խաղրակեանք», եր. 5-6:

(***) Ջալալեան. Ա. 191:

(****) Ալիշան, Սիսական. 370. «թվ. ՈԾԱ. կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն պատրոն ձարին. յիշեա Քրիստոս Աստուած եւ ողորմեա»:

(*) X. B. 1918. 198-199. Fragment krestnawo kamnia s arabskoi nadpisj w Tiplise:

(**) Ջալալեան. Ա. 186-7:

(***) X. B. 1913. 216. մեր յօդուածը Potomstwo Tars'aica:

(****) Ալիշ. Սիսակ. 149:

և նորա կեանքի տեղդուծիւնը. հօր մահը տեսանք, սօտաւորապէս, 1268 թուին. Վախտանգը պիտի ծնուած լինի այդ թըւականից առաջ, բայց ոչ շատ առաջ. նորա աւետարանը գրուած է 1279 թուին «ի խրատ եւ ի վարժումն մանկական տիոց իւրոց». առաքելական թղթերն էլ հաւանօրէն 1280 թուականին, որին ապացոյց նորա պատանեկան մանրանկարը, մօտաւորապէս 15 տարեկան: Չորս տարի յետոյ եւս Երզնկացին նորան անուանում է «զըւարթամիտ» պատանի, որեմն եւ ոչ մեծ քան 18-9 տարեկան մեր հաշուով: Այս տուեալներով նորա ծնունդը պիտի նշանակել 1265-1268 թ. թ., որով եւ մեռած պիտի համարել 76-80 տարեկան հասակում:

Պ.

Ումեկեան տոհմը, այսպէս անուանենք Վախտանգի հօր անունով, որ ամենից յայտնի ներկայացուցիչն էր, արեւելեան Հայաստանի բնիկ իշխաններից չէր, այլ եկուոր Մանազկերտի չրջանից. այս մասին մեզ մանրամասնութիւններ են տալիս Վարդան և Գանձակեցին: Առաջինը յայտնում է 1242 թուականի համար. «ի վեցհարիւր իննսուն եւ մի թուին Հայոց Բաշու նուինն փոխեաց զիշխանութիւն Չարմաղանին և էառ զկարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երեւելի, մեծատուն եւ երկիւղած ի Տեառնէ զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զՍտեփաննոս եւ զեղբարսն իւր հինգ» (*): Ուրիշ աղբիւրից էլ գիտենք, որ Թաթարները արշաւանքը զէպի Կարին եւ Փոքր Ասիայի քաղաքները՝ Կեսարիա եւ այլն սկսում էր 1242 թուին. Գրիգոր Դոփեան, որ միւս հայ իշխանների հետ՝ Աւագի զլխաւորութեամբ՝ մասնակից էր այդ արշաւանքին, պատմում է անձամբ մի յիշատակարանի մէջ (**):

Իսկ Գանձակեցին առանց թուականը յիշելու Ումեկի հիւսիսային Հայաստան փոխադրուելն ու Տփլիսում հաստատուելը

կապում է Թաթարական հարկապահանջութեան պատմութեան հետ, որ կատարուել է Մանգու Սանի հրամանով «յեօթն հարիւր եւ քերեք թուականին Հայոց» (= 1254). թուելով հարկապահանջութեան ծանրը կողմերը զանազան դասերից, աւելացրում է. «նաեւ ի վաճառականաց բազում ինչս շահեալ, կուտեցին գանձս սաստիկս ոսկւոյ եւ արծաթոյ եւ տկանց պատուականաց. և այսպէս զամենեւեան սղալուցեալ, եւ վալիւ եւ աշխարով լցեալ զաշխարհս թողին չար ոստիկանս ի վերայ աշխարհացս զնոյն պահանջել յամենայն ամի, նովին համարով եւ գրով: Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի ի Թաթարոյն հանդերձ որդւովքն՝ Յովհաննաւ եւ Ստեփանոսիւ, եւ եղբարք իւրովք. եւ էր յայնժամ ի Տըփլիս քաղաքի բնակութիւն կալեալ, եւ հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, եւ մեծարեալ ի զանէն գրով, եւ յամենայն աւագանւոյն: Սա առատ տուր ետ Արղունին, և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ ի նոցունց: Բայց յեկեղեցականաց ոչինչ առին հարկս, զի չունէին հրաման ի զանէն: Նոյնպէս եւ որդիքն Սարաւանին՝ Շնորհաւերն և Մկրտիչն ընչաւէտք և մեծատունք» (*):

Ումեկը հաստատուելով Տփլիսում, ինչպէս երեւում է Գանձակեցու այս տեղեկութիւններից, վաճառականական մեծ գործունէութիւն ունէր Թաթարական պետութեան սահմաններում. եթէ խանը գրով մեծարել էր նորան, Վրաց Դաւիթ թագաւորի կողմից «հայր» կոչուել եւ Արղունի նման «չար» ոստիկանից «յոյժ մեծարանք» վայելել, ապացոյց է, թէ Ումեկի զիրքն ազդեցութիւնը շատ բարձր էր իւր հարստութեան, հուանօրէն եւ խելքի ու ճարպիկութեան շնորհիւ:

Նորա շինարարական գործունէութեան մասին աւելի բան չգիտենք, քան ինչ Երզնկացին է հաղորդում իւր Նախադրութեան մէջ, բայց ձեռք է բերում հիւսիսային Հայաստանի նշանաւոր վանքերից

(*) Էմինի հրատ. Մոսկվա. 1861 երես 193:

(**) Օրթարիլիսայի (Լենինականի մօտ) աւետարանի պահպանակ մեր Զեռագիրների Յիշատակարանների ժողովածու, անտիպ:

(*) Գանձակեցի. Ղուկ. հրատ. Թիֆլիս, եր. 349:

մէկը՝ Գեորգի, որ Գոշ Մխիթարի շինածն էր, եւ գտնուում էր Իւանէի պետութեան մէջ, հաւանօրէն գնելով Աւագից, ինչպէս Պոռշ Խաղբակեանը՝ Վասակի որդին, գնել էր Այրից կամ Գեղարդայ վանքը դարձեալ նոյն իշխանից իւր կայքով ու կալուածներով (*): Այս մասին պատմում է Ումեկի միւս որդին Ճարը՝ Գեորգայ վանքի իւր մեծ արձանագրութեան մէջ:

Յուսով ողորմութեամբ Ասուծոյ եւ Ճարս որդի պարոն Ումիկին, բոռն Ճարին, աշխարհաւ Մանածկերսոյցի յաշխարհակալութեան Ղաւառնուն ի քաղաւորութեան Վրաց Դեմետրի Բագրատունոյ իմ հայրն Ումիկ գնեալ էր գԳեփիկ ի խո. կարմիր տուգասի. եւ Ճարս գրեցի (?) զՀովս իւր անեն սահմանաւ ի դառն ժամանակի, որ հայրենիքն ածան էր եւ ոսկին քանկ. դո. կարմիր տուգաս, տուի Գեորգայ Ասուածածնին իմ հոգոյ տանս յիշատակ անջնջելի իմ ծնողացն Ումիկին եւ Թագունոյ, ինձ եւ իմ որդեացն Արդուքին եւ իւր եղբարցն, առաջնորդութեամբ Ղասապ վարդապետին. եւ միաքանիս սահմանեցին զաւագ եւ շաքաք աւրն, եւ զասկի աւրն զամեն եկեղեցիքս պատարագ որչափ մեք կենդանի եմք, մեր ծնողացն շինի, եւ յիս եղից մերոց յաշխարհեւ, մեք շինի: Արդ ով զայս գեղս հանել ջանայ յայս եկեղեցոյս կամ գիւմ յիշատակն խափանե ով ոք եւ իցե, որ շինիցի ի ծնողոցն Ադամայ, եղիցի նկովեալ, ԶԼԲ.» (**):

(*) Մեր «Խաղբակեանք»ին եր. 102: Ըստ Գանձակեցու Գեորգի Ջաբարեան եղբայրների, յատկապէս Իւանէի տէրութեան մաս էր ամբողջ Կայենի գաւառով (Ղուկ. հրատ. 204, 210, 242): Գրիգոր Տղայ Խաչենեցին, Աւագի տան կառավարիչը, նորանից գերեզմանատուն է խնդրում Գեորգայ վանքում. այս տեղեկութիւնը հաստատուում է եւ նոյն Գրիգորի մի արձանագրութեամբ նոյն վանքում (Ազգ. Հանդ. X. 28): Ջաջուռ Խաղբակեանի դստեր Վանենու մի աւետարանը գրուած է «ի թուիս Հայոց: ՈԶԱ. ի գաւառիս Կայենոյ ի գերահռչակ սբ. ուխտըս Գէտկայ ընդ հովանեաւ սբ. ածածնիս. եւ սբ. Լուսաւորչիս Գրիգորի. ձեռամբ մեղապարտ Ստեփանոսի յիշխանութիւն իշխանաց իշխանի աթարակ Իւանէի, եւ որդւոյ նորա Աւագին» (Ձեռագրաց յիշատակարանների մեր ժողովածուն, անտիպ): Բւմեկի գնումը կատարուած պիտի լինի 1242 — 1250 թ. թ., զերջին թուականը Աւագի մահուան տարին է:

(**) Ջայ. Ա. 138: Շահիս. Բ. 367: Բարխուդարեան, Արձախ. 350: Իս. Յարութիւնեան. Ազգ. Հանդ. X. 1903: Յարութիւնեան «ԽՌ»ի փոխարէն կարծում է «ԵՌ» պիտի լինի. նոյնպէս «գհոդս» փոխանակ «գհովս»:

Այս արձանագրութեան համեմատ Ումեկեան տոհմը Մանածկերացի էր, որ հակասութիւն չպիտի համարուի Ումեկի Կարինից հիւսիսային Հայաստան կամ Տըփլիս անցնելու իրողութեան. Ումեկն իբրեւ վաճառական հաստատուած էր Կարինում, երբ Թաթարներն արշաւեցին այդ կողմերը, բայց նա ծագումով Մանածկերացի էր, նորա տոհմի տեղափոխութիւնն էլ կապուած այդ քաղաքի մի գաղթականական կամ տեղափոխական շարժման հետ: Մի ժամանակագիր յայտնում է, թէ «Ումեկ» թուականին, «զկարս էառ Ջաքարէ ի Տաճկաց, Հայերն ի Մանծկերոյ եղան(*)»: Թուականն, ի հարկէ, սխալ է. Ջաքարէն Կարսն առել էր աւելի վաղ՝ 1206—7 թ. ըստ Վարդանի եւ Օրբէլեանի նորագիւտ ժամանակագրութեան, իսկ արշաւանքը դէպի Կարին, երբ պարտուեցաւ Սեբաստիոյ սուլթանը Մուշի Առաքելոց յայտնի Տօնականի յիշատակարանի համեմատ, աւելի վաղ ՈՄ — ՈՄԱ. թուականին: Տարբադէաբար մեզ անյայտ են այս գաղթական շարժման հանգամանքները եւ նրանց նոր հայրենիքի կամ բնակութեան վայրը, բայց անհաւանական է, որ Ջաքարիայի արշաւանքի հետ էր կապուած նրանց տեղափոխութիւնը, եւ դոցանից մէկն էր Ապարաների Խաչարձանի կանգնող Ճարը, որ կարծում ենք նոյն պիտի լինի Ումեկի նոյնանուն հօր հետ. գուցէ և առանց դորան էլ վաճառականական յարաբերութեան մէջ Հայաստանի արեւելեան նահանգների և Վրաց տէրութեան հետ:

Ո՞րչափ մեծ էր Գեորգիի հետ կապուած կալուածների տարածութիւնը, չը գիտենք. բայց, հաւանօրէն բաւական ընդարձակ էր, բարձր արժէքից դատելով: Արձանագրութեան ճիշդ ընթերցանութեան համար ապահով չենք, քանի ձեռքի տակ չունինք լուսանկարչական պատկերը եւ անձամբ էլ չենք ստուգել այն, բայց հաւանական ենք համարում Իս. Յարութիւնեանի նկատողութիւնը, որով մօտեցած կը լինինք ժամանակակից ուրիշ գնումների արժէքին: Հէնց այս արձանագրութեան մէջ Ճարը գնում է մի ուրիշ գիւղ՝ վճարե-

(*) Շար. Սամուէլ Անեցու ժամանակագրութիւն, հրատ. Ա. Տէր Միքէլեանի. էջմ. եր. 147:

լով չորս հազար կարմիր դուգատ, գործադրելով վաճառականին յատուկ լեզու. «ի դառն ժամանակի, որ հայրենիքն (այսինքն կալուածը, հողը) աժան էր և ոսկին թանկ»։ Ստեփանոս Օրբէլեանը իւր կրտսեր եւ խորթ եղբայր Ջալալից գնում է Չուայ գիւղը «իւր տնէն սահմանօքն, հողով եւ ջրով եւ այգեստանեօք եւ բոլոր բնակչօք» 21,000 դրամով (*), որ հաւասար էր 2100 ոսկի դահեկանի. քիչ յետոյ կը տեսնենք, որ Ումեկի ազգականներից մէկը՝ Յովհաննու որդի Ստեփանոսը՝ գնում է «զՍոռակերտ եւ զիր գեղեան, զայգին որ ի Շղւեր», վճարելով 60,000 սպիտակ սուլտանի, այսինքն սելջուկեան արծաթ դահեկան, որ հաւասար էր մօտաւորապէս 6000 ոսկի դրամի։ Ո՛րքան եւ հետաքրքրական լինի ու կարեւոր ճշդել ժԳ. դարու երկրորդ կիսում գործադրուող դրամներն ու նրանց արժէքը գնումների և փոխանակութիւնների համեմատութեամբ, բնականաբար, այստեղ զբաղուել չենք կարող, կարօտ լինելով յատուկ ուսումնասիրութեան։ Մեր ցուցումները միայն մօտաւոր գաղափար պիտի տան Ճարի եւ նորահօր գնումների եւ հարստութեան մասին։ Պատմական տեսակէտով մի հետաքրքրական երևոյթ է այս, որ Հայաստանի արեւմտեան գաւառներից եկած վաճառական հարուստ ընտանիքներ կալուածներ են ձեռք բերում գրամական գնումներով եւ աւատական իշխանների դասում կարգւում, ինչպէս ժամանակակից միւս իշխանները։ Գետկայ վանքում 1273 թուին գրուած ձեռագրի յիշատակարանի Մխիթար գրիչը այս նոր ձեռք բերուած հողային ժառանգութիւնը անուանում է «տէրութիւն» Ճարի, մի արտայայտութիւն, որ գործածական էր միւս իշխանների համար. «Յամի եւթն հարիւրերորդի քսաներորդի երկրորդի թուականութեանս Հաոց յորում ժամանակի հովէր(?) զուղղափառութեամբ(!) ճշմարիտ աթոռակալ լուսաւորչին մերոյ տր. Յակոբ, և յԱղուանից տր. Ստեփանոս. եւ ի տիեզերակալութեան Ապաղանին(?) եւ յանիշխանութեան մերո աշխարհիս, յաթարակութեան Սողոմոնի եւ տէրութեան տեղոյս Ճարին։ Աստանաւ

կատարեցաւ տառ մատենիս ի սբ. եւ ի հռչակաւոր վանս Գետկա ընդ հովանե եւ(?) սբ. Ածածնիս. . . . տառ տոս սբ. եւ վըսամապայծառ վարդապետիս Յովասարիս, որ է ամենայնիւ տարինակ բարեաց վարիւք եւ բանիւ. . . » (*):

Ճարի արձանագրութիւնից պարզւում է և մի այլ խնդիր, Հասոն Ջալալի դուստր Մամախաթունը Ումեկի երկրորդ կիսն էր, որից եւ կրտսեր որդին Վախտանգ. իսկ Ճարն ու Քարիմատինը նորա առաջին կնոջից էին, որ ըստ արձանագրութեան թագուհի էր կոչւում։ Որդիների մէջ աւագը, հաւանօրէն, Քարիմատինն էր, որ ժառանգել էր հօր շինած եկեղեցին Տփխիսում, իսկ երկրորդը Ճարը, որ ստացել է Գետիկը և իւր անձնական գնումով վերան աւելացրել Հովը։ Վախտանգի ժառանգութեան մասին տեղեկութիւն չունինք։

Քարիմատինի, Ճարի և սորա զաւակների մասին յիշատակութիւն ունինք նաեւ Գետկայ ուրիշ երկու արձանագրութեան մէջ. երկու եղբայրներ, որոնցից մէկը վարդապետ է, բայց անունը եղծուած եւ միւսը կարապետ՝ «ի թվին հայոց Չիս պարոնութեան Սորիշ խաթունին եւ եղբարց իւրոց Արղութին եւ Թա. . . . ամուսին որդոց Քարիմատին եւ(?) որդոյ մեծին Ումէկին ու այլ որդոյ Սաթունին» շինում են զանգակատուն «յանուն սբ. հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի» եւ «պարիսպ շուրջ եկեղեցոյս» (**): Տարաբաղդարար արձանագրութեան եղծուած լինելու պատճառով մնում ենք մթութեան մէջ Արղութի միւս եղբայրների եւ Քարիմատինի անուն հետ կապուած մերձաւորների մասին։ Երկրորդ արձանագրութիւնը Պետրոս վարդապետինն է, որ մի խաչ է կանգնել «պարոնութեան Արղութին և Սորիշ Սաթունին» «ի թուին ՉՂԴ» (***)։ Արձանագրութիւններից պարզ է, որ Ճարը Արղութից և նորա եղբայրներից զատ, որ յիշուած էր նաեւ նորա մեծ արձանագրութեան մէջ, ունէր և մի դուստր Սո-

(*) Ձեռ. երուսաղէմի N. 1288, Յովասափ վարդապետին յիշում է եւ Գանձակեցին Գետիկի առաջնորդների շարքում. Ղուկ. հրատ. եր. 210:

(**) Ազգ. Հանդ. X. 1903, Յօդ. Յարութիւնեանի:

(***) Անդ:

(*) Օրբէլեան. Ղուկ. հրատ. 493:

րիշ (գուցէ Խորիշահի կրճատումը) անու-
նով, որ Արղութի հետ մասնակից էր հօր
թողած «տէրութեան» իշխանութեան:

Այս հանգամանքը արժանի է առան-
ձին ուշադրութեան եւ լուսաբանութեան,
որ իսկապէս սովորական չէր մեր աւան-
դական կենցաղի եւ հասկացողութեան հա-
մար. Գոշ Մխիթարի Գատառտանագրքի
երկրորդ մասի ԿԲ. եւ ԿԳ. գլուխները ո-
րոշ լոյս են սփռում այս երեւոյթի լուսա-
բանութեան նկատմամբ(*). աղջիկը հօր
ժառանգն էր, եթէ չունէր եղբայր. Աւագի
դուստրը Խոշաք ժառանգեց հօր իշխանու-
թիւնն ու կալուածները, թէեւ յապաւում-
ներով, որովհետեւ եղբայր չունէր, նորա
զաւակները Սահիպ դուանի ամուսնութիւ-
նից ժառանգում են եւ յիշում մօր հետ
կամ առանձին(**): Աղջիկը եղբայրներ
ունեցած դէպքում, կէսն է ստանում եղ-
բոր կամ եղբայրների համեմատութեամբ.
մարդու գնացած աղջիկն ստանում էր հայ-
րական տանը եղած քրոջ բաժնի կէս չա-
փով, բայց նա կարող էր գալ եւ իւր հօր
ժառանգութեան մէջ ապրիլ ստանալով իր-
ովին իրեն հասանելիք բաժինը: Գոշ Մխի-
թարի կարծիքով տանը եղած աղջիկը «հա-
ւասար եղբարցն ժառանգէ զհօրն: Հաս-
տատի ըստ այսմ որդւոց եւ դստերաց հա-
ւասար լինել ժառանգութեան հօր»: Բայց
«թէպէտ բաժանորդք ընդ եղբարս ժա-
ռանգութեանն քորք են, ոյլ ոչ ժառան-
գապահք», որ հրատարակիչը գրչի սխալ
է համարում եւ ճիշդ «աւանդապահք»,
յորժամ եղբարք իցեն»:

Խորիշ խաթունի յիշատակութիւնը որ-
պէս տեղական պարոնութեան կամ իշխա-
նութեան ներկայացուցիչ, կարելի է հաս-
կանալ, երբ ընդունենք, որ նա ամուս-
նացած էր, եւ բնակութիւն հաստատած
Գետիկում իւր որդոց հետ, եւ աւագը ի-
նելով ճարի զաւակների մէջ, յիշում է
Արղութի հետ, որ իսկապէս իշխանութեան
«աւանդապահն» էր:

(*) Բաստամեանի հրատարակութիւն, էջմ.:

(**) Օրբէլ. Ղուկ. հրատ. 412, 418: Շահիւ.
Բ. 163, 183. Այրարատ Ալիշանի. 273, 292: Գառ-
նին եւ Հաւուց թառը նոյնպէս ենթարկուած էին
նրանց իշխանութեան. Ձեռ. էջմ. N. 2838 գրուած
է 1207 թուին Հաւուց թառում «ի մերոյ նահանկի
տէրութեան Խոշաքի եւ Զաքարիայի որդոյ նորին»:
Տես եւ «Հովիտ» 1910. 122:

Ե.

Ումեկի հետ կարինից դադարել էին, ըստ
Վարդանի եւ ըստ Գանձակեցու, եւ նորա
ազգականները, ինչպէս տեսանք նախըն-
թաց պրակում. Գանձակեցու մէջ այս տե-
ղեկութիւնը շփոթ է բնագրի խանգարուած
լինելու պատճառով. «հանդերձ որդւովքն
Յովհաննա եւ Ստեփանոսիւ եւ եղբարք
իւրով» պէտք է ուղղել «հանդերձ որդ-
ւովքն Յովհաննու՝ Ստեփանոսիւ եւ եղ-
բարք իւրով», որ համապատասխան կը
լինի միանգամայն Վարդանին(*): Ապա
թէ ոչ Գանձակեցու խանգարուած խօս-
քերն այնպէս կարելի է հասկանալ, որ Ստե-
փանոս եւ Յովհաննէս Ումեկի որդիքն են,
որոնց հետ եկել են եւ իւր հինգ եղբայր-
ները, որ ոչ մի աղբիւրից չի հաստատ-
ւում: Երզնկացուց տեսանք, որ Քարիմա-
տինն է կաթուղիկէ եկեղեցու տէրը հօր
մահուանից յետոյ, միշդեւ Յովհաննէս եւ
Ստեփանոս անունով աւելի աւագ եղբայր-
ներ ունենալու դէպքում, անկարելի կը
լինէր նորա ժառանգութիւնը տոհմի կեդ-
րոնական, գուցէ եւ գերեզմանատան, եկե-
ղեցուն: Եւ յիրաւի մենք ունինք հաստա-
տուն ապացոյցներ Յովհաննէսի, նորա Ստե-
փանոս որդու եւ միւս եղբայրների մասին:

Կալուարի հիւսիսային ստորոտում մի
շարք պատմական վայրեր կան շատ կա-
րեւոր հնագիտական մնացորդներով եւ ար-
ձանագրութիւններով, որ դեռ ևս բանա-
սիրութեան անյայտ են մնացած, զոցանից
մէկն է Խոռակերտը, որ գտնւում է ներկայ
Զանախչի հայ գիւղի մօտ, որի մասին Զա-
լալեան միայն հակիրճ յիշատակութիւն
ունի(**): Այդ տեղ անտառի մէջ դեռ ևս
կանգուն է Խոռակերտի գմբեթաւոր տա-
ճարը իւր ուրոյն կառուցուածքով, գաւ-
թի եւ շրջակայքի խաչքարերի հետ՝ բա-
ւականաչափ ամբողջական եւ կիսեղծ ար-
ձանագրութիւններով, տաճարի արեւմտեան
դրան գլխին, կիսաւեր գաւթի կողմից հե-

(*) Վերջին պահուն ձեռագիրների համեմատու-
թիւնն էլ հաստատեց մեր դիտողութիւնը. Ղուկ.
հրատ. մէջ տպագրական սխալ պէտք է համարել
մէջբերուած ձեւով, ինչպէս եւ Յովհաննիսեանի հը-
րատարակութեամբ՝ Մոսկուայում:

(**) Ա. 88:

տեւեալ մեծ արձանագրութիւնը կայ (*).

1. Ի քվիւ 2 (2Ա.) ի հայրապետութեան
սն. Կոստանտնուպոլսի (?!), արհիեպիսկոպոսութեան
Հասկազասպայ աշխարհակալութեան եւ զաւրապե-
տութեան Սարունիին ի քաղաքութեան Դաւթի եւ

2. Ստեփանոս ուղի Յոհաննա զննցի զԽո-
նակիւս եւ զիր զեղեան զ

3. այգիին ուրի Շղեր վանի

4. ցա յաւիտեան ի կո սպիտակ սուրճա

5. նի եւ շինեցի զսա ի հիմանե սկսելոյ

6. ուսով անմահին այ շինել ինձ եւ եղբա

7. րց իւնոց եւ ուղոց արձան կենդանի տեղի

8. զերեզմանի մինչեւ զայ քա իւ եւ առնե
ողորմութի

9. ինձ եւ իւնոցն ի փառ սիւր արդ ուր
հախսել ջանան զի

10. մ տրսն (!) յեղեցոյս եւ կամ զսե-
ղիս համել յագգե ի

11. մեկ խախտեցին եւ անկցին հա-
ւասոց եւ քսոնեութեան (**):

Ահա Վարդանի խօսքերի ճշգրտութեան
անհերքելի ապացոյցը. Ումեկի հետ եկողը
Յովհաննէսի որդի Ստեփանոսն է եղբայր-
ներով, որ նորա ազգականներն էին: Ինչ-
պէս Ումեկն էր վաճառու կալուածներ գնել
իւր եւ որդւոց համար, նոյն օրինակին է
հետեւում եւ ազգականը՝ պարոն Յովհան-
նէսի որդին Ստեփանոսը, գնելով Խոռա-
կերտը իւր գիւղերով, շինելով վաճառու հիմ-
քից, որպէս «արձան կենդանի» եւ «տեղի
գերեզմանի» իւր եւ եղբայրների համար:
Միջնադարեան հայ իշխանական տոհմերի
համար անհրաժեշտութիւն էր իրենց հո-
գեւոր կեդրոնն ու տոհմական գերեզմա-
նատունն ունենալ իրրեւ վաճառ. աւելի եր-
կրորդական տոհմերն ու ազատները խրմ-
բւում էին իրենց կամ մի այլ իշխանի
վաճառի շուրջը. այսպէս ԺԳ. դարում Սա-
նահինը ոչ միայն Զաքարեանց, այլ Շո-
թոսկանց եւ Դսեղի Մամիկոնեանց մի ճիւ-
ղի գերեզմանատունն էր, որ հաստատուում
է այնտեղ եղած արձանագրութիւններով:

Ուշագրութեան արժանի է, որ Ստե-
փանոսը Խոռակերտի եւ գիւղերի համար

վճարում է «կո. սպիտակ սուլտանի», որ
ցոյց է տալիս, թէ նա էլ Ումեկի նման
իւր հարստութիւնը բերել էր Փ.-Ասիա-
կան սելջուկեան պետութեան սահմաննե-
րից, որոնց մէջն էին Մանազկերան ու
Կարինը: Հաւանօրէն Ստեփանոսն էլ վա-
ճառական էր, ինչպէս Ումեկը. Վարդանի,
մանաւանդ Գանձակեցու խօսքերը վերա-
բերում են վաճառականական մի ամբողջ
խմբի, որոնց թուին են պատկանում Ու-
մեկից եւ աղղականներից զատ՝ նաեւ Սա-
րաւանի որդիքը՝ «Շնորհաւերն եւ Մկրտիչն
ընչաւէտք եւ մեծատունք»:

Արձանագրութիւնից պարզւում է նաեւ,
որ Խոռակերտը իւր շրջակայքով, ասել է
Սաղախլուի գետի վերին հոսանքը, մըտ-
նում էր Մահկանաբերդի իշխանութեան
եւ Հաղբատի առաջնորդութեան սահման-
ների մէջ, մինչդեռ Խոթոռնին իւր շրջա-
պատով, այսինքն նոյն գետի միջին հո-
սանքը Զաքարեանների սեպհականութիւն
էր ըստ Վարդանի եւ ըստ բանասիրութեան
դեռ եւս անյայտ արձանագրութիւնների,
որ մի այլ առթիւ պիտի հրատարակենք:

2.

Ամենայն հաւանականութեամբ Ումեկի
եւ իւրայինների տեղափոխութեան հետ էր
կապուած եւ մի ուրիշ տոհմի տեղափո-
խութիւնը. նոքա պէտք է որ ծագմամբ
Հայաստանի արեւմտեան սահմաններից կամ
Սեբաստիայից լինէին, գուցէ եւ Մանազ-
կերտից՝ Սեբաստիայի հետ վաճառակա-
նութեամբ կապուած: Էջմիածնի N. 364/987
ընտիր գրչութեամբ Հայրապետ քահանայի
ձեռքով նկարազարդուած մագաղաթի ձե-
ռագիրը գրուած է 1211 թուին Սեբաս-
տիայում «ընդ հովանեաւ սր. ածածինն եւ
սր. Սարգսի զաւրաւարին, որ յանունն նո-
ցա կանգնեցաւ սր. եկեղեցիս ի քաղաքիս
Սեբաստիայ»: Նիւթի դրամը հոգացել են
«Յեւանէս պարոն, Ուքան եւ Պապքան(*):
ԺԳ. դարու երրորդ քառորդին երեան են
գալիս արեւելեան Հայաստանում Ուքան
եւ Պապքան անունով երկու եղբայրներ ի-
րենց հարսի հետ մի քանի արձանագրու-

(*) Հրատարակւում է առաջին անգամ: Ընդ-
գծուած տառերը կցուած են իրար:

(**) Առաջին երկու երկար տողերը գրուած են
դրան զլխին, իսկ մնացածը կամարակալ քարի վե-
րայ: Ընդգծուածները կցուած են:

(*) Մեր Գրչութեան արուեստը, Գ. Քարտէզ
հայ հնագրութեան. § 72:

թիւնների մէջ, որոնցից մէկը խոռակերտում, բայց որ զլխաւորն է, նոյնպէս վանքի և կալուածի գնումներով, ինչպէս Ումեկեաններն ու նրանց ազգականները:

Սրանց և յիշատակարանի եղբայրների նոյնացման մի դժուարութիւն ունինք միայն, ժամանակի երկար տևողութիւնը երկու յիշատակութիւնների մէջ. բայց եթէ ընդունենք, որ Սեբաստիայում յիշուած եղբայրները փոքրահասակ էին, այդ դժուարութիւնն էլ կը վերանայ: Արձանագրութիւնների մէջ Ուքան և Պապքան եղբայրների վերջին յիշատակութիւններն ունինք 1271 և 1274 թուականներին, որ անկարելի չէ 1211 թուին ապրող պատանիների համար. ընդհակառակ դարմանալի զուգադիպութիւն կը լինէր երկու զոյգ տարբեր եղբայրների այս նոյնանուն կրկնութիւնը, այն էլ միմեանցից շատ հեռու շրջաններում: Նոյնացման դէպքում եղբայրների հետ արձանագրութիւնների մէջ յիշուած Դապտայ խաթունը պէտք է հանգուցեալ կրտսեր եղբոր՝ Մերչոյի կինը լինի, իսկ յիշատակարանի Յեւանէս պարոնը նրանց աւագ եղբայրը կամ ազգականը:

Արձանագրութիւններից ամենահինը եղբայրների անուն յիշատակութեամբ Արցախի Մեծարանց Ս. Յակոբի վանքումն է. Ուքան և Պապքան եղբայրները՝ «որդի(ք) Սարգսի հոգո որդոյն» միաբանում են Ջալալ Դաւլայի իշխանութեամբ ՉԱ = 1252 թուականին, նուէրներ տալիս վանքին և տաս ժամ ստանում իրենց «Մերչո» եղբոր յիշատակին(*):

Երկրորդ հնագոյն արձանագրութիւնը նոյն եղբայրների անունով խոռակերտումն է՝ 1268 թուականից(**):

ԶԺԷ

1. կաւաւ աւ
2. մահին այ մեք Ուք
3. անս եւ Պապքանս որդ
4. իք Սարգսի թոռն Հո
5. գոյն միաքանեցաք
6. սք ուխտիս հրամանաւ
7. աշխարհադոյս վրասպետին Վդանա

(*) X. B. 1917, 154. Orbeli. Armianskia Nadpis.

(**) Հրատարակում է առաջին անգամ. ընդգծում տառերը կցում:

8. եւ sru եւ միաքանս ե
9. տուն մեք գՀո
10. գոյն գաղքսեա
11. և աւրն յամեն եկ
12. եղեցիքս ժամ ե? Ամեն s
13. իկնա եւ յեք մեր մահ
14. ուանն մեք առնեն անխախտան(*):

Երկու եղբայրների ամենից կարեւոր արձանագրութիւնը հետեւեալն է, որ գրտնում է Կարմիր վանքում Անիի մօտ, Ախուրեանի ափին.

1-2. ի քուխ/ԶԻ.

3. Շնորհիւն այ եւ Ուքան Քարիմադինս եւ եղբայր

4. իս Պապքան Վախրադինս որդիք Սարգսի թոռն Հոգ

5. ոյն (եւ) հարսն իս Դապսայ խաթունս գնեցաք զվանս

6. իւր ամենայն սահմանաք հողով եւ ջրով եւ շինեցաք ի կորոյն եւ զարդարեցաք

7. սպասիս եւ գրեւաք եւ ընծայեցաք եկեղեցոյս զմեր զանազին հայրենիքն զիս

8. նապ(ար)ին դանկն որ միջաւրեն եր Շահապին զվերեւն եւ զներքեւն եւ զհարաւ կող

9. մանն կուղպականովն եւ այգի մի ի Բագրան զԱյգեհարն եւ զԱֆսին կապն եւ

10. զԽաչիւրոյ դ. դանկն եւ զջաղացս: Հայր Սարգիս եւ այլ եղբարքս փոխարեն հասու

11. ցին յամենայն շաքաքն աւր գ. խորան մեր հաւրն Սարգսի եւ Սքե եւ Մերչե պատա

12. րագն եւ գ. աւր Սարգիս արքան: որք հակառակ (կ)ան ընծաիցս դասին ի քի

13. usnuk ամեն(**). Միսիքար գրիչ

Նոյն եղբայրներն ունին մի չորրորդ ազուազ արձանագրութիւն Հոռոմոսի վանքում, որից երևում է, թէ կալուածական գնումներ են կատարել և ուրիշ նուէրների հետ ընծայել վանքին 1274 թուին(***):

(*) Վարդան վարդապետի անուն յիշատակութեամբ կրկին ապացոյցն ունինք Հաղբատի եւ Խոռակերտի հոգեւոր կապերի:

(**) X. B. 1917. եր. 152: Փակագծի մէջ առնուած մասերը ուսուցչապետ Օրբէլին է լրացնում: Տես եւ Ալիշան, Շիրակ, 170. սխալաշատ: «Արքան» խօսքի նշանակութեան մասին տ. N. Marr. Arkaun mongolskoe naswanie xristian. SP. 1905:

(***) Ալիշան, Շիրակ. 173:

Մի վերջին արձանագրութիւն էլ նրանք Անիում ունին, բայց առանց թուականի և պակասաւոր, երեւան եկած աղագեմիկ Մառի պեղումներով. արձանագրութիւնից պարզուի է, որ Ուքան և Պապքան եղբայրները շինել են «զանկակատուն» եւ նուէրներ տուել, ստանալով պատարագներ «մեր հաւրն Սարգսի և Սթէ Սարգսի արքառ(ւնիւն եւ Մերչէ և. [պակաս պատարագի թիւը] աւր) մեզ Ուքանիս և Պապքանիս և Դապտայ խաթունիս...» (*):

Վերջին արձանագրութիւնները կրօնական կարող են լինել եզրակացնելու, որ Ուքան և Պապքան եղբայրները իբրեւ վաճառականներ հաստատուի են Անիում և Ումեկեանների ու նրանց ազգականների նման տոհմական եկեղեցի ձեռք բերում:

* * *

Համեմատութեան նիւթ կարող է կազմել դրամի մօտաւոր արժէքը հասկանալու համար նաեւ հետեւեալ արձանագրութիւնը, որի բնագիրը վերականգնել և բացատրել է պրոֆ. Մառը (**).

(*) X. B. 1917. 151:

(**) N. Marr. Nowie materialy po armianskoi Epigraphike. 1893. ռուսերէն (նովիէ մատերիալի պո արմեանսկոյ էպիգրափիկէ):

1. ԹՎ. ԶԺ ի ինգերակալութի Հուշաւու դանի եւ Սահմադիկն որդի [Աւեստաց գ] նեցի զքազաւորանիս[s] սեղի[u] զՄրեն ի յԱրսաշրե որդո Շահնշահի հաշալ ընչ[ից իմ]ոց ի վայելուան ինձ եւ որդ

2. ոց իմոց. ած շնորհաւոր ար[ա]յցի յաւիտեան ժամանակաց: | ի թվ | ԶԻԵ յաշխարհակալութե Ապաղա դանիկն եւ Սաւսիկն, որ պարունին ամարանոց ու դարպաս չկայր, զաս այգիս եւ զրս

3. իսս, որ կոչի Արխայութի, գնեցի զաւեկն մեկ յիւր տիրոջէն. եւ յիւ մսաց դուս՝ առանց(?) վարդպետի ձեւեցի ու հիւմն ձգեցի դարապասիս ու դրախ[s]իս. ի [Ժ] տարին կասարեցի. ած

4. շնահաւոր արաւցի պարուն Սահմանիկն որդից ի յորդիֆ. ու խարձ, որ եղաւ դարապասիս: իս: ու: դուկաս դահեկան:

Ընթերցողը տեսնում է, որ արձանագրութիւնը երկու մասից է բաղկացած. առաջինը Մրենի գնման է վերաբերում, իսկ երկրորդը Սահմադին «պարուն»ի համար «գարապաս» այգի գնելուն. քառասուն հազար դուկատ դահեկանը ծախսուել է ապարանքի շինութեան, այգի ու դրախ գնելու և կարգաւորելու համար: Հրատարակելը «դուգատ դահեկանը» համազօր է կարծում կարմիր կամ ոսկի դահեկանին:



ԻՓՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ

ԵՒ ՇՈԹՈՌԿԱՆՑ ՏՈՂՄԸ

Ա.

Անիի շրջանից, տարաբաղդաբար, չափազանց ձեռագիրներ են հասել մեր ձեռքը, և խօսքը չի վերաբերում Բագրատունեաց և աւելի հին շրջանի Անիին միայն, այլ և Ջաքարեանց ժամանակին: Վաճառականութեամբ, ճարտարապետական բարձր արուեստով, կեանքի ճոխութեամբ և փարթամութեամբ ուռճացած այդ քաղաքը, ինչպէս նկարագրում է մեզ Լաստիվերացին, կամ Ջաքարեան շրջանի նիւթական մշակոյթի մնացորդներն են ցոյց տալիս, ակադեմիկ Մառի պեղումներով երեւան հանուած, չէր կարող ձեռագրական արուեստի մէջ ևս գլուխգործոցներ չստեղծել: Բայց բուն Անիից, գրեթէ ոչինչ ունենք, եթէ չհաշուենք Պետրոս Գետադարձի ժամանակի մեզ հասած մի երկու ձեռագիրները: Անին չարունակ կողոպտաների ենթարկուելով, սելջուկեան, մոնղոլական և յետմոնղոլական շրջաններում, կողոպտուել է կամ ոչնչացման ենթարկուել, յաակապէս, թանգարժէք և թեթեւ փոխադրելի մնացորդներով, որոնց թիւում և ձեռագիրներն են:

Անիին կից վանքերից Հոռոմոսի վանքն է, որ ամենից աւելի գեր է կատարելման, բանկարչական և գրչութեան արուեստների կողմից. տաճարների բազմութիւնը և արձանագրութիւնների յաճախութիւնը ԺԱ. դարից սկսած, բայց մանաւանդ ԺԳ. և Նոյն իսկ ԺԴ. դարու առաջին կիսում, մեր ձեռքը հասած մի քանի մնացորդներն ու ակադեմիկութիւնները հաստատում են այդ իրողութիւնը⁽¹⁾: Մեզ յայտնի հնագոյն ձե-

(1) Բացի այստեղ յիշուելիքներից նաեւ Հաղբաթի նշանաւոր աւետարանը, Գետաշէնից բերուած մեր ձեռքով որ կազմուել է «հրամանաւ հաւր Մխիթարայ» «ի վանքս Հոռոմոսի» կազմողն է Արրահամ և Նկարիչը Մարգարէ: Ձեռ. էջմ. N 3613, Ստամբուլ Անեցու ժամանակագրութիւնը առանց յաւելումների, արեւելեան, հին բոլորգրով, որ գրել է

ռազիրն այդ վանքում, գրուած է 1181 թուականին, Յովհաննէս գրչի ձեռքով, «հրամանաւ Վարդանայ երէց եղբար իմոյ և ուսուցչի, և սատարութեամբ կրտսեր եղբար աշխարհաւարի՝ Գրիգորոյ», «ի թուիս Հայոց. ՈՒ. ի տիեզերահռչակ վանս Հոռոմոսի» ընդ հովանեաւ սուրբ Յովաննիսի, ի հայրապետութեան տեառն Բարսղի, և յառաջնորդութեան ուխտիս Սաւաորոյ, և ի հոգեւոր տեսչութեան Կարապետի ծերացելոյ իմաստիւք ի Քրիստոս»: Այս յիշատակարանից մի հատուած նմանահամութեամբ տալիս է Ուլիշան⁽¹⁾, որից կարելի է տեսնել, թէ ինչպիսի բարձրութեան և գեղեցկութեան էր հասել այդ տեղ գրչութեան արուեստը: Ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը տալիս է Բարսեղ Սարգսեանը⁽²⁾, որից երևում է, թէ արուեստը չուտ արեւելեան է, և հաւանորէն, աւանդութիւն դարձած վանքի գրիչների և նկարիչների համար, որովհետեւ նոյն վանքում յետագայում պատրաստուած ձեռագիրներն էլ նման բնոյթ ունին, որոնց մասին ոչիտի խօսենք այստեղ:

Բ.

Հոռոմոսի վանքի համեմատաբար ամենից աւելի մեզ ծանօթ գրիչն ու նկարիչը Իգնատիոսն է, որ և ներկայ ուսումնասիրութեան առարկան է: Հնագոյն ձե-

Մխիթար գրիչ Անեցի, 26ր. «Զիսնեալս յարդիւնական գործոց, գչուառ գրիչս. զՄի իթարիչ Անեցի, սուտանուն արեղայ և աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի. սնեալ առ ոսն սուրբ Յովանիսի, յիշեսցիր ի Քրիստոս աղաչեմ»: Երեւանի թանգ. N 99 | 94 աւետարանի ոսկերչական կազմը, սե'ս մեր «Մի 1,5 հայ արուեստի և մշակութի պատմութիւնից» Տաթեւ վեցերորդ գիրք. նաեւ առանձին զըրրոյկով, Հալէպ, 1930. սրակ Ը:

(1) Շիրակ. 27:

(2) Յուլյակ Վենետկ. Մխիթ. եր. 381:

ռազիրը, որ նա գրել է և նկարագրողել Հաւուց Թառի Ամենափրկիչ վանքի Թագէոս և Հայրապետ կրօնաւորների համար 1214 թոփն գրած, մեծագիր աւետարանն է, որ այժմ գտնւում է Վենետիկի Մխիթարեանց մատենադարանում և որի Յովհաննու սկզբնազարդը գտնւում էր նմանահանութեամբ տալիս է Ալիշանը⁽¹⁾, իսկ ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը Բարսեղ Սարգսեանը⁽²⁾։ Գլխաւոր յիշատակարանը գտնւում է վերջում և գրուած է ստացողների բերանից, որից եւ քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները. «տուաք գրել եւ նկարել Իգնատիոս գրչի ոսկւով եւ երանգ երանգ խառնուածով զարդարեալ, ի վանքս որ կոչի Հաւուց Թառ, ընդ հովանեաւ սուրբ կաթողիկեիս եւ մեծահոգի սուրբ նշանիս՝ Ամենափրկչի եւ ամենարարոյ Պաւղոս վարդապետի։ Եւ այլ սուրբ եւ ճգնազգեսց եւ համակամ եղբարց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուածամէն»։ Զեռագիրը գրուած է «Ի Թուիս Հայոց Ոկթ. ձեռամբ Իգնատիոս մեղաւորի»։ Հ. Սարգսեանը յայտնում է, որ 92 ա. նկարուած խաչի պատուանդանի վերայ դեղնադոյն և մանր երկաթազրով գրուած է. «Բարեխաւս Իգնատիոսի», որից իրաւամբ եզրակացնում է, որ գրիչն ու նկարիչը նոյն Իգնատիոսն է։ Մեծ յիշատակարանի վերջում մի օտար ձեռք աւելացրել է. «Հոռոմոսի վանացն ոսկետուփ աւետարանն եւ այս մին գրչի է գրած», որից եւ պիտի եզրակացնել, որ նա Ոկթ. թոփականից առաջ կամ յետոյ գրել է մի աւետարան Հոռոմոսի վանքի համար, որ գրուել է ոսկետուփի մէջ և մեր ձեռքը չէ հասել։

Վենետիկի ձեռագիրը, տարաբաղդաբար, շատ մնասուած վիճակի մէջ է, ոչ միայն առաջին թերթերը՝ 2-9՝ խոնաւութիւնից և սեւ հեղուկից մնասուած են, այլ և հանուած են նկարներն ու խորանները, լուսանցքի զարդերից շատերը պատռած, առաջին տետրից էլ պակաս են չորս թերթ։ Բայց և այնպէս մնացած են երկու կիսախորան և բազմաթիւ լուսանցքի զարդեր, որոնց մասին գովասանքով է գրում Հ. Սար-

գսեանը. «Զարգագիրք խիստ շատ են եւ բազմազունեան, ոսկեզարդ։ Բոյժ գեղեցիկ են Մարկոսի Աւետ. մեծ սկրնատառը՝ Ս. որուն մէջ նաղելի խաչ մը նկարեալ է գեղեցկազարդ և վերը ոսկեզոյն մահիկը, եղջիւրները դէպի վեր դարձած։ Յովհ. Աւետ. գեղեցկազարուագ մեծ սկրնատառն է»։ Խորանները չկան, այլ միայն երկու կիսախորաններ, այսինքն Մարկոսի եւ Յովհաննու. «բազմազունեան եւ ոսկեզարդ, երկուքն ևս բազմազարուագ են եւ յոյժ գեղեցիկ»։ Իւր նկարագրութիւնը Հ. Սարգսեանը վերջացնում է. «մէկ խօսքով կենտարանիս մանրանկարքն առհասարակ նաեւ իրենց մութ գոյներու նրբերանգ խառնուելովը հիանալի լուսաստուերներ կարտացոլացնեն, յորս ակներեւ կը տեսնուի ծաղկողին թէ ճարտար արուեստը եւ թէ նուրբ ճաշակը միանգամայն»։

Պ.

Իգնատիոսի դործն է նաեւ էջմիածնի N 230/1519 (կար. 223) Բագնայրի կոչուած աւետարանը, այժմ հասարակ կաշէպատ կազմով⁽¹⁾ ընտիր մագաղաթ, մեծագիր՝ 41, 6 x 29, 2 սմ., խոշոր երկաթազիր և նկարազարդ, իշխանաց իշխան պատրոն Խաւոսի եւ իւր Խաթուն կնոջ ըստացմամբ. «Զպատրոն Խաւոսս որդի Ամիր-Սարգսի եւ զամուսին իւր զԽաթունն յիշեցնիք յազալթս, որ ստացան պատրոնս Բագնայրի Աստուածածնիս վասն յիշատակի իւրեանց սիրելի եւ անդրանիկ Խաւնային, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս եւ սուգ մեծ եթող ծնաւդաց իւրոց, որ կարդայք յիշեցնիք ի սուրբ յազալթս ձեր, աղաչեմք»։ 99բ։ Պատրոն Խաւոսը Զաքարէ և Իւանէ սպասաւարտների մօրեղբոր որդին էր. «Իշխանն պատրոն Խաւոսս որդի Ամիր-Սարգսին, որ էր

(1) Այրարատ. 356։

(2) Յուցակ Վենետիկ. Մխիթ. եր. 592-593։

(1) Սկզբնական կազմի մասին ունինք յետագայում տեղեկութիւն «Դրիգոր Խուչէս»ի որդի Պարոնի յիշատակարանի մէջ 28 էջ = 1308 թուականից. «տեսի զսուրբ աւետարանս որ էր գրեալ եւ զարդարեալ ոսկւով եւ արծաթով մեծ պատրոնն Խաւոս եւ ընծաեալ էր յիշատակ ի սուրբ Աստուածածնին Բգնէրի. անցեալ էր բազում ժամանակ եւ արծաթն եւ ոսկին խախտեալ էր եւ անգեալ», ուստի եւ ինքը նորոգել է տալիս։

եղբայր մաւր կետառոսաց Հայոց և Վրաց և ամենայն Ափսաղաց. բարեպաշտին և Ավ. զաւրացելոցն մեծին Զաքարիայի և Իւանէի»։ 297ա.։ Նորան էր յանձնուած Շահնշահ մեծի ևւ ապա սորա որդի Զաքարիայի կրթութիւնը, լինելով Զաքարիայի տան «մասխուր թախուցէս, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող ևւ հրամանատար ամենայն իշխեցողաց ևւ գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»։

Աւետարանը նուիրուած էր ոչ միայն Խաւոասի որդի Սասնայի, այլ և սորա մօր՝ Խուլթու խաթունի յիշատակին, որ «(յազ) գէ գո(լով) պարսիկ», քրիստոնէութիւն էր ընդունած ևւ որդու մահուանից երկու տարի յետոյ ինքն էլ վախճանուել էր ևւ թաղուել «ի տապանի անդրանկին իւրոյ», որ Բագնայրի վանքն էր⁽¹⁾։ Ապա Խաւոասը իւր երկրորդ կնոջ Զմրուխտ խաթունի հետ, «որ ևւ սա ազգաւ տաճիկ գոլով յազնուական ևւ փառաւորագոյն յազգէ ի մեծ նախարարացն Պարսից», նոյնպէս քրիստոնէութիւն ընդունած, գրել էւ տալիս «զսուրբ աւետարանս ի յիշատակ անդրանկի իմոյ Սասնային ևւ մաւր նորին Խուլթու խաթունին ևւ ինձ բաղմամեղիս ևւ ամուսնոյ իմոյ Զմրուխտ խաթունին ևւ սիրելի զստ-

րեկի իմոյ Թայիկ թագուհւոյ, ամուսնոյ անդրանկի իմոյ որ է զարմ ևւ շառաւեղ թագաւորացն Հայոց ևւ վասն յերկար կենդանութեան սիրելի որդւոյ իմոյ Վասակայ», ևւ նուիրում է Բագնայրի վանքին, «ի տէրութեան տեղւոյն տեառն Գրիգորոյ, որ մագիստրոսն ասի, վերադիտողի աթոռոյս Անուոյ ևւ յառաջնորդութեան հաւր Սիմեոնի»⁽¹⁾։

Բագնայրի արձանագրութիւններէց մէկը գրուած է հէնց Սասնայի մօր Խուլթու խաթունի կողմից ՈՀԸ կամ ՈՀԲ թուականին, հաւանօրէն առաջինը, որից յետոյ ՈՀԱ թուին գրուել է այս շքեղ ևւ փառաւոր աւետարանը որդու ևւ մօր յիշատակին (գծուար թէ ՈՀԲ թուականից՝ այդքան երկար՝ սպասէր Խաւոաս իւր հանգուցեալներէ յիշատակը անմահացնելու համար)։ Արձանագրութիւնը փոքր ինչ փչացած է, բայց երևում է, որ նա կալուածներ է նուիրել Բագնայրի սուրբ ուխտին՝ «յազագս յիշատակաց մերոց ևւ անդրանկին մերո Սասնային, որ կիսաւրեա փոխեց(աւ) ևւ սուգ մեծ եթող ծնողաց իւրոց»։ հայր Սիմէոն իւր միաբաններէ հետ յատկացնում է քառասուն օր պատարագել, քսան Խաթունին, տաս Խաւոասին ևւ տաս Սասնային⁽²⁾։

Արձանագրութիւններէ մէջ ունինք տեղեկութիւն ևւ հանգուցեալ Սասնայի կնոջ Թայիկի մասին. նա Ապիրատի որդու Շարափշահի աղջիկն էր. ծնողներն առանձին առանձին ևւ ինքը նուիրաբերութիւններ ունին Բագնայրի վանքին հայր Սիմէոնի, իսկ Թայիկն ինքը հայր Սիմէոնի ևւ ապա նորա յաջորդ Աբրահամի օրով⁽³⁾. մի տեղ նա անուանում է իրեն «Թաիկ թագուհի զուստր Շարափշահի», միւսում

(1) Նոյն վանքի արձանագրութիւնների մէջ խօսք կայ ևւ ուրիշ ձեռագիրների նուիրաբերութեան մասին. 1262 թուին Գարեգոյն երէց որդի Մանգիկ երիցու ևւ ամուսինը Մարիամ կալուածական պարգեւների հետ տալիս են ևւ «մի տաւնական մագաղաթ, մի աւետարան ոսկետուփ» (Ալիշան, Շիրակ 119)։ Բայց աւելի կարեւոր է հետեւեալ տեղեկութիւնը, որ Յոհան արքայան գրում է 297 (= 1305) թուին գրած յիշատակարանի մէջ. «Աստանաւր յանգելեալ կատարեցաւ տառս աստուածաշունչ բարձրաբարոզ սուրբ մարգարէիս Եսայեա, ի ստոյգ ևւ ընտիր աւրինակէ որ կոչի Բագնայրեցի, զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (2եռ. էջմ. 980 նց)։ Ո՞վ է այս Յովսէփ վարդապետը, հաստատ ասել չենք կարող, բայց կարծում ենք Վանականի աշակերտներից մէկը՝ Վարդանի, Կիրակոսի ևւ Առաքելի աշակերտակիցը ըստ Մաղարիայի (Ս. Պետերբուրգ, 1870. եր. 12) կամ ըստ Օրբէլեանի ժամանակագրութեան (2եռ. երեւանի թանգ.) Աղջոց վանքում 1279 թ. վախճանած նոյնանուն վարդապետը. «2ԻԸ կատարի մեծ վարդապետն Յովսէփ ի վանսն Ախոց»։ Տես ևւ Գանձակեցի Ղուկ. հրատ. եր 296, 313, 315։

(1) Այս յիշատակարանի մի մասը բուն ձեռագրից պոկուած էր ևւ պահպանակ դարձած N 153 / 177 Աստուածաշունչի, իսկ մի մասն էլ, ուր թուականն է, N 1259 / 1134 ձեռագրի. առաջինը գտել ևւ կցել է ձեռագրին հանգուցեալ Սահակ վարդապետ Ամասունին, իսկ երկրորդը մենք։


(2) Հ. Ներսէս Սարգսեան, Տեղագր. ի Փոքր ևւ ի Մեծ Հայս. Վենետիկ. 1864, 179։ Ալիշան. Շիրակ. 116։

(3) Սարգսեան, Տեղագր. 185. 186. 187. Ալիշան. Շիրակ. 118. 119։

առանց «թագուհի» կոչման: Աւելի ուշ ՉԺԸ (=1269) թուին «Թաիկ թագուհի դուստր Շարապչահին» տալիս է Հոռոմոսի վանքին «զԱբէլի ակն որ ի Դիլնա դռանն (Անիում) զոր իմ որդին Հազրպէկն ի Գարեգոյնէն գրաւկնեց : է : Ճ : սպիտակ : Ը : Ճ : սպ : ի վերա խարճ արար որ եղաւ Ռ : Շ : սպ : և ստանում է երկու

ցած էր կիւրիկեանների թագաւորող տան ազնիւներից մէկի հետ. հօր կողմից նա Պահլաւունի էր⁽¹⁾:

Սասնայի և Թայիկի որդին էր Խաւազ Բ. որ նոյնպէս նուիրատուութիւններ ունի ՉԺԱ. և ՉԺԵ. թուականներին նոյն Բագնայրի վանքում. առաջինը իւր անդրանկի անունով, որ դարձեալ Սասնա



Պատկեր 1

պատարագ, մէկն իրեն, միւսը Հազրպէկին⁽¹⁾: Ինչո՞ւ էր նա իրեն կամ Խաւազը նորան «թագուհի» անուանում, պարզ չէ. հաւանորէն հայրը կամ պապը ամուսնա-

էր կոչւում և «կէս տարեկան ի Բրիստոս փոխեցաւ»⁽²⁾:

(1) Ապիրատ Պահլաւունու որդիքն էին Տէր Սարգիս և Թաիկի հայրը Շարափշահ. (Սարգսեան. Տեղագր. 179. 181. 185. 186. Ալիշան. Շիրակ. 117. 120).

(2) Սարգսեան, Տեղ. 188. 189. Ալիշան. Շիրակ. 116.


(1) Ալիշան. Շիրակ. 28.

Պ.

Աւետարանը գրուած է «ձեռամբ Իգնատիոսի ապաշնորհ եւ մեղապարտ գրչի ի ՈԶԱ թուականի ի մեծահոգակ ուխտս Հռովմոսի կոչեցեալ վանք ընդ հովան»

արդեօք իրական կապանքից էր ազատուած, թէ կապանքի ենթարկուելու վտանգից. ինչո՞ւ համար էր կապանքի ենթարկուած, և ի՞նչպէս ազատուեցաւ, չգիտենք:

Իգնատիոսի գրչութեան նմանահանուած թիւնները բնագրից՝ մեծ երկաթագրով եւ



Պատկեր 2

եռւ սրբոյ կարապետին ի մէջ սուրբ եղբարց»: Ղուկասի վերջում գրիչը մի փոքրիկ նկատողութիւն ևս ունի իւր մասին, որի մանրամասնութիւններն անյայտ են. «Աւրհնեալ է Ած. յամենայն սրբոց: ամէն: որ զերծայ ի դառն կապանոց»:

յիշատակարանից՝ միջին երկաթագրով, տուել ենք մեր Քարսեզ Հայ Հնագրութեան աշխատութեան մէջ⁽¹⁾, որ աւելորդ

(1) Գրչութեան Արուեստը Հին Հայոց մէջ. մասն Գ. Քարսեզ Հայ Հնագրութեան. Վաղարշապատ, 1913. §. 77 եւ 78:

չենք համարում այստեղ ևս դնել, զիւրութիւն ընծայելով գաղափար կազմելու այն ընթերցողներին, որոնք առիթ չեն ունեցել տեսնել մեր այդ աշխատութիւնը: Բնագրի տառերը հաստ են, կարծես, նրկարուած, խոշոր. իւրաքանչիւրի միջին մեծութիւնը 0,8 սմ. ուղղահայեաց (սլաշ. 1), բայց ոչ ուղղանկիւն, ինչպէս յիշատակարանի միջին երկաթագիրն է (սլաշ. 2).

գործ, ընտիր իւր գրչութեամբ և յղկուած, մաքուր մագաղաթով, որ հորթի կաշուց է:

Բայց տարաբաղդաբար այդ փառաւոր գործը մեր ձեռքն է հասել թերի, ինչպէս և Վենետիկի ձեռագիրն էր. սկսւում է Ժ. տետրից Մատթ. ԻԳ. 35. «եսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն»...: Կիսատ է և վերջից. ՄԻԵ. «Գայ յս. և առնու...»: Կորուստն զգալի ոչ միայն բնագրի համար,



Պատկեր 3

իւրաքանչիւր երեսը 17 տողից բաղկացած: Աւետարանների սկսուածքները մի տող մանրանկարչական են (սլաշ. 3. 4), մնացած երկու տողը ոսկեգիր. նաև հատուածների առաջին տողերը մանրանկարչական տառերով սկսուած ոսկեգիր են, ինչպէս եւ բնագրի մէջ «յս.», «ած.», «որդի այ.», «ար.» իրենց հոլովումներով: Այսպիսով մեր առաջ ունինք մի չքեղ


այլ և աւելի մանրանկարչական տնօրինական պատկերների և խորանների համար, որ սկզբում պիտի լինէր. մնացել են միայն Մարկոսի, Ղուկասի և Յովհաննու սկզբնաղարդերը և բազմաթիւ լուսանցքի զարդեր, որոնցով և գաղափար ենք կազմում աւետարանիս զարդանկարչութեան մասին:

Մարկոսի սկզբնաղարդը (սլաշ. 3) քառանկիւն է, կեղրոնում մի մեծ հիւսկէն

վարդեակ, մէջտեղում կապոյտ դաշտի վերայ ութ ճառագայթանի տատղ, իսկ սրակեղրոնում կարմիր գնդակ. հիւսուածքը շրջապատուած է, իրար կպած, չզարգացած արմաւենիկի շարքով, երկու կարմիր գծերի մէջ առնուած: Այս մեծ վարդեակի երկու կողմից մի մի զոյգ, դարձեալ հիւսուած, աւելի փոքր բոլորակներ, ոսկի

կագծի կողերից կազմուած գուազան է, գեղեցիկ խաչով և գլխին լուսնեղջիւրով. մանրանկարչական տառերը հիւսուածքի և բուսական մոտիւններից կազմուած: Ամբողջ զարդի մեծութիւնն է գրերի հետ միասին 30×22 սմ., քառանկիւնի խորանը միայն $17,50 \times 10,50$ սմ.:

Ղուկասի սկզբնազարդի ճակատը նոյն-



Պատկեր 4


դաշտի վերայ՝ կապոյտ գծով, սպիտակով երկուսի բաժանուած: Իբրեւ շրջանակ բոլորի՝ քառանկիւնների շարք է, մէջը ձուածեից կազմուած խաչազարդով: Ճակատին և անկիւններին բուսական զարդ: Դուսանցքի զարդը՝ արմաւենիկի, եռատերեւի, քառագնդակների, մէջք մէջքի փա-

պէս քառանկիւնի է (պատկ. 4), վերևի անկիւններում եւ գագաթում հնգատերեւի զարդով. տերեւների բաժանման անկիւններում կարմիր գնդակներով: Խորանի կեղրոնը՝ սովորական լիւնետի փոխարէն՝ մի եռանկիւնի է, սուր կողմով դէպի վեր ուղղուած, երկու կողերը լայն ժապա-

ւէնաձե զարդով, եղերուած կարմիր զը-
ծով, իսկ երեսը մէջ ընդ մէջ ովաստիկա-
նման զարդերով, թեւերը կազմուած սըր-
տաձեերի մոտիւններով՝ սուր ծայրերի ի-
րար միացմամբ և ապա ամբողջը բոլորակի
մէջ առնուած: Ժապաւէնաձե կողերով
եռանկիւնով, խորանի քարանկիւնու մը-
նացած տարածութիւնը դարձեալ եռան-
կիւններ է ձեւացնում, մէկը ներքեում՝
սուր ծայրով դէպի վեր ուղղուած, իսկ եր-
կուսը աջ և ձախ կողմից՝ սուր ծայրերը

վերայ հաստատուած խաչ է, տարբեր ձե-
ւակերպութեամբ, քան Մարկոսինը և Յով-
հաննէսինը: Ք-ի ուղղահայեաց և հորիզո-
նական ձողերը վերջաւորութիւններին մօտ
մանեկաւորուած են և հիւսկէններով զար-
դարուած, իսկ բնորոշ բոլորակի վերայ
կանթեր անցրած: Ձողերի մակերեսոյթը
զարդարուած է փոքրիկ բոլորակների շար-
քով, մէջերը ովաստիկաձե կամ երկրաչա-
փական զարդերով:

Յովհաննու սկզբնաղարդի ճակատը



Պատկեր 5


դէպի վերին անկիւններն ուղղուած, որոնց
մակերեսոյթը արմաւենիկի և եռատերեւի
մոտիւններով ծածկուած և նրանց յօղուն-
ներով, որ տեղ տեղ օղակաւորուած են բա-
րակ և սպիտակ զոյգ զծերով, ինչպէս սա-
սանեան արուեստին ևս յատուկ է: Խո-
րանի դաշտը ոսկի է:

Լուսանցքի զարդը այստեղ ևս արմա-
ւենիկից և եռատերեւից կամ հնգատերեւից
կազմուած պատուանդանի և երկար ձողի

նոյնպէս քառանկիւնի կիսախորան է, ձա-
խից երկար իւն, իսկ աջից լուսանցքի
զաւաղանաղարդը: Քառանկիւնու միջին
տարածութիւնը ծածկուած է իրար մէջ
հիւսուած երկրաչափական բոլորակներով
կապոյտ, մանիշակագոյն և կարմիր գոյ-
ներով. շրջագծերը սպիտակ կամ ոսկե-
գոյն նուրբ գծերով երկուսի բաժան-
ուած: Քառանկիւնու ընդհանուր շրջա-
նակը մոյգ կապոյտի վերայ աւելի բաց

կապոյտով ուրապոյտ արմաւենիկ է։
Սրանց հետ եւ լուսանցքի զարդերը
ցոյց են տալիս, որ Իգնատիոսի արուեստը
զուտ արեւելեան բնոյթ ունի, ազատ բիւ-
զանդական ազդեցութիւնից, եւ աւելի
մօտ սասանեան և միջագետական-արաբա-
կան աւանդներին (սրբ. 5, 6, 7)։ Նոյնն
են մատնանշում նաեւ թռչունների այլ և
այլ ձևակերպութիւններն իբրեւ լուսանցքի
զարդեր (7, 8, 9)։ Գործադրում է, բայց
քիչ չափով, խեցոսկի՝ կարմիր յատակի

կամ կանթեր, որ երևան է գալիս սա-
սանեան արծաթի գործերի⁽¹⁾ և դասական
շրջանի (մինչ արաբ. արշ.) բուսական զար-
դաքանդակների մէջ (սրբ. 4), ութաձևի
և փակագծի կողերի (մէջք մէջքի) նմա-
նութիւն բերող զարդեր (սրբ. 5. Ժ. տա-
ռի վերայ, սրբ. 3. լուս. զարդը), օվա-
տիկաձև եւ երկրաչափական վարդեաներ
(սրբ. 3, 4), ձուաձևներից կազմուած կամ
սրտաձևներից կազմուած խաչաձևեր (սրբ.
3, 4), պարզ և բարդ հիւսուածքներ, եր-



Պատկեր 6

վերայ, գոյները կապոյտ, մանիշակագոյն,
կանաչ և կարմիր, վերջինը միայն գնդակ-
ների, օղակների կամ կանթերի համար,
բոլորն էլ անփայլ, լուրջ, դիմացկուն եւ
տպաւորիչ իրենց համադրութեամբ։ Սի-
րած մօտիւններն են, ինչպէս տեսանք,
արմաւենիկ՝ թերթի կեղրոնում կարմիր
գնդակով (սրբ. 3, 4. լուս. 6), եռատերեւ
կամ հնգատերեւ (սրբ. 3, 4) թերթերի բա-
ժանման տեղում կարմիր գնդակով, ար-
մաւենիկի և բուսական զարդերի ցօղուն-
ների վերայ զոյգ գծերով օղակաւորում

կրաչափական և այլ ձևերով (սրբ. 3, 4)։

Ուշադրութեան արժանի է ազատ սիւ-
ների վրայ, սրածայր գմբեթով, երկյար-
կանի մատուռը, որ ԺԳ. և ԺԴ. դարե-
րում ընդհանրացած, բայց ծագմամբ հին,
ԺԱ. դարու ճարտարապետական և մանրա-
նկարչական տուեալներով յայտնի, կապ-
ուած արուեստի որոշ հոսանքի հետ։


(1) Wostotchnoje Serebro. Atlas. Smirnow.
տախտակ I. 84. LXXIII. 130, LXVI. 111, LXXII.
128. CXXX. 325 եւ այլն։

Ե.

Իգնատիոսի մի ուրիշ գործից հասել է մի հատակոտոր, Ա. Կորնթ. Ա. 28 - Բ. 3. «Ձի գէսն իմ խափանեցէ . . . եւ ես տըկարութեամբ եւ եր», որ այժմ էջմ. N 879/928. հց. ձեռագրի կազմի երեսն է: Գրչութիւնը ճիշդ նոյնն է, ինչ որ Բագնայրի աւետարանինը, միայն սա քիչ փոքր

Զ.

Անշուշտ, զգալի է հայ արուեստի պատմութեան համար «Հոռոմոսի ոսկետուփ աւետարան»ի, ինչպէս և Վենետկի և Բագնայրի աւետարանների կարեւոր մասերի կորուստը, բայց մեղմանում է մասամբ այդ ցաւը, որ Իգնատիոսի մի երրորդ գործը, այժմ Ն. Զուղայի Ամենա-



Պատկեր 7

է, և իւրաքանչիւր երեսը 16 տողից է բաղկացած:


Հատակոտորի ներքեւի լուսանցքում սքանչելի փոքր երկաթագրով գրիչը հետեւեալ նկատողութիւնն ունի. «Ձիգնատիոս և զՔրիստափոր յաղաւթս յիշեսջիք»: Քրիստափորը նորա աշխատակիցն է, թէ աշակերտը, չգիտենք, մենք կը տեսնենք, Խժկոնից աւետարանի յիշատակարանից, որ նա մի աշակերտ ունէր Յովսէփ անունով:

Փրկչի N 36 աւետարանը, անվնաս հասել է մեզ և հնարաւորութիւն կայ լիովին պարզել և զնահատել նորա արուեստը նաեւ պատկերագրական տեսակէտով:

Տ. Աւետիքեան Սմբատի «Ձեռագիրների ցուցակ նոր Զուղայի» անտիպ աշխատութիւնից. թ. 154. հետեւեալ մանրամասնութիւններն ունինք այդ ձեռագրի մասին. «Թերթք 406, 33x5x24 սմ., երկսիւն՝ 17 տող: Մազաղաթ խիստ ճերմակ, մաքուր, մետրոյեան երկաթագիր 0,5սմ.,

հարուստ պատկերազարդ, գոյներով եւ
ռսկեղծ: Սկիզբը 14 տնօրինական պատ-
կերներ ապա չորս աւետարանիչք, 5 խո-
րան, լուսանցազարդերով: Գրիչն է Իդ-
նատիոս⁽¹⁾: Բերում է և յիշատակարան-
ները, որ գրուած է ստացողի բերանից.

ուածային գանձը «ի պայծառութիւն սր.
եկեղեցւոյ և ի վայելումն մանկանց առա-
գաստի»: Խնդրում է յիշել իրեն հետ «եւ
զանուցանաւ իմ զբարեպաշտ իշխանաց
իշխանն զպատրոնն Դաւիթ Շոթոսկանց և
զորդիսն իւր զքաջ և զանուանի պատրո-



Պատկեր 8

Բռնաւորը եւ իւր կենակիցը Աղատիկին
յուսալով Աստուծոյ ողորմութեան՝ ստացել
են իրենց արգար վաստակով այս աստ-

նաց պատրոն Գրիգոր եւ զորդիսն իւր
զՍմբատ և զԱրջուկն և զԱրդուխաթուն».
Նրանք անդաւակ լինելով, ստանում են
իրրե «զաւակ ի Սիոն» «զածախաւս մատ-
եանս զայս պայծառ նիւթով և զեղեցիկ
զրով եւ ընտիր բանիւք ցանկալի ամենայն


(1) Սյս տեղեկութիւնները քաղել ենք Հ. Ակին-
եանի արտագրութիւնից:

տեսողաց», «և աւանդեցի զսա ի հրեշտակարնակ ուխտն Խժկաւնս որ Տիկորայ վոնք կոչի ի սբ. Սարգիս և ի սբ. Գրիգոր և ի սբ. Յակոբ ի ձեռն Պաւղոս վրդ. ին որ է ամենայն բարեաց պատճառ և ածապատիւ տր. Արասայ եպս. ի և հաւր Սարգսի հեղի և ամենաբարոյ և այլ սբ. միարան եղբարց»:

Աւետարանը գրուել է ՈԶԵ (= 1236) թուին, «ի դառն և ի նեղ ժամանակի յորում ամի առաւ մայրաքաղաքն Անի»

ի պատուական եղբարց», երբ Հոգւոյ դաւրտեանը կը վերջաւորուի աւետարանի ընթերցումը՝ «երանի որում թողութիւն տացէք և զպատարագին պատենն զուք հոգացէք»:

Յիշատակարանը փակոււմ է հետեւեալ հատուածով. «Արդ տր. Արասայ եպս. և վրդս. Պաւղոս և հայր Գրիգոր և այլ միաբանքս հաստատեցաք յեկեղեցւոյ դրանս որ զեղիական երկուշարաթ աւրն զմին պատարագն անխաբան յամենայն ամի Բռնա-



Պատկեր 9

թաթարների ձեռքով. համառօտ նկարագրում է «աստուածաստ» այն բարկութիւնը, որ եկաւ Հայոց, Վրաց և Տաճկաց աշխարհների վերայ «ի մարդագէմ գաղանաց», իրենց զօրավիգն ունենալով «զեք և սատանէք»: «Անթիւ էր աւերումն քաղաքաց և գաւառաց մինչեւ ի մեր սահմանս որ էր թուականիս ՈԶԵ»:

Ի վերջոյ Բռնաւորը «մեծ հաւատով և յուսով» խնդրում է «սիրարար ի սբ. և

ւորին առնեն ով և լինի հայր. կատարիչը գրոյս աւրհնեալ եղիցին և խափանիչքն դատապարտեցին յայ. զի քս. սբ. աւետարանս (!) այս պայծառ է քան զարեգակն և յիշատակ անջնջելի պարոն Բռնաւորին, ամէն»:

Իգնատիոսն ունի և իւր յատուկ յիշատակարանները. 16ա. 200ր. և 403ա. Բռնում ենք միայն առաջինը. «Զիգնատիոս գծող սբ. աւետարանիս և զճնոգս նր. յիշ-

եայ, ո՛վ եղբայր, յորժամ կարգաս ընդ նմին
և զաշակերտ նորա զՅովսէփ մի մոռանայցես
ի բարի կամաց և ած. զձեզ յիշէ ի բարի»:

Երկու ամուսիններ ի և նրանց նուիրա-
բերած աւետարանի մասին տեղեկութիւն
ունինք նաև Խժկոնից սբ. Սարգսի վանքի
հարաւային պատի մի արձանագրութեան
մէջ, որ մէջ ենք բերում ամբողջութեամբ
նմանահանութեան հետ (պատ. 10. ձախ
կամարի տակ):

9. իւ եպիսկոպոսիս տր Աբասա և այլ
սբ եղբարցս եւ սոքա

10. փոխարէն հատուցին մեզ զՂազարու
տաւնին պատար

11. ազն մինչև ի գալուստ բանին այ.
զկեսն ինձ առն

12. ևն Բռնաւորիս և զկէսն զուգակցի
իմո Աղատիկնա

13. Արգ որ զգրեալս մեր կատարեն աւր-
հանալ լիցին



Պատկեր 10

1. ի թուին: ՈՁԹ:

2. Շնորհիւ եւ ող

3. որմութքն այ ես բռնաւորս

4. ծառայ քի եւ ամուսին իմ Աղատի

5. կին ողորմութք ածասէր պարոնի
իմո Գրիգ

6. որո միաբանեցաք սբ ուխտիս Խըծ-
կաւնից եւ ընծան

7. ցաք ի սմա զմեր զանձագին այգին որ ի
Մրեն է (զուցէ «և» փոխանակ «է» ի) զոր

8. Աղբրորն կոչեն եւ աւետարն մեծա-
գին ի ձեռն ածապատ

14. ի քէ այ եւ որք խափանեն որոշեալ
լիցին ի փառաց որդ

15. ոյն այ⁽¹⁾.

Խնդիրը պարզ է, որ արձանագրու-
թեանս մէջ յիշուած աւետարանը նոյնն է,
որի մասին խօսք եղաւ վերև. չորս տարի
յետոյ երկու ամուսինները նորից միաբա-
նում են Խժկոնից ուխտին՝ եւ այս անգամ
նուիրում իրենց գանձագին այգին, «որ ի

(1) Ընդգծուած տառերը այս եւ հետեւեալ ար-
ձանագրութիւնների մէջ կցուած են իրար:

Մրեն», բայց արձանագրութեան մէջ յիշուած է և նախկինը՝ աւետարանի նուիրաբերութիւնը: Եթէ լինէր մի այլ աւետարան, կը շեշտուէր այդ մասին որ և է կերպով, քանի որ նուիրաբերող և ստացող անձնաւորութիւնները նոյն են, ինչպէս և նոյն է տեղական իշխանը «պարոն Գրիգոր», որ յիշատակուած էր աւետարանի մէջ, միայն առանց հօրը՝ Դաւիթ Շոթրուկանցի, որ այդ ժամանակ վախճանուած էր, հաւանօրէն:

Է.

Տարաբաղդարար ն. Զուղայի աւետարանի մանրանկարների լուսանկարներն ամբողջութեամբ ձեռքի տակ չունինք այժմ, որ անհրաժեշտ էր Իգնատիոսի՝ յատկապէս պատկերազրտական արուեստի մասին լրիւ գաղափար կազմելու. յոյս ունինք այդ պակասը լրացնել մի այլ առթիւ. բայց ունինք ստացողների՝ Բռնաւորի և Աղատիկնոջ պատկերները Մարկոսի հետ մի տախտակով, զոնադարդ արտանկարուած հանգուցեալ տաղանդաւոր նկարիչ Վարդգէս Սուրէնեանցի ձեռքով, որ պիտի հրատարակենք մեր մանրանկարչական քարտէզի մէջ. ներկայ լուսանկարն էլ հանուած է այդ արտանկարութիւնից (սրբ. 11)⁽¹⁾:

Այս մի խմբանկարն իսկ բաւական է ցոյց տալ, որ յանձին Իգնատիոսի ունինք մի կարող մանրանկարիչ Հռոմոսի և Անիի շրջանից, որ պէտք է իւր արժանաւոր տեղը գրաւէ արեւելեան Հայաստանի մանրանկարչութեան պատմութեան մէջ. առաւել արժէքաւոր է այս մանրանկարը, որ շարունական չէ, այլ բնորոշ և անհատական պատկերաւորում ստացողների՝ իրենց հագուստով և զարդ ու զարդարանքով: Նոյն իսկ աւետարանչի գլխագծերի և արտայայտութեան մէջ սովորականից դուրս արեւելեան գրոշմ և ըմբռնում կայ, որ նշան է Իգնատիոսի գիտողական և ստեղծագործական ունակութեան:

Պատկերի վերևի մասում նստած է Մարկոս (նկ. 11) աւետարանիչը, որ ծընկանը գրել է մագաղաթի թերթը և գրում

է. «սկիզբն աւետ»: Յետևի ֆոնը մի շէնք է, առաջամասը եռանկիւնի ճակատով, դռնով և լուսամուտով. դռնից կախուած և դէպի լուսամուտը ձգուած վարագոյրը ներքին տեսարանն է մատնանշում: Աւետարանիչը նստած է բոլորակ, ցած թիկունքով աթոռի և երկար բարձի վերայ. սաքերի տակ պատուանդան իւրեւմաս աթոռի: Առաջին գրուած է սեղան, կեղրոնում ձողի վերայ հաստատուած դրակալով, վերան բաց դիրք դրած, որ օրինակն է: Երկու տեսարանը բաժանող գերանի վերայ գրուած է բոլորգրով. «զկարապետն և զ... կանն ստացող աւետարանիս յիշեալիք», որ յետին գրութիւնն է: Աւետարանիչը լայն թևերով տունիկայ է հագել, ձախ ուսի վերայից մոխրագոյն տոգայ ձգելով. գլուխը թեքել է դէպի ձախ. երեսը ծածկուած բոլորակ և կարճ սև մօրուքով. կարուած են և սև նաև գլխի մազերը, աչքերը մտազբաղ արտայայտութեամբ և դէմքն արեւելեան գրոշմով: Տոգայի փէշով բռնել է մագաղաթի թերթը, ուր գրում է իւր աւետարանը. աջ ձեռքին գրիչ, երեք մատով բռնած, չորրորդը՝ մատանու մատը ծալած, իսկ ճակոյթը թերթի վերայ՝ պահելու համար:

Ներքևի մասում ստացող ամուսիններն՝ Բռնաւորի և Աղատիկնոջ պատկերներն են, երկուսն էլ չոքած, ձեռքերը աղօթաւորի ձևով մեկնած դէպի իրենց նուիրաբերած աւետարանը, որ բազմեցրած է բարձր գրակալի վերայ, հաստատուած բոլորակ քառաստիճան պատուանդանի և ձողի վերայ: Աւետարանը կազմած է, երեսին խաչ, թևերը գնդակներով վերջացած: Աջ կողմից չոքել է այրը, ուսերին վերնազգեստ ձգած, նեղ և կախ թևերով. վերնազգեստն ունի մորթուց օձիք յետևի կողմից: Վերնազգեստի երեսը ծածկուած է խաչաձև կարմիր զարդերով, որ կպած են իրար և ուղղահայեաց հորիզոնական ուղղութեամբ: Վերնազգեստի տակից հագել է առաջը բաց «չուխայ» և ապա կապայ, կտորով զօտեւորած. երկու զգեստներն էլ ծաղկաւոր են: Պարանոցի մօտ երեւում է սպիտակ շապկի օձիքը: Գլխարկը բոլորաձև է, եզերքը աղնիւ մորթուց, իսկ արտաքին երեսը ծաղկաւոր կտորով ծածկուած: Գլխի մազերը կարճ

(1) Սոյն խմբանկարը հրատարակել է Հացունին իւր Հայ Տարագին նուիրուած աշխատութեան մէջ:



են և սե, ամբողջական, կարճած մօրուքով և թաւ ընչացքով. ակունջներէ կախուած են ոսկէ օղեր, բոլորակով վերջացած. մատանեմատին մատանի:

Գրակալի միւս կողմից ծունկ է չոքել Աղատիկինը, ձեռքերը դարձեալ ազօթաւոր մեկնած դէպի աւետարանը: Վերից վար հագել է մինչև տաները հասնող սպիտակ շրջազգեստ, մակերևոյթը զարդարուած ոսկեզոյն բուսական զարդերով, որ շրջափակուած են ցօղուններից, սեղմած և զուգահեռարար շարուած քառանկիւններով: Թեւերին անցրած է թեւոց, որ սովորական էր Մեծ Հայքի կեդրոնական նահանգների կանանց համար մինչև վերջերս: Գլխին ձգել է սպիտակ կտորից ծածկոց, եզրները գծազարդ, որ անուած է ճակատին գօսկի մէջ. յետեի կողմից սեւ քօղ կախուած: Սպիտակ գծազարդ լաւալի տակից, մազերի վերայ ձգուած է աւելի նուրբ մի կտոր, որ միայն գաղաթի առաջնամասից է երևում: Աչքերն ուռնքերը սեւ են. աչքերը քիչ շեղակի, որ յատուկ է պարսկական յետագայ մանրանկարչական արտայայտութեան: Գլխի յարդարանքը նման է ներկայ Փամբակի կանանց, մօտ նաեւ վրացի կանանց: Չափ ձեռքի բթամատի վերայ երևում է օղակ՝ մատանի:

Այսպիսով ձեռքի տակ ունինք պատմական — ազգագրական արժէքով մի պատկեր, որ գաղափար է տալիս նախամոնղոլական շրջանի ազնուական դասի հագուստի մասին: Ժ. Գարու քանդակագործական, մանրանկարչական եւ որմանկարչական պատկերազրութեան մէջ բաւարար չափով նիւթեր կան, որով կարելի է ժամանակակից այլ և այլ դասերի և շրջանների հագուստի պէսպիսութիւնները պարզել:

Ը.

Սոյն աւետարանի յիշատակարանից տեսանք, որ Բոնաւորը յիշում է որպէս իրեն «սնուցանաւ» «գրարեպաշտ իշխանաց իշխանն զպատրոն Դաւիթ Շոթոսկանց և զորդիսն իւր զքաջ և զանուանի պատրոնաց պատրոն Գրիգոր և զորդիսն իւր զՍմբատ և զԱրշակն և զԱրզուսա-

թուն»: Իսկ Խժկոնից արձանագրութեան մէջ նոյն Գրիգորին անուանում է «աստուածասէր պարոն իմ» որի ողորմութեամբ կատարել է իւր նուիրաբերութիւնը. կասկածի ոչ մի առիթ չունինք այս նոյնացման դէմ, թէպէտ արձանագրութեան մէջ չի ասուած, որ այս Գրիգորը Դաւիթ որդին է. երկուսն էլ Խժկոնից վանքի անմիջական տէրերն են, երկուսն էլ Բոնաւորի «պատրոն»ն ու «պարոն»ը:

Այս արտայայտութիւնները հասկանալու համար պէտք է տեղեակ լինել Չաքարեանի շրջանի պետական կազմակերպութեան. երկրի ընդհանուր տէրերը կամ գերազոյն իշխանները Չաքարէ եւ Իւսանէ եզրայրներն էին իրենց սերունդով. նրանց ենթարկուած էին մի շարք իշխաններ, որ ըստ զինուորական կազմակերպութեան նըրանց սպարապետները կամ զօրավարներն էին և ըստ վարչականի նրանց ստորադրեալները⁽¹⁾: Սրանք էլ իրենց հերթին ունէին աւելի ստորագաս սպարապետներ և կալուածատէր իշխաններ, որոնք «ազատ» էին կոչուած: Շոթոսկանց իշխանները Չաքարիա մեծի զօրավարներն էին, ինչպէս կ'տեսնենք քիչ յետոյ մէջ բերելիք արձանագրութիւններից, իսկ Բոնաւորը Շոթոսկանց տան ազատներից, ուստի և իւր պատրոնի կամ պարոնի «ողորմութեամբ» է, որ կալուածական նուիրաբերութիւն է անում Խժկոնից վանքին: Այս ոճը կամ արտայայտութիւնը «պարոնին» ենթարկուած ազնուականների կամ «ազատ»ների նուիրատուութեան ժամանակ, սովորական է Չաքարեանի շրջանի արձանագրութիւնների մէջ, որից միայն մի երկու օրինակ կ'երևինք իբրեւ ապացոյց: Թանաթի վանքի արձանագրութիւնների մէջ Սիմէոն «պարոնացն ողորմութբ Էաշո Մամախաթունին» իւր հայրենի այգին տալիս է Ս. Ստեփանոսին. Խութլու բէկը Պառչեանների ազատներից՝ «պարոնացն ողորմութբ Էաշո Մամախաթունին զԱղալտեղին հողն» է տալիս նոյն վանքին⁽²⁾:


Տարարազգաբար մեր ձեռքը հասած աղբիւրները քիչ են, եղածն էլ միայն

(1) Տես մեր «Խաղրակեանք» եւն. եր. 16-22. 70-75:

(2) Անդ. 187:

կարճ ժամանակամիջոցի համար, ուստի և հանգամանօրէն չենք կարող պարզել Շոթոկանց տոհմի ծագման, կատարած դերի մասին մեր պատմութեան և ոչ ճշգիւ որոշել նրանց իշխանութեան սահմանները, դորա հետ էլ ստորագրեալ Բռնաւորի: Բայց ամփոփենք, ինչ որ հնարաւոր է եղել հաւաքել:

1210) Թուականից, ուր ի միջի այլոց յայտնում է թէ «... էտու ի սբ ուխտս Հաղբատ(ա)յ իմ հայրենի գեղս որ նոր յԱշոցք⁽¹⁾ զՀալալաշէն և զվ... (փչ. 4-5 տառի տեղ) և զի այս գեղերս հետի էինի Հաղբատա փոխեցի էտու հայրենաւք(?) Դաւթի որդո Շոթոկա և ատի բ գեղին փոխան զՀաղբ... (մի կամ երկու տառի տեղ կոտրած, նորոգած



Պատկեր 12

Հաղբատի մեծ ժամատան (Յովհաննէս Լալիսկոպոսի շինած, ոչ Յովհաննէս Գ. Դոփեանի, որ ժամանակակից էր Սաթուհի և Ամենափրկիչ խաչի կանգնողն էր, այլ նորա նախորդներից մէկը) դրան ճակատին Զաքարիա մեծի, Իւանէի և Կրօր արձանագրութիւնը կայ ՈԾԹ (=

են) հայրենիք և ընծա սբ նշանին Հաղբատա անենայն սահմանաւք ոնց բնական լեալ է հողով և ջրով խոտամարգերով...» ևն:

(1) «Իմ հայրենի գեղս որն որ յԱշոցք» ժողովրդական բարբառով է. Զալալեան. Ա. 58. երգնկեան. Հնախօսական Տեղագր. Հաղբատայ. Վաղարշապատ. 1886. եր. 27: Դրի ենք առել և մենք:

Նոյն Զաքարիան Ոկի (=1214) թուին ազատելով խժկոնից վանքը այլազգիներից, կալուածական նուիրաբերութիւններ է առնում «առաջնորդութեան Դաւթի որդոյ Շոթրուկա»։ արձանագրութիւնը գտնուում է Ս. Սարգսի հարաւային պատին, որ մէջ ենք բերում այստեղ ամբողջութեամբ, նմանահանութեան հետ (պատկ. 12, միջին կամարի վերեւի արձանագր.)։

1. ∴ Կամաւն այ։
2. ∴ Ի Ոկի։ թվաբերութեանս
3. Հայոց եւ Զաքարէ ամիր սպ
4. ասալար Հայոց եւ Վրաց որդի Սար
5. գսի ազատեցի զսբ ուխտս զայս իմո
6. վ արեամբս ի յայլազգեաց եւ հառ ի սբ Սար
7. գիս զվասակափող Մշկաղբիւր . . .
8. եւ այգի մի ի Բագրան եւ շինական մին ի գ
9. իւռս յիշատակ հոգոյ իմոյ եւ յարեւատ
10. ութի հարազատ որդոյ իմոյ Շահանշահի
11. եւ եղբար իմոյ Իւանէի հայր Յովհաննէս եւ ա
12. յլ միաբանքս հաստատեցին զսբ Սարգսի
13. զաւագ բեմն անխափան պատարագ առնել ինձ առաջ (միացած)
14. նորդութեան Դաւթի որդոյ Շոթրուկայ արդ եթէ յիմ
15. ազգականաց եւ կամ յաւտարաց եւ կամ հարանց
16. զիմ զյիշատակս խափանէ եւ զվասակափաղ յ
17. այս սրբոցս հանէ։ զաւձին։ զկառնին։ զմեղային։
18. զխաչահանուաց զանէծսն ասցէ։ յժը։ իցն ի սբ
19. երրորդութենէն մի գտցէ ողորմութիւ։ ամէն։

Այս երկու արձանագրութիւններից երկուսում է, որ Դաւթի Շոթրուկանցի իշխանութիւնը եւ կալուածները պէտք է մասամբ Հաղբատի եւ մասամբ խժկոնից վանքի կամ Տեկորի շրջանում լինէր. աւելացնենք, որ Բոնաւորի նուիրաբերութիւնները աւետարանով եւ այգւով «որ ի Մրեն» այդ են մատնանշում։ Բայց մենք ունինք ուրիշ ապացոյց եւս. Սանահնի վանքում «Ճեմարան» կոչուած ընդարձակ սրահի հարա-

ւային պատին, ուր գէպի մեծ տաճարի գաւթը տանող դուռն է, գտնուում է նոյն Դաւթի իշխանի, Շոթրուկա որդու մեծ արձանագրութիւնը, որ նոր լոյս է սփռում խնդրի վերայ. նա յայտնում է, որ ՈՀԱ. (=1222) թուին գնել է «գմոնակ գոմուց կէսն եւ շինական մի Հալալաշինի...» ևն։ Այստեղ յիշուած Ոննակ գիւղը այժմ էլ նոյն անունով գտնուում է Հաղբատի եւ Սանահնի մէջ, հին եկեղեցու մնացորդներով, եւ եթէ «Հաղբ» անունը Զաքարիայի արձանագրութեան մէջ «Հաղբատ» պիտի կարդալ, նշանակում է Դաւթը տեղական իշխան էր Հաղբատի եւ Սանահնի մէջ ընկած մի երկրամասի։ Հաղբատի մեծ իշխանները Մաւկանարեքի Արծրունիք էին, որոնց յայտնի ներկայացուցիչներ են Ամիր Բուրդ, Սաթուհ Թաթէգ ևն, որոնց տոհմը կարեւոր դեր է կատարում Հայոց եւ Վրաց պատմութեան մէջ ԺԲ. դարու կէսերից մինչև ԺԳ. թվերը։

1. + թու ՈՀԱ. եւ Դաւթի իշխան որդի Շոթրուկա է (?) գնեցի գմոնակ
2. գոմուց կէսն եւ շինական մի Հալալաշինի մշակն լմնւած
3. ուխ եւ զսպիտակ⁽¹⁾ նշան եւ բ։ շարջառ ընծակցի յած
4. ամիւսեւ առաջնորդ սբ ուխտիս տր Յոհաննէս եւ միաբանքս եւ տուն
5. զսբ Գրիգորի տառնն որ հեճե դիւական զշաքաթն եւ զկիրակէն զեկեղե
6. ցիքս զշաքաթնաւր նինձ Դաւթի եւ Վարճկա եւ զկիւրակ
7. է աւրն Սարգսի եւ Շերեւարքին ադ որ զմեր ընծայս հանե յ
8. այս եւ կեղեցոյս Յուզաի եւ կաէնի մասնակից է զի եւ
9. մեր մեղացս տէր է առաջի քի աւնն։

Այստեղ յիշուած անուններից Շէրեւարքը կ'աւանդենք կրկնուած նոյն Դաւթի խժկոնից վանքում թողած մի արձանագրութեան մէջ, իսկ Վարճիկն ու Սարգիսը

(1) Երկրորդ տողի վերջին եւ երրորդի առաջին բառերը պարզ չեն եւ միտք չեն դուրս գալիս. արդեօք «զսպիտակ»։ «զ. սպիտակ» պիտի կարդալ. շատ չնչին զուգար կ'լինի այդ դէպքում մի իշխանի կողմից նուիրելու «զսպիտակ նշան» պէտք է արժանի խաչ հասկանալ։ Զալալ. Ա. 19 չի կարդացել։

անյայտ են, բայց անպայման իւր մերձաւորները:

Այս միւսումնաբերութիւնը իշխանը նոյն սրահում, որ իշխանական գերեզմանատուն է շատ տոհմերի համար, արեւելեան կողմից՝ Ս. Սարգսի դրան մօտ, կանգնել է մի խաչարձան իւր հօր դամբարանի վերայ. պատուանդանը գորշ, իսկ բուն խաչաքարը կարմիր քարից, նուրբ քանդակուած, նաև խորքում, դաշտի վերայ. շատ գեղեցիկ են քանդակուած անօթները (փարչերը): Խաչի վերին թևերի մօտ՝ երկու կողմից՝ երկու վիշապ, մէկի պոչն էլ վիշապագլուխ: Խաչարձանի ճակատին հետեւեալ արձանագրութիւնը կայ.

«Ես Դաւիթ իշխանաց իշխան կանգնեցի զսբ. նշանս, գերեզմանի հաւր իմոյ Գրիգորի ոտք երկրպագեք յաղաթս յիշեցէք»:

Խաչարձանի առաջ՝ ներքեւում ձգուած է մի տափակ քար, որի տակ ամփոփուած էր ննջեցեալը և վերան գրուած. «Գրիգոր»:

Խժկոնից վանքի արձանագրութիւնը ոչ միայն հաստատում է այս խաչարձանի տուած տեղեկութիւնը Դաւիթ իշխանի հօր անուն մասին, այլ և մանրամասնութիւններ նորա անձի և զաւակների. «Դաւիթ որդի Գրիգորոյ զաւրավար ամիր սպասաւարին Զաքարիայի» իւր զաւակների՝ Գրիգորի և Գայլ Շէրպարիքի(1) հետ տալիս է Վահանառճի գիւղի կէսը Ս. Սարգսին՝ յիշատակ իւր և ծնողներին և ստանում հայր Յովհաննեսի, վարդապետի(2) և միւս միաբանների կողմից բոլոր եկեղեցիների պատարագները ամէն տարի Դաւիթի և Յակոբոյ, Պողոսի և Պետրոսի և Շողակաթի տօներին (պատկ. 13. ձախ կողմի արձ.):

1. : Յանուն այ ՈկԳ: Թուականիս:
2. : Ես Դաւիթ որդի Գրիգորոյ զ
3. աւրավար ամիր սպասաւարին Զաք
4. արիաի տեսի զպայծառութի սբ
5. ուխտիս Խժկաւնից ես եւ որդիք իմ

(1) Մեզ թուում է արձանագրութեան «Գայլս Շէրպարիք» մի անձն է երկանուն:

(2) Վարդապետը հաւանօրէն Պաւղոսն է, որ յիշուած է աւետարանի յիշատակարանի մէջ:

(3) Խժկոնից վանքին եւ նորա արձանագրութիւնների ամբողջութեան մասին առանձին յօդուած պիտի գրենք:

6. հարազատք Գրիգոր և Գայլս Շէր
7. պարիք եւ էտու զիմ զսէփհական
8. զգիւղն զՎահանառճիղը(1) զկէսն
9. ի սբ Սարգիս յիշատակ ինձ և ծն
10. ողաց իմոց վասն որո հայրս Յովհ
11. նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
12. նքս հաստատեցին զԴաւիթի եւ զ
13. Յակոբա զՊաւղոսի և զՊետրո
14. սի եւ զսբ Շողակաթին զպատարա
15. գն յամենայն ամի որ լինի յամ
16. ենայն եկեղեցիքս ինձ առնել ան
17. խափան էթէ ոք հակառակի ի հար
18. անց եւ կամ ի պատրոնաց եւ զի
19. մ զյիշատակս խափանէ որչա
20. փ ած. աւրհնած է այնչափ այն մարդն
21. (գարնէզի վերայ) անիծեալ է:

Այս բոլոր արձանագրութիւնների մէջ, Դաւիթ անունով իշխանին մենք նոյն անձնաւորութիւնն ընդունեցինք. արդեօք համապատասխան է այդ իրականութեան և հիմք ունինք այդպէս ընդունելու:

Նախ Զաքարիա մեծի կողմից Հաղարտի ՈԾԹ. և Խժկոնից Ոկ Թուականների արձանագրութիւնների մէջ Դաւիթը կոչուած է որդի Շողակայ. այդպէս է անունում ինքն իրեն նաև Դաւիթ Սանահնի ՈՀԱ. Թուի արձանագրութեան մէջ, իսկ Բռնաւորը իւր յիշատակարանի մէջ Դաւիթ «Շողականց»: Յաճախ է պատահում արձանագրութիւնների և յիշատակարանների մէջ, որ «որդիք» կամ «թոռունք» այս ինչի կամ այն ինչի ազգանուն կամ տոհմի նշանակութիւն ունի. օրինակ Գրիգոր Անաւարդեցու դէմ Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ գումարուած ժողովի ձեռնարկին ստորագրում են «որդիք բարեպաշտ իշխանին Պռոշայ» Պապաք եւ Էաչի. մինչդեռ Էաչին Պռոշի թոռն է եւ ոչ որդին(2): Դրաձորի զպրոցի Յունան

(1) Զորրորդ տողում «զպայծառութի» բառի մէջ էլ միացած է քի ձողի հետ: Ութերորդ տողում զ եւ ը մի եւ նոյն ձողի վերայ միացած, եւ զի բոլորակի ներքեւի հորիզոնականը. մեզ թուում է զրիչը սխալուել է եւ այդ ձեւով ուղղել իւր սխալը. այդ դէպքում պէտք է կարդալ «զՎահանառճի զկէսն»: Քսանմէկերորդ տողում աճ կոտրած: Արձանագրութեան դաշտը սպիտակցրած է, բայց յետոյ:

(2) Օրբէլեան. Ղուկ. հրատ. 463: Մեր «Խաղաղեանք» եր. 145. 183:

գրիչը իւր յիշատակարանը թուագրում է ի միջի այլոց՝ «իսկ ի տեղւոյս տէրութեան թողանց մեծին Պոռչա Ամիր-Հասանա եւ Ջումայի», իսկ նրանք Պոռչի թողնորդիքն են⁽¹⁾։ Պոռչի «թողն» է կոչուած Գեղարդի Յովհաննէս եպիսկոպոսը, որ ապրում էր 1475 թուին, Պոռչից մօտ 200 տարի յետոյ⁽²⁾։ Այդպէս էլ այստեղ «Դաւիթ որդի Շոթոկայ» պէտք է հասկանալ համազօր «Դաւիթ Շոթոկանց» արտայայտութեան, այսինքն իբրեւ ազգանուն։

Ապա տեսանք, որ Սանահնում խաչարձան կանգնող Դաւիթ իշխանի հօր անունը Դրիգոր է, ինչպէս Խժկոնից վանքի ՈկԳ. թուականի արձանագրութեան Դաւիթ զօրավարի, և որովհետեւ սորա որդու

Դաւիթ Շոթոկանցը ՈԶԵ. թուականին ղեռ ևս կենդանի էր, երբ նորա հովանաւորած ազատներից Բոնաւորը եւ Տղատիկինը գրել են տալիս իրենց աւետարանը և նուիրում Տ. Աբաս եպիսկոպոսի եւ Պաւղոս վարդապետի ձեռքով Խժկոնից վանքին։ Չորս տարի յետոյ՝ ՈԶԹ (=1240) թուականին նոյն ամուսինները նուիրում են մի այգի ևս և արձանագրել տալիս Ս. Սարգսի պատին. բայց այստեղ Բոնաւորը չէ յիշում այլ ևս Դաւիթ իշխանին, այլ նորա որդի «զարոն» Դրիգորին միայն, որի «ողորմութեամբ» նա կատարում է իւր ընծայարեութիւնը։ Այստեղից եզրակացնել կարող ենք, թէ արդէն մեռած էր Դաւիթ և իշխանութիւնն



Պատկ. 13

անունն էլ Դրիգոր է, ինչպէս և Շոթրուկանց Դաւթինը, պապի անունով և թողը կոչուած, երկուսն էլ կապուած Սանահնի և Խժկոնից հետ, իրաւամբ եզրակացնել կարող ենք Դաւիթ Շոթոկայ որդու, խաչարձան կանգնող Դրիգորի որդի Դաւիթ իշխանի եւ Խժկոնից Դաւիթ զօրավարի անձնաւորութեան նոյնութիւնը։

անցած նորա աւագ որդուն⁽¹⁾։ Այնուհետեւ չունինք տեղեկութիւն այս տոհմի մասին։

(1) Ըստ այսմ Շոթոկանց տոհմի հետեւեալ ճիւղագրութիւնը կը ստանանք.

Շորոփի կամ Շորոփի

։

Դաւիթ . Վաճիկ (կինը?) . Սարգիս եւ Շէրպարիֆ .

։

Դրիգոր . Գայլ-Շէրպարիֆ (մի՞ անձն)։

։

Ամբատ . Արշուկ . Արզուխարուն։

(1) Մեր «Խաղրակեանք» . 200—202։

(2) Անդ . 232։

Թ.

Այստեղ իսկապէս պէտք է վերջանար մեր խօսքը. բայց ձեռքի տակ ունինք մի գործ, որ կարծում ենք Իգնատիոսի հետ պիտի կապել, թէեւ հաստատուն կերպով պնդել չենք կարող թէ նորանն է:

Պատերազմի ընթացքում մեր ձեռքով էջմիածին է բերուած և մատենադարանին յանձնուած Ղարաբաղի Մեծչէն գիւղի նըշանաւոր «Կարմիր Աւետարան»ը, որ թըւականով երկրորդ հին ձեռագիրն է Հայոց մէջ, գրուած ՅԾԸ (= 909) թուին «ի Կոստանդիանոպոլիս ի ձեռն թութակի ծառայի ծառային Քի. Տն. Աշոտոյ»: Բուն աւետարանը իւր մէկ հատիկ մանրանկարով, բնականաբար, այստեղ մեր քննութեան նիւթ լինել կարող չէ, բայց նորան կցուած է 5 թերթ, 10 խորաններով, եւ Մատթէոսի ու Ղուկասի սկզբնաւորութիւնների առաջին թերթերով:

Նորոգութեան այս յաւելումը, թէեւ թուական չունի, բայց ցուցումներ ունինք որոշելու նորա ծագման մօտաւոր ժամանակը. խորաններից մէկը (5ա) գերանների վերայ կանաչ դաշտում դեղին գոյնով գրուած է, «Ոհ թաթար, վայ աւուրն որ եկիր, անցուցեր զաշխարհս / Ոհ ներեցեր Ած. անչափ արիւնհեղութիւնս»: Այս խօսքերը կարող են գրուած լինել մօտաւորապէս 1236-1242 թ. թ. կամ քիչ յետոյ, թաթարների արշաւանքի անմիջական ազդեցութեան տակ՝ նրանց նուաճողական շրջանում. այդ թուականներից յետոյ արդէն հայ իշխանները համակերպուել էին նոր պայմաններին եւ ոչ միայն ենթարկուել թաթարների իշխանութեան, այլ եւ հաշտութեան պայմանների համաձայն իրենց զօրքերով մասնակից նրանց դէպի Փ. Ասիայի խորերը՝ Երզնկա, Սեբաստիա, Կեսարիա կատարած արշաւանքներին⁽¹⁾:

Ժամանակի այսպիսի որոշման միանում է և ուրիշ հանգամանք՝ խորանների նկարչի անունը. Եւսեբիի և Կարպիանոսի թղթակցութեան վերջում, գրուած փոքր երկաթագրով, գրիչն աւելացնում է, 2ա.

«Եւ զԻգնատիոս յոքնամեղ գրիչ յաղաթ(?) յիշեա ով տր. իմ, եւ դու յիշեալ լիցիս ի տր. ամէն»: Երկրորդ անգամ նկարիչը յիշում է իւր անունը 6ա. խորանի գերանների վերայ (պատկ. 14). «Ած. ողորմեա ստացողի սորա և մեղ», ներքևի գերանի վերայ. «Տր. Ած. ողորմեայ Իգնատիոսի: ամէն», շատ նման Իգնատիոս Հոռոմոսցու խոշոր երկաթագրով գրչութեան: Եւ վերջապէս երրորդ անգամ իրեն յիշում է 6բ. նկարած խաչի (պատկ. 15) տակ, ներքևի գերանի վերայ. «Սուրբ նշան աւգնեայ մեղաւորիս Իգնատիոսի», ինչպէս Իգնատիոս Հոռոմոսցին Հաւուց թառի աւետարանի խաչի տակ գրել էր «բարեխաւս Իգնատիոսի»:

Սրանց վերայ աւելանում է եւ հետեւեալը. աւետարանիս մէջ ունինք միջին, ուղղանկիւն երկաթագրով այսպիսի մի յիշատակարան. «Արդ ես յամենայնի նուաստ տր. Սարգիս ստաց/այ սբ. աւետարանս անջինջ յիշակ(?) ինձ եւ իմ ծնաւղացն որք ընթեռնոյք յիշեցէք ի Քս.»։ Ով կարող է լինել այս տէր Սարգիսը: Կրչութիւնից դատելով ժամանակակից է նա Իգնատիոս նորոգող նկարչին, և որովհետեւ վերեւ տեսանք, որ նա իւր մեկենասին «տր. իմ» է անուանում, անհաւանական չէ, որ հէնց յիշատակարանի տէր Սարգիսը լինի աւետարանի նորոգել տուողն ու երկրորդ ստացողը: Արդ, մեր Հոռոմոսցի Իգնատիոսին եւս ժամանակակից է Անիի արքեպիսկոպոսներից Տէր Սարգիս, որի անունն յիշատակութիւնն ունինք ՉԺԱ (= 1262) թուին Բագնայրի արձանագրութիւնների մէջ, իսկ Ալիշան մեղ անյայտ աղբիւրների հիման վերայ նորա ժամանակը նշանակում է 1245-1276 թ.: Այս բոլորը զարթեցնում են մեր մէջ երկու Իգնատիոսների նոյնութեան միտքը:

Բայց նոյնացման մտքի դէմ կայ լուրջ դժուարութիւն եւս, որ երկու տրուեստների տարբերութիւնն է: Սակայն այդ տարբերութիւնը կարող է մասամբ օրինակի ազդեցութեան հետեւանք լինել, որ անպայման հին է, երկրաչափականով արաբական և թուրքերի ձեւակերպութեամբ ստանեալ յետին աւանդների հետ կապուած, եւ մասամբ, գուցէ, այդ պարզ, գլխաւորապէս կիսնովարիումով զծագրուած,

(1) Գանձակեցի՝ Ղուկ. հրատ. 264 | 5 — 269: Տես եւ մեր Խաղրակեանք եւայլն, եր. 19, ծանոթութիւն:

խորանները իգնատիոսի աշակերտների գործերը լինին. այդ ասել կարող ենք, յատկապէս, Մատթէոսի և Ղուկասի սկզբնազարդերի նկատմամբ, որ տարբեր են նաև խորանների արուեստից, բայց ԺԳ. դարու արևելեան Հայաստանի առանձնայատկու-

ապագային թողնելով նորագիւտ փաստերով խնդրի վերջնական պարզաբանութիւնը:

Եւսեբիի և Կարպիանոսի թղթակցութեան միայն երկրորդ երեսը կայ, «եւ զԻգնատիոս յոքնամեղ եւայլն» յիշատակաբանի հետ, որ մէջ բերինք վերև: Խորանը



Պատկ. 14

թիւններով: Թէական համարելով այս բոլորը, աւելորդ չհամարեցինք, որպէս համեմատութեան նիւթ, տալ եւ Մեծչէնի «Կարմիր Աւետարանի» նորոգութեան մանրանկարչութեան մասին համառօտ տեղեկութիւն մի քանի լուսանկարների հետ,

երկու սեան վերայ, լինեալի մէջ երեք հիւսկէն բոլորակ և երկու կէս բոլորակներ. կամարի մէջ ծիածան, անկիւններում եռատերևի ցողուններից հիւսուածք: Ճակատի եռատերևի երկու կողմից մի մի սիրամարդ. եռատերևի թերթերի հպման

անկիւնում մի մի կարմիր դնդակով: Աջ սեան կողքից պայմանական ծառ պտուղներով:

«Կանոն առաջին յորս ածան չորեքին» գրուած է երեք քառորդական բոլորակի մէջ. կամարի զարդը ծիածանի բեկումն

նետի վերայ քառանկիւնի խորանի անկիւններում մի մի մեծ երկրաչափական հիւսկէն վարդեակ, նրանց մէջտեղը եւ ներքեւի անկիւններում մի մի փոքրիկ վարդեակ ութ ճառագայթի խաչաձեւով. համարարբառը երեք սիւններով. ձախ կող-




Պատկ. 15

ճառագայթներ. ճակատի կեդրոնում անօթի երկու կողմից մի մի կաքաւանման թռչուն, պարանոցները, թեւերը մէջքի վերայից և պոչի մօտ մանեկաւորած: Լիւ-

մից ներքեւում պայմանական մի ծառ լուսանցքում: Ծիշդ սորա նման է «Կանոն երկրորդ յորս երեքն» միայն խորանը չորս սիւնների վրայ, եւ տախտակի վրայ ձախ

կողմից, բայց ճակատի երկու կաքաւնե-
րից, մի երրորդ կաքաւ եւս, մանեկաւո-
րած, զլուխը յետ է դարձել, չատ նման
ժ. դարու փղոսկրէ կազմով աւետարանի
մի կաքաւին: Սիւների խոյակները կիսա-
բոլորակի վերայ տափակ տախտակ, իսկ
խարխիւներում ընդհակառակը: Պայմա-

«Կանոն երրորդ յորս երեքն» (պատկ.
16). արժանի է ուշադրութեան ճակատի
երկու ոճաւորած եւ կռուելու պատրաստ
աքաղաղներով, պարանոցները եւ պոչե-
րը մանեկաւորած: խորանի հիմք կազմող
տախտակի վերայ գրուած է. «Մեղայ քեզ
Ած. ողորմեայ ինձ Ած.», իսկ ներքեւի



Պատկ. 16


նական ծառն այստեղ աջ կողմն է: Այս
խորանի տախտակների վերայ է գրուած.
«Քս. Ած. ողորմեա Իգնատիոս նկարչի
ամէն», եւ «Տր. Ած. ողորմեա ստացողի
սորա ամէն»:

տախտակի վերայ. «յորժամ գայցես ի
սոսկալի աւուրն»: Սրան համապատաս-
խան է կանոն չորրորդը, գեղեցիկ եւ մըր-
դով լի (կարմիր գնդակներ) կողովով:

«Կանոն հինգ յորս երկուսն» մի խորա-

նով, «կանոն զ. երորդ յորս երկուն» եւ «կանոն եւթն յորս երկուն» երկուսը միասին մի խորան (պատկ. 17). սիւները իրենց խարիսխներով եւ խոյակներով նման նախնախորհրդաներին, սիւնների բունները դարձաւորուած են պարանահիւսով կամ ծիա-

ւով, իսկ աջ խորանի վարդեակները հիւսկէն բոլորակների մէջ ութ ոճաւորուած ձուածաններով: Խորանների աջ եւ ձախ լուսանցքների կողմից, գերանի վերայ մի մի կողով, լայն բերանով եւ երկու անգամ գօտեւորած: Ծակատի թռչունների պարանոց-



Պատկ. 17

ծանի գոյների բեկումներով: Նման են նաեւ երկու խորանների լիւնետները, վերելի անկիւններում մի մի վարդեակներով. միայն ձախ կողմինը բոլորակի մէջ ութ ճառագայթներով, ինչին տարածութիւնը ութ եռանկիւնու բաժնուած՝ սուր ծայրերով դէպի կեդրոնն ուղղուած մի մի եռատեղե-

ներն ու պոչերը գօտեւորած. սիւնների կողքերի մի մի պայմանական ծառազարդ, բունները օղակաւորած:

«կանոն ը. երորդ յորս երկուն», կանոն թ. երորդ յորս երկուն» մի խորանով բոլորովին նման «կանոն տասներորդ» ին. միայն առաջինը չունի աջ կողմի կողովը.

տասներորդի դերանի վերայ գրուած է. «Ած. ողորմեա ստացողի սորա եւ մեզ», ներքեի դերանի վերայ. «Տր. Ած. ողորմեայ Իգնատիոսի: ամէն»: Կողովի մէջ կարմիր զնդակներ (խնձոր, նուռ): Խորանի տարածութիւնը ցօղունների հիւսուած է մէջտեղում տերեւ, իսկ շրջանակը կանաչ և կարմիր զոյներով մէջը զարդարուն եռանկիւնների շարք է. ճակատի կեդրոնում մէկը հիւսուածքի զարդ, իսկ տասներորդինը հնգատերեւ, տերեւների միացման տեղում կարմիր զնդակով:

Կանոնների զարդագրութիւնը վերջաւորում է գեղեցիկ ձևակերպուած մի խաչով, եռամասնեայ կամարի վերայ կադմուած խորանով, որ հաստատուած է երկու սիւնների վերայ (պատկ. 15): Այս եւ

միւս սիւները, ինչպէս և եռամասնեայ կամարը, երեան են գալիս մեր ճարտարապետութեան և մանրանկարչութեան մէջ ԺԱ. դարից սկսած. մեր խորանների օրինակն էլ իւր ամբողջական ձևակերպութեամբ այդ դարի հետ պիտի կապուած լինի, թէև մի քանի մոտիւններ՝ կողովներն ու ոճաւորած թռչունները աւելի վաղ՝ ասորական և սասանեան աւանդներ են մատնանշում: Խաչը հաստատուած քառանկիւնի պատշաճանգանի վերայ, որ զարդարուած է բուսական օրնամենտով. երկու կողմից գեղեցիկ աշտանակների վերայ հաստատուած վառուոդ, զարդարուն մոմերով: Ներքեի տախտակի վերայ եղած յիշատակութիւնը նկարչի անուան՝ տեսանք վերև:



ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

(ԳԵՏԱՇԷՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ)



Հաղբատը մէկն է Հայոց ամենանշանաւոր վանքերից եւ հոգեւոր կեդրոններից. ծագմամբ ունինք շատ աւելի հնագոյն վանքեր, բայց քչերը դրանցից կատարել են այնպիսի երկարատեւ և կարևոր դեր, ինչպէս Հաղբատն է: Նա նշանաւոր է նախ իրրեւ ճարտարապետական արուեստի մի թանգարան իւր բազմազան շէնքերով, արձանադրութիւններով, ֆիզուրատիւ եւ զարդերի քանդակներով. նշանաւոր է իւրեւ հոգեւոր կեդրոն իւր արքեպիսկոպոսութեամբ, որ ԺԲ. դարից կարևոր դեր է կատարել մեր եկեղեցական պատմութեան մէջ, յատկապէս մինչև ԺԳ. դարի վերջերը: Բայց ոչ պակաս նշանաւոր է նաև իրրեւ մատենադրութեան եւ գրչութեան արուեստի գլխաւոր կեդրոն արեւելեան Հայաստանի մէջ: Մտադիր չլինելով այստեղ տալ նորա կատարած դերի յիշ պատկերը, առաջարկում ենք միայն այդ դպրոցի մի գլուխ գործոցի՝ «Իեռաշէնի աւետարանի» ուսումնասիրութիւնը (*):

Ա.

Աւետարանը մեծադիր է, կազմը 30×23 սմ. մեծութեամբ, կաշեպատ տախտակով, առաջին երեսի զարդարանքը արծաթի բեւեռներով քառանկիւնու մէջ՝ նման բեւեռներից կազմուած մի խաչ մէջտեղում. թեւերի ծայրերը երեք երեք բեւեռներով: Միւս երեսի զարդարանքն ընկած է:

Նիւթը՝ հաստ մազաղաթ հորթի կաշուց՝ 30×22 սմ. մեծութեամբ:

Գիրը՝ բոլորաձև, միջին երկաթագիր, երկսիւն, $21 \times 6 \frac{1}{2}$ սմ., ներքևի տնահամարներն էլ հետը. տնահամարները փոքր երկաթագրով, ինչպէս և գրչի ձեռքով կա-

տարուած սրբագրութիւններն ու լրացումները: Տողերը մի գծով, որոնց վերայ դէպի վեր շարուած են տառերը. տնահամարների գծերը աւելի նեղ: Գրերն ընդհանուր առմամբ բոլորաձև լինելով՝ մի քանի տառերի գծից ցած վերջաւորութիւնները քիչ սրածայր են՝ փ. ք. հ. բառերի մէջ, իսկ միւսներից՝ բ. գ. ի. խ. կ. պ. տների սկզբում իրրեւ գլխատառեր: Մանրանկարչական սառնեղով են սկսուած մեծ հատուածները, հազուագիւտ դէպքում գլխատառին կցուած է մի արմաւենիկի զարդ, դէպի լուստոնքն ուղղուած, որ, հաւանօրէն, նկարիչն է աւելացրել և ոչ գրութեան հետ նկարուած: Ոսկի քիչ է գործադրուած բնագրի մէջ. հատուածների առաջին տողը, երբեմն, կամ առաջին մեծ տառը ոսկեով, գործադրուածն էլ փոշոսկի է, այժմ արդէն փայլը կորցրած: Ոսկու փոխարէն մեծ հատուածի առաջին տողում գործադրուած է պարզ կարմիրը, բայց երբեմն և ոսկու փոշով ծածկուած:

Գրիչն է Յակովբ, իսկ սրբագրողը կամ ուղղողը Մխիթար Քոյրայրեցի (2-ում Քոյրարեցի, 61 ա.), որ լրացումներ ունի բոլորգրով, բառեր կամ փոքրիկ բաց թողած նախադասութիւններ: Գրչութեան տեղը Հաղբատն է եւ ժամանակը 1211 թ.: Նկարիչն է Մարգարէ և կազմուած է Հոռոմոսի վանքում «հրամանաւ հաւր Մխիթարայ»: Ստացողն է Սահակ կրաւնաւոր և յետին քահանայ՝ «աշակերտ սր. ուխտիս Հաղբատայ աղգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնուոյ»:

Բ.

Ձեռագիրը բազմաթիւ յիշատակարաններ ունի, որ մէջ ենք բերում իրրեւ նիւթ Ձեռագրի ծագման եւ պատմութեան համար, զաստուրելով ժամանակագրական

(*) Բերուած է մեր ձեռքով, այժմ էջմիածնի մատենադարանում:

կարգով, ըստ հնարաւորութեան եւ ան-
թուականները:

1. 348 ա. Ածեղէն եւ լուսաւոր մա-
տենագրութիւն չորից աւետարանչաց հա-
մարարբառ եւ զուգապէս միաւորութիւն,
զոր նկարագրելին վս. տնաւրէնութեան
բանին այ., ըստ քառահոլով վտակացն
աղինա աղբերաբար գետահետեալ, ոռոգե-
լով զանդաստանս մտաց հաւատացելոց ի
քս., որով հատարելորդ եւ բովանդակապէս,
որքան կամ եղեւ հոգւոյն սրբոյ զամենայն
խորհուրդ, զծածուկսն եւ զյայտնիսն ար-
ձանացուցին, տալով եկեղեցւոյ աւանդ
ածատուր զբարձրագոյնսն եւ զխոնարհսն
տընաւրինաբար խառնմամբ, զոր ընկալ-
եալ ի վերուստ յայտնութենէն զրեցին ա-
ռանձնապէս եւ զուգաբարբառ, որպէս զի
յանցնիւրսն ժամանակ անթերի եւ տննիւզ
բազմապատիկ եւ զանազան երախտեացն
այ. լիցի առ մեզ յիշատակ մինչ ի վախ-
ճան:

Որում այսպիսւոյ յոքնապատիկ բար-
եաց բաղձացող եղեալ իմ ամենանուա-
տի եւ տրուպ սպասաւորի տան այ. Սա-
348 բ. հակ կրաւնաւորի(*) | եւ յետին քահա-
նայի, որ էի աշակերտ սբ. ուխտիս Հաղ-
բատայ աղգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրա-
քաղաքէն յԱնուոյ, սնեալ ի սրբաբան ուխ-
տիս ի Հաղբատ, ստացայ զսբ. աւետա-
րանս իմովք արգեամբք առ ի յիշատակ
ապագայից ինձ նուաստիս Սահակայ եւ
ծնողացն իմոց Ռովմանոսին եւ Կատային՝
եւ երկուց հարազատ եղբարցն իմոց Իպա-
տոսին եւ Առաքելին, եւ իւրեանցն զաւա-
կաց, եւ քերցն իմոց եւ զաւակացն նո-
ցուն, եւ աղգայնեացն ամենից կենդանեաց
եւ մեռելոց: Եւ ետու զծագրել զսա եւ
կաղմել ներքոյ եւ արտաքոյ յաւրինուա-
ծով ըստ իմում կարի, մեծաւ յուսով եւ
կատարեալ սիրով: Որ եւ աղերսական մաղ-
թանաւք հայցեմ ի սիրողացդ այ., որք
ժառանգորդք էք սրբոյ եկեղեցւոյ եւ սպա-
սաւորք տրուենան խորհրդոյն, յորժամ
առնուք զսա ի ձեռս ձեր, զիս զՍահակս

ստացող սորա, եւ զվերողրեալ ծնաւդսն
իմ եւ զեղբայրսն՝ եւ զՍարգիս հոգեւոր
ծնողն իմ: զՅակովբոսն եւ զՎարդն: Որ-
պէս զի ձերոյին սբ. աղաւթիւքդ արժա-
նասցուք հանդիպել ի դէպ ժամանակի
հանդերձելոցն բարեաց(*) | պատրաստե- 351 ա
լոցն ի քս. սիրելեաց անուանն իւրոյ:

Եւ արդ զրեցաւ սա եւ ծաղկեալ կաղ-
մեցաւ յամի յորում էր թիւ համարոյն
թուականութեանս Հայոց հարիւրոց վեցից
եւ նոյնքանեաց տասանց: Իսկ նորոյ շըր-
ջանի միոյ հարիւրոյ քսան եւ ութեակ
թուով: Ի սբ. ուխտս Հաղբատայ զծագրե-
ցաւ ձեռամբ Յակովբայ յառաջնորդութեան
տն. Յոհաննիսի սրբասիրի, ի թաղաւո-
րութեանն Հայոց արեւմտայինն կողման
Լեոնի քսոսէր թագաւորի, եւ ի սպարա-
պետութեան Զաքարիայ շահնշահի, յորոց
յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց
ած. յաղթութիւն ի բազում տեղիս, զորմէ
այլք պատմեսցեն զայլ ինչ. եւ մեզ վասն զի
խնդիր է առ սրբութիւնդ ձեր մատուցա-
նել մաղթանս ողբհեծ պաղատանաւք, ո'վ
լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Ար-
ջուառձի, առ որ զյոյս հաւատոյ մեր
եղեալ զբովանդակ զոյք ծնողաց մերոց եւ
եղբարց ծախեցաք եւ շինեցաք զածարնակ
սբ. եկեղեցիքս, եւ աւանդեցաք զսբ. ա-
ւետարանս յայ. սբ. եկեղեցիքս, որ շի-
նեցաւ ի մէջ ի վանս Առջուառձի: Որպէս
զի սբ. եկեղեցեաւս եւ սբ. աւետարանաւս
մեք եւ ծնաւդն մեր, եւ եղբարք եւ
աղականք գտցուք | ողորմութիւն ի քէ. 351 բ
այ. մերոյ ի մեծ եւ ի սոսկալի աւուրն
դատաստանի: Եւ որք յիշէք զմեզ բարե-
մտաբար, գտջիք եւ դուք ողորմութիւն
յամենեցունց տրարչէն, որ է աւրհնեալ
յաւիտեանս ամէն:

Հրամանաւ հաւր Մխիթարայ կաղմե-
ցաւ ի վանքս Հոռոմոսի որոյ ողորմեսցի
քս. ած.:

Զկաղմող սորին զԱրքահամ եւ զնկարիչ
սորին զՄարգարէն եւ զողորմութեան խըն-
դրող զՅով. յիշեալիք յաղաւթս վս. տն.
աղաչեմք:

(*) Յիշատակարանի այս առաջին երեսը դը-
րուած է երկաթագրին մօտ արեւելեան բոլոր-
գրով, իսկ այնուհետեւ մինչեւ վերջը բոլորգրով,
բայց ոչ կրիկեան:

(*) Յիշատակարանի մէջ, ներկայ կաղմի ժա-
մանակ մտած է երկու թերթից բաղկացած մի
այլ յիշատակարան 349 ա — 350 բ, որ կը տե-
սենք քիչ յետոյ:

2. 111 բ. Մատթէոսի վերջում, ուղ-
ղանկին երկաթագրով:

Սբ. առաքեալ և աւետարանիչ բանին
հաւր, ի քոյդ ապաւինեալ բարեխաւսութի.
աղքատս և մեղաւոր արեղայս Մարգարէս
նկարող սորին, որպէս զի ողորմեսցիս ինձ,
նաեւ Սահակայ ստացողի, և ևղբաւր իւ-
րում Իպատոսին, որ կիսաւրեա ել յաշ-
խարհէս: Ով զմեզ աղաթիւք յիշէ. ած.
զինքն յիշէ:

3. 111 բ. Նոյն գրով և թանաքով:

Տր. ած. ողորմեա Սարգսի կուսակրաւն
քահանայի և ևղբաւր իւրում Շահերոյն և
ծնաւդաց իւրեանց ամէն:

4. 173 ա. Մեծ երկաթագրով:

Յակովբ գրիչ յիշեցէք ի ար.:

5. 173 բ. Մարկոսի վերջում Նոյն Մար-
գարէի ձեռքով:

Տր. ած. ողորմեա Սահակայ ստացողի
և ծնաւդաց իւրոց և ևղբարց, և արայ
զնոսա հաղորդս քո սրբոցն պսակի: ամէն:

6. 267 բ. Ղուկասի վերջում Նոյն Մար-
գարէի ձեռքով:

Յիշեա քս. ած. յողորմութե. չում
զՍահակ ստացող սբ. աւետարանիս, և
զծնաւդան իւր զեղբայրսն և զքոյրսն զՌի-
մանոսն և զԿատայն, զԻպատոսն և զԱռաք-
եալն, զԶարհայն և զՀոռոմաիկին, և արայ
զնոսա քո սրբոցն զպսակից և սնակակից:
ամէն:

Նա(եւ) զՎարդն և զՅակովբոսն և
զծնաւդան նոցա և զամենայն ընդոնիսն:

7. 347 բ. Յովհաննու վերջում, բուն
գրչի ձեռքով, բնագրի գրով և թանաքով:

Փառք բոլորից հաստչի համապատիւ
սուրբ երրորդութեանն յաւիտեանս:

Աւրհնութի. որ կարգա

գովութի. որ լսէ

փառք շնորհաւորին

և յիշատակ գրչիս:

Տր. ած. ամենակալ նորոգեա իկեանս ան-
ծերանալիս զՍահակ ստացաւ սբ. աւե-
տարանիս ANEH: Ամէն,

Բայցի այս իսկական յիշատակարաննե-
րից կան և փոքրիկ նկատողութիւններ խո-
րանների գերանների վերայ կամ բնագրի
լուսանցքներում, որոնք ձեռագրի ծագ-

ման պատմութեան համար նշանակութիւն
ունին:

8. 10 ա. Խորանի վերին, կապոյտ շըր-
ջանակի վերայ սպիտակ զեղաղիր երկա-
թագրով:

. . . (Տր.) Ած. ողորմեա Առաքել. (ին
ամ) էն

նոյն խորանի սիւներին ձգուած կապոյտ
գերանի վերայ, դարձեալ սպիտակագոյն
երկաթագրով:

Ած. գթայ ի հոգի Ռիմանոսին ծառայի
քո ամէն:

— Նոյն խորանի յատակ կազմող կար-
միր գերանի վերայ, ոսկեգոյն գրով:

Հոգի ած. գթայ ի հոգին Իպատոսին
ծառա. . . :

9. 11 ա. Խորանի ճակատի կապոյտ
շրջանակի վերայ:

Տր. յս. ողորմեա Սահակա ամէն:

Սիւների զլիսի կապոյտ գերանի վերայ:

Ած. իմ յս. ողորմեա մեղուցեալ ողոյս
ամէն:

10. 15 ա. Խորանադարդի տակը ներ-
քեի լուսանցքում, փոքր երկաթագրով:

Տր. ած. ողորմեա Մարգարէին, գրչի
և նկարչի և Սահակա ստացողի, և ծնաւ-
դաց իւրեանց, ամէն:

11. 175 ա. Ղուկասի սկզբնադարդի
լուսանցքում խոշոր, կարմրադեղ ծաղկա-
գրերով, (սրահեր 7).

Սահակայ է գիրքս ի վերկութի.:

Սրանք են այն յիշատակարանները, ո-
րոնք կապուած են Ձեռագրի ծագման հետ:

Պ.

Բայց աւելորդ չենք համարում մէջ
բերել և այն յիշատակարանները, որոնք
Ձեռագրի յետագայ պատմութեանն են վե-
րաբերում:

12. 349 ա. Խոշոր բոլորգիր, միջին
երկաթագրի մեծութեամբ:

Սիրոյ զաւրութիւն գերազանց է քան
զընութիւն և բարեխորհ արանց անյազա-
պէս առ ի բարին զնթացս(?) որ առ ած.,
մանաւանդ առ որ ածայինն զաւրանայ
գիտութիւն և բաց և սրահաց ունի զհոգոյն

տեսութիւն: արհամարհելով զանցաւոր եւ զապականացու կեանս, որպէս աստանաւր տեսաք, յորս ածայնոյն գտաւ բարոյն տեսութիւն առանց դանդաղանաց, որպէս սիրեցեալս յայ. եւ յածայնոցս Սարգիս քահանայ, սնեալ սրբութեամբ ի մէջ եկե-
 349 բ. ղեցոյ եւ զարգացեալ ի մէջ իմաստ | (ուն)(*) եւ հոգեւոր արանց ըստացաւ զկենսաբեր աւետարանս, զոր քառայոյով վտակաւքն արբուցանէ զտիեզերս, գանձ անպակաս յերկինս եւ յիշատակ յաւիտենից ըստ գրեցելումն, թիւ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանիք իցեն նորայ յեմ.:

Արդ երանելիս Սարգիս իբրեւ զիմաստուն վաճառական ի խնդիր եղեալ պատուական մարգարտին եւ գտեալ զսալի գաւառին Անոյ մեծայծալս, ոսկեզիր եւ ոսկեհաճանչ ծաղկաւք զարդարեալ, ըստացաւ զսա ի հալալ (ըն)չից (*) իւրոց ի բուրխալ աւս հոգոյ իւր առ քս. եւ յիշատ(ակ յաւ)իտենական (**) ծնաւդաց իւրոց եւ (ըն)ծայեաց (**) զսա Մեծ կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան: Եւ ի տարոջն: Բ: աւր ժամ նմայ յիշատակ կատարեն սրբոյն Սարգսի տաւնին. որ խափանէ, նորա ազգի յանցանացն պարտական եղիցի. եւ որ զայս աւետարանս ի յեպիսկոպոսարանէս հանել ջանայ ի յառաջնորդաց եւ կամ յիշխանաց, հանել եղիցի նա յարքայութենէն այ., եւ որոշեալ հոգով եւ մարմնով ի սր. երորդութենէն եւ նշովեալ եղիցի: ՅԺԸ. Հայրապետէն: Ընծայեցաւ կենսայ | (բ)ր աւետարանս սուրբ Դրիգորիս: Ի թուականութեանս: ՈՀԲ. ի յիշխանութեանս հզաւրին Հասանայ որդոյ Վախտանգայ, եւ հայրապետութեանս տն. Յոհաննիսի: Արդ որք ընթեռնոյք եւ լուսաւորէք կամ զազափար առնոյք, զՍարգիս եւ զՄիսիթար որ գնեաց եւ երեւ զաւետարանս, յիշեցէք ի սրբափայլ եւ ընդունակ յաղաթս ձեր, եւ (***) քս. ած. յիշաւդացդ եւ յիշեցելոցդ ողորմեսցի յիւրում զալըստեան եւ յապագայի աւուրն ամէն:

(*) Փնացած են եւ չեն կարդացուած փակագծի մէջ առնուածները, լրացնում ենք:

(**) Կտրուած է թերթի ծայրը, լրացնում ենք:

(***) Այստեղից մինչև պարբերութեան վերջը նոյն թանաքով եւ հաւանորէն նոյն գրչի ձեռքով, երկաթագիր է:

Չսակաւ աշխատողս յիշեցէք ի տր. աղաչեմ:

13. 351 բ. Տարբեր գրիչ, բոլորգրով. Կամաւ ամենակալին այ. ես տր. Վանական գտի հնացել եւ աւերել զսր. աւետարանս եւ ետու վերստին նորոգել ի յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց եւ եղբարց, զի որք հանդիպիք կամ ընթեռնուք մեղաց մերոց թողութի. հայեցեցէք ի քէ. որ է աւրհնել յաւիտեանս ամէն:

(Մէկ ու կէս տող բաց եւ ապա դարձեալ նոյն գրով) եւ զիս զբաղմամեղ կողմիչ զՍտեփաննոս սուտանուն քահանայաղաթս յիշեցէք:

14. 174 բ. ՉՍաղմոսիկ քհն. եւ զիւր աւագ որդին Մուսայէլ եւ զՍաղաղիէն եւ զմայրն մեր Դոլ խաթուն եւ զհարսն իւր Հոռմսիմայն եւ զիւր ամ. արեան մերձաւորսն յիշեցէք ի քս. եւ ած. զձեզ յիշէ իւր միւսանդամ զայլստեանն ամէն. եւ գեռայրուսիկ սարկաւազն մեր Պէկնիէն:

15. 112 ա. Մատթէոսի վերջում, բոլորգիր.

Ես անարժան ծառայս այ. Մովսէս քահ. յետոյ կազմեցի եւ նորոգեցի յիշատակ հոգոյ իմոյ, եւ մարմնոյս իմոյ եւ ամ. արեան մերձաւորաց իմոց որ ի քս. են հանգուցեալ, աղաչեմք զձեզ ով զասք լուսեւրամից, յորժամ հանդիպիք յայսմ սր. աւետարանիս, յիշեցէք զիս զՄովսէս քհ. եւ զհայրն իմ զՍաղմոսի քհ., եւ զմայրն իմ զՏիկին, զեղբայրն իմ զՏօնիկ եւ զաւակին իմոյ Վարդանայ եւ զմայր սորին զՇահարիկ:

Յերես անկեալ աղաչեմ զձեզ, ով զասք լուսեւրամից եւ մանկունք եկեղեցւոյ, յորժամ կարգայք կամ օրինակելով ջանայք, յիշեցէք զիս զՄովսէս քահայս. եւ ած. որ առատ է ի տուրս բարիս, պարգեւեսցէ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի: Ի թվ. որ կազմեցաւ սր. աւետարանս ձեռամբ անարժան ծառալիս այ. Սարգսիս յիշեցէք ի քս.: ՊԼԲ-ն. էր մեհեկի ամսի ԻԶ-ն էր որ կազմեցաւ: Որ է սր. աւետարանս Մեծակողմանց Խաչինոյ եպիսկոպոսարանէն մայրաքաղաղէն իշխանութ. պարոն Ջալալին եպսութբ. տր. Դրիգորին Դեռաքարեցին: Ով որ կտրելով

ջանայ կամ հանելով ի հայրանական (?) անթուոյն, նոյնպէս ինքն ի քսէ. կտրեալ և հեռացեալ ամէն:

16. 111 բ. Շեղագրին մօտ բոլորգրով.

Յանուն յայ. (?) ևս Ովանէս ու կողակիցս իմ Թանգուղ տվինք մեր աւթարուք. զմեր որդիս Մարգարէ հոգոյ որդի Մովէս(?) քհն. մինչև մահն որ երէց առնէ վկայուք. Արուկանայ Ալիիկայ որդոյ, Բեկիկայ Խոչոտայ Լարեցի. զինչ մդ. որ զայս բանս խաբանէ: ՅԺԸ: հյ. կապ. ի թվ. 912.:

Ես Խաչատուր երէցս վկայ, որ զգիրս գրեցի:

17. 111 բ. Անվարժ շեղագրով.

Յանուն այ. ևս Սարխուժա Մայլիքայ որդի միաբանեցայ սբ. աւետարանիս ու տուի զիմ աղջկիս զԷսան Մուսէս իրիցոյ, ով խաբանէ դատի այ. ով կարդէք լի բերանով ասացէք, ամ. ողորմի Մայլիքայ ամէն. զԱրուժէն պահեսցի խորին ծերութենն:

18. 173 բ. Մարկոսի վերջում, բոլորգրով.

Բարէխաւսութիւն. սբ. ամածնին ևս սբ. կենսատու խաչին թողցէ զանցանա պարոն Ուլուխաթունին, զնեղելին և զանաներելին, զկամային և զանկամային:

Ձի յոյժ հնացեալ էր սբ. աւետարանս ևս ևս նորոգել զսա ի ժամանակիս, որ է Մատթան ևին Թավրէզ: Թվ. 200. և որ հանդիպիք, յիշէք զպրն. Ուլուխաթուն և զիւր ծնաւդսն. և ամ. ողորմի ա(սա)ցէք նոց.

Եւ զիս զչեմ արժան ծառայս զՏիրաւաքս յաղաթս յիշեցէք և իշողքդ արժանի լիցիք արքայութենն այ.:

Յիշեցէք և զՇահրիարն և զամ. արեան մերձաւորն իւր:

19. 112 ա. Ես Շնահաւորիկս միաբանեցայ սբ. ուխտիս Մեծ կողմանց անթուոյս, յաղաթս յիշեցէք ևս յետ կատարման իմոյ հանգիստ իմ աստ լիցի:

Պ.

Այժմ անցնինք մանրանկարչութեան նկարագրութեան. սկզբում 6 բ — 7 ա, 8 բ — 9 ա, 10 բ — 11 ա, 12 բ — 13 ա,


14 բ — 15 ա, խորաններն են, կամար ևս կոչուած յունարէն *καμάρα* բառի փոխանութեամբ: Առաջին զոյգը վերից վար ևս իրար կցուած երեք կիսաշրջանակներ են, որոնց միջի տարածութեան վերայ գրուած է Եւսերիոսի և Կարպիանոսի թղթակցութիւնը: Կիսաշրջանները անմիջապէս եզերող շրջանակները կապոյտ են, երկու ոսկեգծերի մէջ, շրջափակուած կարմրագիծ մի քառանկիւնում: Այս քառանկիւնու և կիսաշրջանների մէջ եղած տարածութիւնը ծածկուած է կանաչ եւ կապոյտ աղււսանման զարդերով, իրարից բաժանուած ոսկեգծերով: Այս քառանկիւնին շրջանակուած է դարձեալ մի աւելի մեծ քառանկիւնի եզերազարդով, որի մոտիւններն են մէջ ընդ մէջ եռատերեւի և հնգատերեւի մի շարք, կապուած իրար հետ ցօղուններով, եռատերեւները բոլորակի մէջ, իսկ հնգատերեւները ներքեւից փոքրիկ աղեղներով կապուած նրանց հետ: Եռատերեւների ներքեւի զոյգ թերթերը կապոյտ են, եզերուած սպիտակով, իսկ վերեւի տերեւը, որ բարձրանում է երկուսի միջից, կանաչ տերեւների համան երկու անկիւններում մի մի կարմիր գնդակ: Հնգատերեւի ներքեւի զոյգը ըստ ամենայնի նման եռատերեւի ներքեւի զոյգ տերեւներին, իսկ նրանցից ծլած կանաչ տերեւները սրածայր. երկու կանաչ տերեւի մէջ տեղում մի կարմիր տերեւ: Շրջանակի ձախ թեւի մէջ տեղում մի վարդեակ, կանաչ եւ կապոյտ տերեւներով, պորտում կարմիր գնդակ: Վերեւի անկիւններում մի մի երկար և ոճաւորած հնգատերեւով զարդ. ներքեւի տերեւները կապոյտ, միջինները կանաչ, իսկ ծայրինը կարմիր, տերեւների համան տեղերում մի մի կարմիր գնդակ: Ճակատի զարդը կապուած է տրամաւենիկից: Բոլորովին այն կազմութիւնն ունի և 7 ա., միայն այս տեղ աղււսածե զարդերը անկիւնից անկիւն կտրուած, խաչածեւ թեք գծերով, հուպ տուած քառանկիւններին մէջ: Ներքեւի լուսանցքի եզերազարդն էլ ցօղունների հիւսուածք է: Արտաքին շրջանակների երկիրը ծածկուած ոսկեփոշով, բայց արդէն զուենատուած և մասամբ թափուած:

Աւելի հետաքրքրական են 8 բ — 9 ա, իրար նմանութիւն բերող խորանները, (*սրահներ* 1), իւրաքանչիւրը 21×14 սմ.

մեծութեամբ, բուն խորաններից չափուած, Տբ-ի լիւնետի մէջ «Կանոն Ա. յորս ըստ նոսին ածան չորեքին. ածան Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս», իսկ Զա. «Կանոն բ: յորս երեքն Մաթէոս, Մարկոս, Ղուկաս» գրուած: Առաջին խորանը հաստատուած է երեք սեան վրայ, խարիսխների տակ մի գերանածեւ՝ զարդարուած երկարածիգ օղակների շղթայով. խարիսխի յատակն աւելի լայն է, տափակ եւ իրար վերայ դրուած պլիտաներով, ներքեւից վեր հետզհետէ նեղանալով. վերջին օղակածեւ պլիտայի վերայ բարձրանում է սեան

մից բարակ եւ հանդուցաւոր գծով, իսկ միջին տարածութիւնը ծածկուած է զոյգ պարանների հիւսուածքով, պտոյտների մէջ մի մի կարմիր գնդակով: Մէջ տեղի սեան գլխին լիւնետն է երեքքառորդական կամարի տակ. կամարի ճակատը զարդարուած եռատերեւի եւ հնգատերեւի իրար յաջորդող շարքով:

Բուն խորանը քառանկիւնի է, որի ներքեւի շրջանակը սիւների վերայ ընկած գերանն է, իսկ երեք կողքերից կապոյտ ֆոնի վերայ արմաւենիկի եռաճիւղերով զարդեր: Քառանկիւնու անկիւններում



(պատկեր 1)

բունը, ոչ բոլորակ, այլ տափակ երեսով, ուրեմն քառանկիւնի, միջին մասում հիւսկէն զարդով: Ոռնակի յատակը դարձեալ տափակ է, իսկ բուն զարդը իրար կպած երկու նշատերեւ, ծայրերը հակառակ ուղղութեամբ, որոնց վերայ դրուած է երկրորդ պլիտան իբրեւ հիմք սիւների վերայ ձգուած գերանի: Միջին սեան բուն խոյակը գնդակած է, երկու պլիտայի մէջ, իսկ խարիսխն էլ իւր վերին մասում օղակով չէ փակուած, այլ բունը խորուած է պարզ և տափակ պլիտայի մէջ: Սիւների գլխին ձգուած է գերանը, եզերուած երկու կող-

ներսից՝ մի մի վէյերածեւ զարդ կայ, մէկն էլ ճակատում, որտեղից երկու ճառագայթաշերտեր ուղղուած են դէպի ներքեւի անկիւնները, եզերուած կապոյտ գծերով, իսկ նրանց միջին տարածութիւնը ոսկի ֆոնի վերայ պարանահիւսի ոլորապտոյտով զարդարուած: Նման մի մի ճառագայթ էլ վերեւի անկիւններից ուղղուած են դէպի լիւնետը: Ճակատի զարդը քառանկիւնից դուրս մի հնգատերեւ է, երեք կարմիր գնդակներով, առնուած բոլորակի մէջ, իսկ շուրջը արմաւենիկի կանաչ տերեւներով զարդարուած: Վերին անկիւնների զարդերն էլ,

դրսից, արմաւենիկի եռատերեւ է, միջինը սուր եւ կարմիր գնդակներով տերեւների հալման տեղերում:

Բայց աւելի ուշադրութեան արժանին արտաքին լուսանցքի (Տբ.) երկու մարդկային ֆիգուրներն են (սրահեր 1). մէկը ներքեւի, միւսը վերեւի գերանի վերայ կանգնած: Դոցանից ներքեւինը, 11 սմ. մեծութեամբ, հագած է երկար պարեգօտ, մէջքում գօտեօրած, թէւ չի երևում այն հագուստի ծալքի տակ ծածկուած լինելով: Հագուստի բուն գոյնը դորշ դեղին է, բայց զարդարուած երկու՝ կարմիր, վերան սեւագիծ զարդերով ծածկուած՝ ժապաւէնով, որ գօտկատեղից մինչեւ քղանցքի ծայրն է հասնում, իբրեւ հագուստի անմիջական մաս եւ ոչ ազատ, եղերուած սեւ գծերով: Հագուստի ծալքերը յետեւի կողմից ձեւակերպուած են շնորհալի կերպով, սեւ ու դորշ գծիկներով: Գօտկից բարձր նոյնպէս երեւում են կարմիր ժապաւէնաձեւ զարդերը, որ ուսի վերայից աջից ձախ կտրում է կուրծքը եւ ապա կողքից իջնում մինչեւ գօտին, որ հագուստի բացուածքի եւ կոճկուելու ուղղութիւնն է ցոյց տալիս: Նոյն ժապաւէնաձեւ զարդը տեսնում ենք եւ թեւերի վերայ, որ իշխանական ծագման նշանն էր հին ժամանակում, յետագայում դառնալով ընդհանուր զարդ: Ուսերի վերայից նոյնպէս երեւում է այդ կարմիր կտորը, բայց առանց գծազարդերի, եղերուած միայն սեւ գծով: Կուրծքը եւ թեւերի վերին մասը բուն հագուստի կտորից է, բայց ասեղնեգործուած բուսական զարդերով: Գլխին դրել է բարձր սեւ երկճիւղ գլխարկ. ճակատը, ինչպէս բաժանուած մասերը ներսից, զարդարուն. գլխարկի յետեւի մասի (ճիւղի) գլխին մի ցցուն զարդով: Գլխարկի, ինչպէս եւ հագուստի ընդհանուր ձեւակերպութիւնը նման Զաքարէ եւ Իւանէ սպասաւարների պատկերաքանդակին՝ Հռոմէոյ վանքի արեւելեան պատին (տ. մեր Խաղբակեանք կամ Պոռնեանք աշխատութեան շապիկը):

Դէմքն առանց մտքերի, բոլորակ, քիթը, աչքերն ու յոնքերը գեղեցիկ ձեւակերպուած: Ծակատի վերայ գլխարկի տակից երևում են գանգուրների երկու փունջ, իսկ կուրծքի վերայ իջնում են երկու սեւ ժապաւէններ, որոնցմով կապուած են յե-

տեւից, կարծում ենք, մազերը. այս երեւոյթը նկատելի է եւ լուսանցքի միւս ֆիգուրների նկատմամբ, որոնց մասին խօսք կ'լինի. մանաւանդ, որ մազերը չազանակագոյն են, իսկ երկու ժապաւէնները սեւ: Թեւերը վերջանում են նեղ եւ կարմիր բազալանով, որ նոյնն է, ինչ որ միւս մասերում տեսանք: Զախ ձեռքում բռնած է զարդարուն եւ ծոպաւոր սրբիչ մը կամ թաշկինակ. այս միւս նոյնը նկատելի է նաեւ վերեւի պատկերի մէջ, նաեւ կիլիկեան չըրջանի արքայական պատկերներում: Աջ ձեռքով բռնած ուսին է դրել մի կեռագլուխ փայտ, կեռից մի ձուկ կախուած. փայտը կարմիր է, ուրեմն, ներկուած: Վերեւը գրուած է փոքր երկաթագրով. «Շերենիկ քանի գաս ձուկն բեր»:

Կոշիկները երկու գլխաւոր գոյն ունին, կարմիրն ու դեղնաւունը. ճիտկի առաջին մասը կարմիր է, իսկ յետեւինը դեղնաւուն, սեւ գծով ստուերած. ճիտկերի վերեւի մասում կապերն էին, որոնց սեւ ծոպերը կախուած են ճիտկերի յետեւի կողմից: Ոտքերի մասը դեղնաւուն է, իսկ կրունկը մինչեւ ուղքները կարմիր, դարձեալ սեւ գծերով իրարից բաժանուած: Կոշիկները կրունկ չունին, որի նմանը գործածական է մինչեւ այժմ էլ Վրաստանում: Անդրվարտիկը, բնականաբար, չի երևում, անցրած էր ճիտկինի մէջ:

Պարանոցի տակ երևում է սպիտակ շապիկը, պարանոցի եւ կուրծքի բացուածքները եղերուած սեւ գծերով:

Վերեւի պատկերի, տաս սանտիմետր մեծութեամբ, հանդերձանքը փոքր ինչ տարբեր է նախընթացից. գլխարկն այստեղ պարսկական, բարձր արագչինի ձեւ ունի. ներքինի մասում դէպի դուրս ծալուած, բայց ոչ բոլորաձեւ եւ հաւասար, այլ կողքերն աւելի բարձր, համեմատաբար. միջին մասը վեր է բարձրանում գմբեթաձեւ, բայց բոլորակ վերջաւորութեամբ, գագաթին թեթեւ զարդ կամ փունջ կրելով: Վեր բարձրացող մասը երկու կտորից է կարուած, կանաչ վերան սեւ բծերով եւ դորշ կարմրաւուն, որոշուած միմեանցից մի սեւ երիզով. ներքեւի ծալուած մասն էլ կանաչ է, սեւով եղերուած: Սրա մազերը սեւ են, դարձեալ յետեւի կողմից սեւ ժապաւէնով կապուած, որի ծայրերն ուսերի վրայից իջնում են

դէպի կուրծքը: Սա ևս անմորուս պատանի է: Վերնազգեստ նոյն երկար պարեզօտն է, սրանը մինչև ոլոքները հասնող, արմաւենիկը յիշեցնող ծաղիկներով կամ զարդով կամիր ֆոնի վերայ, գօտեորուած: Գօտուց բարձր մասը բացուածք ունի կրծքի վերայ, բացուածքի եզրները ուսերին եւ կրծքին զարդարուն, կանաչ կտորով, որ կարող է և ասեղնեզործութիւն լինել. աւելի հասարակ: Սա ևս թւերի վերայ ասեղնեզործ ժապաւէն ունի: Զախը կողքին դրած, բռնած ունի դարձեալ դարդարուն սրբիչ, առանց ծոպերի, իսկ աջով բռնել է մի կանթով ջրաման, ծայրը սուր և թեքուած լիւլէյին, փորը զարդարուն, իսկ ներքևի մասում ուղղով: Անկրունկ և կարմիր կոշիկների թաթերն են միայն երևում:

9 ա. Խորանը փոքրիկ փոփոխականերով, գրեթէ, նոյն կազմութիւնն ունի, ինչ որ 8 բ., տարբեր են գերանների զարդարանքները, արտաքին սիւնների խարխուլները ձեռով նոյն, միայն չորս աստիճաններով հեռահեռէ նեղանում է վերին մասում և բոլորակով օղաւորում, իսկ ճակատի արտաքին զարդի կողմից երկու գեղեցիկ թըռչուններ կտցահարում են դէպի գետինը: Արտաքին լուսանցքի գերանների վերայ կանգնած են երկու վեղարաւորներ, համապատասխան 8 բ-ի երկու ֆիգուրներին: Վերևի վեղարաւորը, 8 սմ. մեծութեամբ, հագել է մինչև ոտները հասնող կապոյտ կապայ կամ ներքնազգեստ և վերան ձգել շերտաւոր փիլոն, որ առաջի մասում հասնում է մինչև ծնկներից ցած: Ներքնազգեստի թւերը վերջանում են երկուստեք ուղղուած նեղ թեղանիքով: Դէմքը տարաբաղտարար եղծուած է, բայց նկատելի աչքերն ու դիմագծերը. ունի կարճ, սևից գորշին անցնող միրուք. դէմքն ուղղուած է դէպի աջ: Սրածայր, հայկական վեղարը գլխի հետ առնուած է սևով բոլորուած նիմրուսի մէջ, որի ոսկու հետքը միայն նկատելի, իսկ հիմքը կամ աստուղը դեղնաւուն, ձուր շաղախով: Աջ ձեռքին բռնած է պարզ, ոչ օձաղլուխ, հովուական գաւազան, գլխի թւերը դէպի ցած խոնարհած: Գաւազանի ներքևի մասը սրածայր է, խնձորով, մետաղից: Զախ ձեռքում, որ չի երևում, թաշկինակով բռնել

է կարմիր և պարզ կազմով աւետարան, շուրջը սև գծով եղերուած, կաշին էլ գծերով շերտաւորուած. թաշկինակի տակից, վեղարաւորի կապոյտ ներքնազգեստի վերայով, առաջից, ցած են իջնում, երկու, ծոպերով վերջացող չուանաձևեր. արդեօք հիւսուած գօտու վերջաւորութիւններն են. նոյնն ունի և միւս վեղարաւորը: Ոտքերին կարմիր և անկրունկ կոշիկներ ունի, ոտի թաթերն են միայն երևում: Լուսանցքում կողքից գրուած է «Հայր Եղբայրիկ առաջնորդ սբ. ուխտիս (?) յիշ. . . »:

Ներքևի գերանի վերայ կանգնած վեղարաւորը, տաս սանտիմետր մեծութեամբ, նկարուած է ամբողջական դէմքով. հագել է նոյնպէս երկար, մինչև ոտքի թաթերը հասնող, բաց կլինեմոնագոյն ներքնազգեստ-կապայ. վերան ձգել է կապոյտ փիլոն, առաջը բաց. աջում բռնել է երկարակոթ խաչ. ներքևի մասում խնձորով, թւերի, դէպի ծայրերը լայնացող անկիւններում մի մի գնդակ: Զախ ձեռքում, դարձեալ թաշկինակով բռնել է կարմիր կազմով աւետարան: Պարանոցի տակ երևում է սպիտակ շապկի օձիքը, ինչպէս և Եղբայրիկի նկարի մէջ: Դէմքը, խաչը բռնած ձեռքը շատ կանոնաւոր, հասակը համաչափ, ինչպէս Մարգարէ նկարչի միւս պատկերները, որոնց մասին խօսք կ'լինի: Այս վեղարաւորն էլ ունի կարճ, երկճիւղ միրուք, նուրբ բիսեր, բերանը եղերուած կարմիր և կանոնաւոր շրթունքներով, այտերը բնական, կեղրոնը քիչ կարմրաւուն, գեղեցիկ և աղեղ յօնքերով: Վեղարը, գլուխը պարանոցի հետ առնուած է լուսոյ բոլորակ պսակի մէջ, եղերուած սև գծով, յատակը դեղին, ոսկեփոշին թափած, գուցէ և բոլորովին առանց ոսկու, միայն ձուր դեղնուցով: Կողքից գրուած տողից կարդացւում է «կազմիչ սորին եւ հայր . . . ի սմին յիշեսցիք»:

10 բ. — 11 ա խորանները, $20,8 \times 18^{1/2}$ սմ. մեծութեամբ, հաստատուած են երեք երեք սիւնների վերայ. առաջին յատակ կազմող գերանի վերայ գրուած է «հոգի սբ. ած. զթայ ի հոգին Իպատոսին ծառ(այի . . . քո?): Սիւնների կազմութիւնն ու զարդարանքները նման վերևի նկարազրութեան փոփոխականերով. նրանց վերևի գերանի վերան սպիտակադեղով գրուած է.

«տր. (մի քիչ փչացած) Աժ գթայ ի հոգի Ռիմանոսին ծառայի քո տմէն (վերջին բառը կիսով չափ եղծուած)»: Սիւների վերան հաստատուած է քառանկիւնի խորանը, կողքերի շրջանակները արմաւենիկի զարդերով, իսկ վերեւում կապոյտի վերայ սպիտակագեղով գրուած է. «տր. Աժ ուղորմեա Առաքել. . . (ի տմէն?): Խորանի ներքեւի մասն են կազմում կիսաշրջաններից կազմուած զոյգ լիւնեաներ, որոնց զլիսին մի երրորդը երեքքառորդական բուրակով: Վերեւի անկիւններում ներսից՝ մի մի հիւսկէն վարդեակ, իսկ սրանց և լիւնեաների մէջ մի մի եռատերեւ, հպման տեղում կարմիր գնդակ, և առնուած ցօղունների բուրակի մէջ. երեքքառորդական լիւնեաի կեդրոնում դարձեալ մի վարդեակ արմաւենիկի և ցօղունների հիւսկէն զարդերով: Լիւնեաների կամարների տակ գրուած է. «Կանոն Բ. յորս երեքն», միւսում եւս՝ «Կանոն Բ. յորս երեքն»: Արտաքին լուսանցքում երկբուն, կանաչ նոնենու երկու կողմից մի մի արագիլ փաթաթել են պարանոցները ծառին. ռաներն ու կաուցները կարմիր, փետուրները կապոյտ սպիտակով զծաւորուած: Սիւների զլիսի տախտակի վերայ, արտաքին լուսանցքում կանգնած է ռճաւորած մի սիրամարդ, պոչը խիստ վեր ցցած և ծայրից նոնանման զարդ կախուած. ռաքերը, կտուցը և զլիսի զարդը կարմիր, իսկ փետուրները կապոյտ, սպիտակ և մոյգ մանուշակագոյն գծերով: Ճակատի արտաքին զարդը բուսական է, որին դարձած են մի մի աղաւնի, իսկ անկիւններում եռատերեւ յիշեցնող բուսական զարդով:

11բ. Ձեակերպութեամբ նման 10բ-ին, սիւների զարդարի փոքրիկ փոփոխութեամբ: Սիւների զլիսի գերանի վերայ գրուած է. «Աժ իմ Յս. ողորմեա մեղուցեալ ողոյս տմէն». Ճակատի տախտակի վերայ. «Տր. Յս. ողորմեա Սա. . . (հակա, փչացած)»: Արտաքին լուսանցքի նոնենին ռճաւորած արագիլներով և սիրամարդով նման նախընթացին: Ճակատին իրար զիմացի երկու թռչունները զլուխները յետ են դարձրել, պարանոցներին էլ կարմիր մանեակ ունին:

12բ — 13ա. Փեղարուեստական նոր մօտիւններ չեն տալիս, այլ տարբեր ձեակեր-

պութիւններ և զասաւորութիւններ են միայն նախընթաց մօտիւնների: Արտաքին լուսանցքում 12բ. մի ձիթենի ունի, որին փաթաթուել է բերանը բաց և եղջիւրաւոր մի օձ: Իսկ վերին տախտակի վերայ կանգնած է մի ռաքով, միւսը վեր բարձրացած, պարիկ՝ մարդկային զլիսով և թռչունի մարմնով. պոչը ռճաւորած, զլիսին սրածայր, բարձր զլիսարկ, ներքեւի մասը գէպի դուրս ծալուած բուրածեւ: Ճակատին զրսից՝ կեդրոնում՝ արմաւենիկից և եռատերեւից կազմուած մի զարդ, որից նոնենու ճիւղերը տարածուած են աջ և ձախ և երկու կաքաներ կտցահարում են նրանց:


13բ-ի արտաքին լուսանցքում, ներքեւից՝ մի թռչունի կտցից կախուած է բուրվառած անօթ, որ երեւան է գալիս հայհնագոյն և զուտ արեւելեան ծագում ունեցող աւետարանների մէջ. վերեւի տախտակի վերայ գրուած է եռոտանի աշտանակ, հաստ և վառուող մոմով: Ճակատին նոնենու ճիւղերը փռուած են աջ և ձախ, որ կտցահարում են մի մի կաքաւ:

Աւելորդ ենք համարում տալ նաեւ 14բ — 15ա. խորանների մանրամասն նկարագրութիւնը, միայն ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում սիւների կազմութեան վերայ, որ ծագումով փայտից ենք համարում, հակառակ գէպքում անհասկանալի են նրանց զարդարանքները, մանաւանդ բների վերայ: Այստեղ եւս հետաքրքրական են լուսանցքի զարդերը. 14բ-ի ներքեւի գերանի վերայ հաստատուած է ռճաւորած մի նոնենի, բունի ներքեւի մասը մեծ արմաւենիկից կազմուած, որի վերայ կանգնել է մի թռչուն, վիզը բունին փաթաթելով, զլուխը վեր բարձրացրել: Իսկ վերեւի գերանի վերայ կանգնած է մի գեղեցիկ աքաղաղ, գեղեցիկ և ռճաւորած, պոչը ուղիղ վեր բարձրացրած (սրսկեր 2), պարանոցին մանեակ: Իսկ 15բ-ի արտաքին լուսանցքի վերեւի գերանի ծայրին նկարած է մի նոնենի, վերան թռչուն. նոնենու տակ փռուած է ճապաւոր զորդ, վերան երկար և ծայրերը զարդարուն բարձրած, ուր նստած է մի պատանի և նուազում է սազի վերայ: Նա հազել է կապոյտ կտորից, մինչև ծնկները հասնող բաճկոն, թեքը նեղ բաղաւորով, թեք բացուած կրծ-

քի վերայ և երիզուած կարմիր կտորով: Պարանոցի տակ երևում է զարդարուն ներքնազգեստը: Գլխարկը խոր ձևով նման Տր-ի վերին գերանի փարչը ձևովին բըռնած ֆիգուրի գլխարկին (պատկ. 1): Մազերը սև են և յետևից կապուած ժապաւէնի երկու ծայրերն իջած են կրծքի վերայ, ինչպէս լուսանցքի նախընթաց ֆիգուրների վերայ տեսանք:

Ներքեւի գերանի վերայ նկարուած է ծաղկած և և կիսաբաց կողոններով նռնենի, ոճաւորած (*): Ներքեւի լուսանցքում, անմիջապէս խորանի տակ փոքր երկաթազրով «Տր. Աճ ողորմեա Մարգարէին, գրչի և նկարչի. և Սահակա ստացողի և ծնուողաց իւրեանց ամէն»:

ւանդութիւնների հետ են կապուած, նկարչի տաղանդն ու կարողութիւնը բնորոշելու համար առանձին նշանակութիւն ունին 16ր և 17ա մանրանկարները: Առաջինը՝ $24 \times 18 \frac{1}{2}$ սմ. մեծութեամբ, Յիսուսի մուտքն է Երուսաղէմ, բայց ոչ շարունական ձևակերպութեամբ, այլ ինքնուրոյն ստեղծագործութեամբ (պատկեր 3): Երուսաղէմը և տաճարը պատկերաւորած է զմբեթազարդ, երկյարկանի, բարձր շէնքով, պատուած ատամնաւոր պարսպով և մեծ դարպասով, գլխին վանդակազարդ մի պատըշգամբ: Դրան բացուածքը քառանկիւնի է, կամարածև ճակատով, կամարակալ քարի վերայ հաղիւ նկատելի կերպով զրուած. «Եմ. քաղաք»: Դրան, ինչպէս և բացուած-



(պատկեր 2)

Ն.

Խորաններից աւելի, որոնց ձևակերպութիւնն այսպէս թէ այնպէս հնագոյն ա-

(*) Լուսանցքի զարդերի և ֆիգուրների մանրամասնութիւնը տե՛ս և պատկ. 2, միջին շաբլը վերից վար:

քի վերին ճակատը ատամնաւոր զարդ ունին: Պարսպի ներսից՝ վեր է բարձրանում կրկնաշարի շէնքը, գլխին աղատ սիւնների վերայ հանգչող զմբեթով, թմբուկը բոլորակ, իսկ վեղարը կողաւոր. զմբեթի ծայրի բոլորակ զնդի վերայ հաստատուած է քառաթև սսկեզօծ խաչ:



(պատկեր 3)

Մուտքի մօտ կանգնած է մի պատկառելի ծերունի և նրա առաջ մի մանկահասակ պատանի, որ կարմիր զգեստ է փռում Յիսուսի առաջ: Ծերունին հազել է խաղաղամեծ մինչև ոտները հասնող երկար վերնազգեստ, շեղակի բացուած կրծքի վերայ, ապա ուղղակի իջած մինչև ոտքերը. վերնազգեստի կտորի երկիրը գեղնաւուն է վերան ծաղիկներով, բացուածքի շրթունքները երկուցուած կարմիր կտորով: Ոտքերին կարմիր, անկրունկ կօշիկ ունի, իսկ գլխին՝ կարմիր և սպիտակ կտորից բոլորուն թեթև չալմայ, փաթոյթ կտորների ծայրերը կախուած յետևից: Այս հազուստը շատ է յիշեցնում Գաղիկ Ա. և Սմբատ Բ. ու Գուրգէն Բաղրատունի թագաւորների զգեստաւորութիւնը, առաջինը Անիում՝ Գաղիկաշէն տաճարի արձանի համեմատ(*), իսկ միւսները Հաղբատի արեւելեան պատին, իսկ, գրեթէ, բոլորովին նման է Հեթում Սեաստոսի բժշկարանի (Երուս. N. 370) բժիշկների հազուստին: Դէմքը, աչքերն ու յօնքերը կանոնաւոր, այտերի կեղրոնը թեթև կարմիր, որ մեր նկարչի սիրած ձևն է, մորուքն սպիտակ և սուր վերջաւորութեամբ: Երկու ձեռքին բռնել է ձիթենու ճիւղեր:

Դրան չէ հքին, ծերունու առաջ, կանգնած է մանկահասակ պատանին. նա հազել է կանաչ և զօտեւորած պարեգօտ, որ մինչև ոտներն է հասնում. հազել է կարմիր կօշիկներ: Գլուխը բաց է, գանգուրներով ծածկուած. զիրքը քիչ կորացած, որովհետև երկու ձեռքին բռնել է մի կարմիր բաճկոն և փռում է Յիսուսի առաջ: Իշի ոտքերի տակ փռուած է մի ուրիշ բաճկոն և ձիթենու ճիւղեր, էշը գլուխը խոնարհեցրած, հոտոտում է փռուածքը:

Յիսուս նստել է իշի վերայ, երկու ոտքերը միեւնոյն կողմը դարձրած. հազել է կարմիր տունիկայ մինչև մերկ ոտները հասնող, դորա տակից մի ուրիշ նեղ թեղանիքով, որ զարգարուն է կամ ծաղկաւոր բազուկների մօտ և միայն այդ մասն է երեւում. ուսերին ձգել է և մէջքում փաթաթել՝ փէշերը կապոյտ և բա-

րակ վերնազգեստ: Աջ ձեռքը մեկնել է և խաչակնքում է, իսկ ձախին մազադաթի փաթոյթ ունի բռնած: Մորուքը կարճ է և երկճիւղ, բեխերը չափաւոր, աչքերը հեռուն ուղղած, գլխի մազերը ճակատից երկուսի բաժանուած, աջ և ձախ, որ չափաւոր երկարութեամբ իջնում են մինչև ուսերը: Գլխի շուրջը բոլորակ, գեղին, խաչադարգ մեծ նիւթուս: Յիսուսի յետևից ընթանում են երկու հոգի, մէկը գեղին մեծ նիւթուսով և գորշ, ալիսառն բոլորակ միւրուքով, որ Պետրոսն է, կարմիր վերնազգեստով. միւսը առանց նիւթի, սեւ մազերով և մորուքով, ձեռքը ազօթողի նման բարձրացրած, երևի, ժողովրդի ներկայացուցիչ: Պատկերի յետևի տարածութեան երկու կողմից մի մի ձիթենի, բունները ողորկ և բարձր. երեւում է, որ նկարիչը ձիթենի չէ տեսել. տաճարին մօտ ձիթենու բունին երկու ոտքով փաթաթուել է մի փոքր մարդ, դէմքը փչացած, երկու ձեռքերը տարածել է ազօթողի նման, բայց մատների մէջ ձիթենու մի մի փոքրիկ ճիւղ բռնած. նա հազել է մարմինն պլլուած բաճկոն, նեղ անդրաւարտիկ և անկրունկ կօշիկներ: Դէմքը փչացած է:

Նոյն ծառին՝ աւելի բարձր ճիւղերի վերայ երեւում են երկու ֆիգուրներ. գոցանից մէկը մի ձեռքով բռնել է ձիթենու ճիւղը, միւսով տապարը ձեռքին՝ կտրատում է և ցած թափում. նա հազել է կարմիր բաճկոն մինչև ոտները հասնող, զօտեւորած, և ապա նեղ անդրաւարտիկ, ներքելի մասը սեղմ և եղրները զարգարուն. թեւերի վերայ բազալաններ: Մի այլ երիտասարդ երեսը դարձրել է գէպի ձախ և ձեռքը մեկնած, խօսում է երկու մատաղահաս աղջիկների հետ, որոնք նոյն պէս ձեռքները նրան են մեկնել, խօսելու շարժումով: Մի երրորդ կին գտնում է սխնագարգ գմբեթի տակ, չէնքի վերնայարկում, ձեռքերը ծածկած վերնազգեստի փէշերով, ձիթենու ճիւղ է բռնել: Կանանց հազուստի ամբողջութիւնը չի երեւում, բայց գլխի և կրծքի մասերը պարզ են. երկու մատաղահաս աղջիկները, որոնք խօսում են երիտասարդի հետ, գլխներին ունին թեթև և բոլորակ գօտիկ, գլխի յետևի կողմից բարակ շղարշ ձգած,

(*) Տես Հացունի, Պատմ. Հայ Տարազին, Ղենեօիկ, 1923, եր. 181 և 179. այստեղ պատկ. 14 և 15:

որ կապուած է թեթեակի յետևի կողմից. գօտիկի գազաթն էլ զարգարուն: Երևում են նրանց ներքնազգեստի նեղ թեւերը, բազկի մօտ աւելի սեղմուած. ներքնազգեստի վերայից ձգուած է բարակ և արձակ վերնազգեստ: Գմբեթի տակի կինը գլխին նոյն գօտիկն ունի. միայն պարանոցի տակից կապուած է մի լաթով, իսկ լաշակն իջնում է ուսերի վերայ: Աղջիկները գլխի կապն ու զարդը յիշեցնում է Լեոն Գ. ի և Կեռանի աղջիկներին, միայն ոչ նոյնչափ շքեղ, կամ նման է ներկայումս Ախալցխայի և աւելի մօտ Փամբակի կանանց գլխի զարդարանքին: Նոյնն է և բռնաւորի կնոջ Տղատիկնոջ գլխի զարդարանքը, որ հրատարակել է Հայցունին իւր Հայ Տարազի մէջ, եր. 218 և մենք Իգնատիոս Մանրանկարիչ և Ծոթոսկանց Տոհմը աշխատութեան մէջ (Աս, եր. 29): Ծառի վերայից աղջիկները հետ խօսող երիտասարդը ճիշդ նոյն զգեստն ու կօշիկներն ունի, ինչ որ ձուկ բերող Շերենիկն ունէր, միայն առանց գլխարկի և կողքից կախուած թաշկինակի, ասել է, թէ որոշ դասի երիտասարդներին յատուկ ըզգեստ էր այդ: Երկրորդ ձիթենու վրայ ևս մի պատանի է բարձրացել և կացնով ճիւղեր է կտրատում. նա հագել է մինչև գօտին հասնող ելակ. նորա տակից ծալքաւոր բաճկոնակ, որ մինչև ծնկներն է հասնում, տպա նեղ և կարմիր անդրափարտիկ, ոլոքների մօտ սեղմ և զարդարուն, զուցէ և փաթթանով պատած. ոտքերը անկրօնիկ և առանց ճիւղիկի կօշիկ, զուցէ տրեխ:

Ամբողջ մանրանկարն առնուած է զընդաների շարքից բազկացած և երկու գծով եզերուած շրջանակի մէջ:

Երկրորդ մեծ մանրանկարը 17 ա. (պատկեր 4) Լնծայականն է, $21 \times 14 \frac{1}{2}$ սն. մեծութեամբ. խմբանկարի կեդրոնում կանգնած է Յիսուս, իսկ կողքերից աւետարանն ընծայաբերող Սահակ Անեցիին և իւր եղբայրը Առաքել: Յիսուս երկու անգամ բարձր է, քան կողքին կանգնած եղբայները, մի միջոց նրա մեծութիւնը արտայայտելու, որ գործադրւում էր և բիւզանդական մանրանկարչութեան մէջ. հագել է նա երկար, մինչև բոբիկ ոտները հասնող տունիկայ.

վերան ձգել է կարմիր երկար տողայ ձախ թեւի վերայով, մի ծայրը մէջքին փաթաթած և բռնած ձախ ձեռքում: Նոյն ձեռքում բռնել է և կալմած, բաց աւետարան, ոսկի տառերով «Ես եմ լոյս աշխարհի, որ գայ առ իս ևն.» գրած. ոսկեզօծ են և աւետարանի թերթերի եզրները, կողքից կախուած են կալմի կոպիչները: Աջով խաչակնքում է: Մորուքը կարճ է և երկճիւղ, գլխի մազերը շաղանակագոյն, որ իջնում են մէջքի վերայ և երևում են կողքերից: Բեխերը նուրբ և ծայրերը գէպի ցած թեքուած, շրթունքները կարմիր, բերանը կանոնաւոր, այտերը կեդրոնում թեթեւ կարմիր: Խաղաղ աչքերը ուղղուած են դիտողին: Գէմքի տպաւորութիւնը կենդանի է, բայց հանդարտ. գլխի չուրջը խաչազարդ, մեծ նիւթուս, կարմիր յատակի վերայ ոսկու փոշով ծածկուած:

Յիսուսի աջ կողմից կանգնած է մի զգեստաւորուած վեղարաւոր, որ վերան կապոյտ փիլոն է ձգել և որի առաջին քղանցքները շնորհալի կերպով ցած են իջնում, հայկական սովորութեան համեմատ. փիլոնի վերայից ձգուած է խաչազարդ եմփիորոն, ծայրերը ոսկեզարդով և ծոպերով վերջացած: Երկու ձեռքով, կարմիր թաշկինակի մէջ բռնել է ոսկեզօծ աւետարան, որ մատուցանում է Յիսուսին: Հագել է սևին մօտեցող շապիկ, երկար՝ մինչև կարմիր և անկրօնիկ կօշիկներով ոտները: Մորուքը զորշ է և մեծ. բեխերը նոյնպէս ալեխառն. այտերը թեթեւ կարմիր, աչքերն ու յոնքերը սև և կանոնաւոր: Վեղարը սուր և հայկական, փեշերն առնուած փիլոնի տակ: Գլխի վերայ սև թանաքով և արեւելեան բոլորգրով զրուած է. «Քս. որդի ԱՅ՝ ընկալ զքո սուրբ դաւետարանս ի մեղապարտես Սահակայ իրբե զխերեւեչն այրոյն և ողորմես»:

Ձախ կողմից ձեռքերն աղաչաւորի նման պարզած է համեմատաբար աւելի երիտասարդ մի ֆիգուր, հագել է գօտեորած պարեգօտ, կամ երկար պատմուճան, կարմիր յատակի վերայ ոսկի ծաղիկներով. թեւերը չեն սեղմուած: Կօշիկներն անկրօնիկ են, երկու կտորից, գծերով իրարից որոշուած, նման Տբ-ի Շերենիկի կօշիկներին, միայն առանց ծոպերի: Մորուքը մեծ է, ծայրից փոքր ինչ ձեղքուած և արդէն սպիտակել

սկսած. բայց գլխի մազերը սև են և կող-
քերից ուսերի վերայ լիջած: Գլխարկ չունի
և վերևը գրուած է. «Առաքել ծառայ ԱՅՅ»:

Մանրանկարի երկիրը կանաչ է, շրջա-
նակինը կարմիր, վերան գրչով արմաւե-
նիկը յիշեցնող բուսական զարդով ծած-
կուած:

էլ շնորհալի կերպով ծալքաւորած: Ոտնե-
րին սանդալ է, որի կապերը երեւում են
ոտների վերայ: Չախով բռնել է բաց դիր-
քը, իսկ աջով եղեգնեայ գրիչը դրել վե-
րան՝ գրելու համար: Մորուքը մեծ է և
ծայրը թեթև երկուսի ճեղքուած, որ ար-
դէն սպիտակել է սկսել, նոյնը և բեխերը.



(պատկեր 4)

Ձ.

Մնացած մեծ մանրանկարները աւե-
տարանիչներն են իրենց սկզբնազարդերով.
բայց այստեղ ևս Մարգարէն ցոյց է տալիս
իւր ունակութիւնները, որքան և նիւթը ա-
ւանդական լինի. 18բ — 19ա. Մատթէոսն
է իւր սկզբնազարդով. աւետարանիչը,
20,8 × 15,2 սն. մեծութեամբ շրջանակի
հետ, նստած է առանց թիկունքի աթո-
ռակի վերայ (պատկ. 5), որի երկու ոտներն
ու նստելու տեղի մի կողքը երեւում են,
գրչով զարդարուած, ոճաւորած բուսական
զարդերով. հագել է երկար, մինչև ոտ-
ները հասնող տունիկայ և ձախ թևի վե-
րայից ձգել կապտաւուն տոգան, երկուսն

շրթունքները և սիրուն ձեւակերպուած
այտերը թեթև կարմրաւուն են, աչքերը
մտքերի ամփոփման արտայայտութեամբ,
սև բլրերով և ունքերով. գլխի մազերը
համեմատաբար աւելի սև են, հազիւ նկա-
տելի թեթև ալեխառնութեամբ: Աւետա-
րանչի դէմքն ուղղուած է դէպի ձախ,
երեքքառորդական պրոֆիլով: Գլխի շուրջը
մեծ և բոլորակ նիւթուս ունի, կարմիր
աստառը ոսկի փոշով ծածկուած:

Աւետարանչի առաջ դրուած է սեղան,
որի կէս մասն է երեւում. սեղանի շրջանակը
բուսական գեղեցիկ օրնամենտով. սեղանի
վերայ շարուած են գրչութեան գործիք-
ները, կարկին, մկրատ, մազաղաթը ձե-
ծելու մուշտայ և թանաքաման, զոյգ գրիչ-



(պատկեր 5)

ներ, դանակ և քերիչներ, վերջինները, տարաբաղդարար կիսով չափ փչացած, ուստի և նրանց ձևի մասին պարզ գաղափար չենք կազմում: Սեղանի կողքից ձողի վերայ բարձրանում է գրակալը, բացում օրինակով, որ յունարէնն է յիշեցնում: Աւետարանչի առաջից՝ հեռաւոր տեսարանը ճարտարապետական չէնքի մի անկիւնն է, երկու լուսամուտներով եւ թեք կտուրի անկիւնամասով: Նկարի ֆոնը կապոյան է: Շրջանակը զարդարուած է գրաֆիկ, բուսական գեղեցիկ զարդով:

ներով. երկու լիւնետի մէջտեղից կախում է ձուածեւ ողկոյզ, եղերուած ոսկի գծով: Գ.ի մօտիւններն են ներքեից վերեւ հիւսկէն, պարանահիւս օղակների մէջ անցրած՝ ձողի վերայ, չորս թևանի աստղածեւեր, գրի պոչը արմաւենիկով վերջացած: Իրի տառերի մօտիւններն են ութածեւեր և օղակներ, ոսկւով, կապոյտով, կարմրով եւ սպիտակով երփնաւորած: Լուսանցքի զարդի հիմքը մի քառակուսի է, մէջը երկրաչափական զարդերով, նրա վերայ բարձրանում է միջին մասը՝ հիւսուածքի եւ



(պատկեր 6)

Ամբողջ մանրանկարը թողնում է բարձր արուեստի տպաւորութիւն:

Սկզբնազարդը առանձին նորութիւն չէ տալիս, երկու իրար կողքի, երեքքառորդական բոլորակների մէջ գրուած է աւետարանի վերնագիրը. սկզբնազարդի մակերեսովը զարդարուած է բուսական ոճաւորած մօտիւնների մեծ և փոքր վարդեակ-

արմաւենիկի զարդերով եւ վերջաւորում խաչով, կիսալուսնի տակ:

Մարկոսը՝ 112 ր. (պատկեր 6) բաղմած է զարձեւալ ցածրաթիկունք աթոռակի վերայ, մանրանկարի մեծութիւնը $22\frac{1}{2} \times 14,8$ սմ, որի ուները և նստելու տեղի կողերը զարդարուած են արմաւենիկ և այլ մօտիւններով. աւետարանիչը հազել է նաւնջադոյն, լայնաթիւ և մինչև ուները հաս-

նող տունիկայ, ծալքերը մոյգ նարնջագոյնով ստուերած, տոգան ձգել է ձախ ուսի վերայից, փաթաթել մէջքին եւ փէշերը ցած թողել ծնկների վերայից, միւս մասերով ծածկելով ազդրներն ու ծնկները. տոգայի գոյնը դորշ նարնջագոյն է, ծալքերը բաց մանուշակագոյնով ստուերած: Աջ ձեռքը, բռնած գրչով, շնորհալի անփութութեամբ ցած է թողել ծնկան վերայ, իսկ ձախով բռնել է ձողաւոր գրակալի վերայ բացուած իւր աւետարանը՝

բարձրանում են ողորկ բուներով և ականթի զարդերի խոյակներով սիւները, որոնց վերայ ձգուած է բեկուած կամարը, քովթարը ծածկուած արձաւենիկը յիշեցնող բուսական գրաֆիկ զարդերով, անկիւններում այս զարդերի մէջ մի մի նուրբ կողմուածքով թռչուն, դէմքերն իրար ուղղուած: Պէտք է ասել արուեստի այս տեխնիկան հազուադիւր է Հայոց մէջ և մահմետական, պարսկական արուեստի ազդեցութեան հետքեր պէտք է համարել:



(պատկեր 7)

«Սկիզբ աւետարանի յի. քի. | որպէս գրեալ Եսայի մարգ.» սկսուածքով: Ոտքերի վերայ նկատելի են սանդալի կապերը: Մօրուքը կարճ է եւ սեւ, ինչպէս եւ բիսերը, իսկ գլխի մազերը երկար և ցած իջած թիկունքից: Քիթը, աչքերն ու յոնքերը կանոնաւոր, այտերի կեղրոնը թեթեւ կարմիր: Ունի բոլորակ մեծ նիմրուս, ոսկու փոշով ծածկուած երեսը: Մանրանկարի աջ եւ ձախ կողքերից, որպէս շրջանակ,

Գրասեղանի պահարանի մէջ դասաւորուած են անհրաժեշտ գործիքներն ու անօթները, դանակ, մկրատ, թանաքաման, ջրամաններ:

Սկզբնազարդը 113 ա. ներքեւից բաց, իրար կողքի երկու քառանկիւնիներ են, կողերը եռատերեւի շարքով իրենց ցօղուններից կազմուած բոլորակի մէջ, սրանց մէջ պարանահիւս զարդով ձողի գլխին հաստատուած է մի խաչ: Ս և Կ սկզբնատա-

ռերը կազմուած են պարանահիւսի, հիւսկէնների, ութաձևի և արմաւենիկի մոտիւններից:

Լուսանցքազարդը երկար և զարդարուն բունի վերայ հաստատուած ոսկեզօծ խաչ է:

Ղուկասը՝ 174բ. (պատկ. 7) նոյնպէս նստած է աթոռակի վերայ, մանրանկարի մեծութիւնն է $22.5 \times 14, 8$ սմ., ոտքերն ու կողերը զարդարուն, թիկունքն ուղիղ անկիւն և հասնում է մինչև աւետարանչի մէջքը: Աթոռի վերայ ձգուած է սրածայր վերջաւորութիւններով մուրաֆայ, ծայրերը զարդարուն: Աւետարանիչը նըստած է գլուխը դէպի աջ թեքած, երեքքառորդական պրոֆիլով: Տոգան գորշ կանաչագոյն է, որ իրանի մէջքից ցած մասերն ու ծնկները ծածկում եւ հասնում է, գրեթէ, մինչև ոտները, կողքից միայն ներքեւում քիչ բաց, որտեղից երեւում են տունիկայի փէշերը. ազատ է աջ ուսն ու թեւը, եւ երեւում է լայնաթեւ տունիկան. ոտքերին սանդալ ունի: Ծնկների վերայ դրուած է բաց աւետարան, որի կազմի կապիչներն ու կոճակները երեւում են աջ և ձախ կողմից: Աւետարանչի ձախ ձեռքը չի երեւում, բայց այն տպաւորութիւնն է ստացւում, թէ բռնած է աւետարանը տակից, իսկ աջով գրիչն է բռնել և գրում է «Քանզի բազ.» աւետարանի սկսուածքը: Մորուքը գանգուր է, բիսերը դէպի ցած թեքուած, աչքերն ու յոնքերը, քիթը, ամբողջ դէմքն ու գլուխը համաչափ եւ կանոնաւոր. այտերը թեթեւ կարմիր. գլխի մազերը կարճ կտրուած, բայց ճակատին երկու թեթեւ փունջ իջած: Մանրանկարի ֆոնը կապոյտ է, շրջանակը արմաւենիկի ոլորապտոյտ մոտիւններ, կարմիր շերտերի մէջ առնուած:

Սկզբնազարդը (175 ա) ցանցաձեւ, թեք քառանկիւնների մէջ բուսական զարդարանքով խաչաձևեր են ոսկի ֆոնի վերայ. ցանցագծերը կարմիր, իսկ խաչաձևերը մոյգ կանաչ և կապոյտ: «Բ» կազմւած է բուսական զարդարանքներից և զըծական հիւստուածքներից. միւս տառերն ամբողջ տողով մանրանկարչական, ութաձևերի, օղակների և արմաւենիկի զարդերով. եզր թեւաւոր է եւ կապոյտ, դէմքի և մարմնի բնորոշող գծերը թեթեւ կարմիր: Որպէս լուսանցքի զարդ կինեւարիւմով

գրուած է և տառերի միջին մասերը արմաւենիկի տերեւներով զարդարուած՝ «Սահակայ է գիրքս ի փրկութի.»:

Վերջին մեծ մանրանկարը Յովհաննէս աւետարանիչն է Պրոխորոնի հետ (268ա), (պատկ. 8) $20, 3 \times 14, 4$ սմ. մեծութեամբ: Աւետարանիչը կանգնած է և երեսը երեք քառորդով դէպի ձախ դարձրած. լսում է Աստուծոյ թեւադրութիւնը աջ անկիւնից, ձեւացրած աստղազարդ երկնքից, յունտ — հայկական ձեով օրհնող աջով: Աւետարանիչը հապել է կապոյտ, սպիտակով ծալքերը շերտաւորած, տունիկայ եւ վերան ձգել մինչև ոտները հասնող կանաչ նարնջագոյնով ծալքաւորած տոգան. ոտքերը բորիկ են: Աջ ձեռքով խաչակնքում է Պրոխորոնին որպէս թեւադրութեան նըշան, իսկ ձախը քիչ բարձրացրել, զարմացած ուշադրութեան համապատասխան միշարժում. նիմբուսը բոլորակ է, սպիտակ դաշտը ոճաւորած արմաւենիկով ծածկած: Մորուքն ու մազերը գորշ են, այտերը թեթեւ կարմիր, ճակատը դուրս ընկած և լայն:

Պրոխորոնը նստած է ցած եւ անթիկունք աթոռակի վերայ, կարմիր տոգայով և մինչև ոտները հասնող դեղնաւուն տունիկայով, ձախով կազմած աւետարանն է բռնել խուցուրի գրերով, իսկ աջով գրում է եղեգնեայ գրիչ բռնած. (աւետարանների զանազան լեզուներով սկզբնաւոր նորա տիեզերական բնոյթն է մատնանշում այստեղ եւ ոչ մանրանկարների սկզբնականների ծագումը): Պրոխորոնն անմորուք պատանի է, գլխի սև մազերով, և աչքերն ուղղած դէպի աւետարանիչը: Մանրանկարի ընդհանուր ֆոնը կապոյտ է, բայց իբրեւ կենդանացող տեսարան և զարդ Պրոխորոնի յետեւից նկարուած է (հայկական) մի բոլորակ տաճար, որի մարմինն ու լուսամուտներն առնուած են կեղծ սիւնների վերայ հանգչող կամարների տակ, անտրվոյլտները զարդարուն, որոնք նեղ և երկար լուսամուտների և իրենց պսակների հետ ԺԱ. դարում երևան եկած և ԺԳ. ում ընդհանրացած ձևերն են յիշեցնում: Տաճարի մարմնի և գմբէթի մէջ եղած տարածութիւնը բոլորակ երիզ է՝ ծածկուած ոճաւորած արմաւենիկներով: Կեղծ կամարների տակ են առնուած նաև թմբուկի



(պատկեր 8)

լուսամուտները, իսկ վեղարը շերտաւորուած է բոլորակ հիմքի վերայ, գմբէթը վերջանում է խաչով, որի ներքեի գունդն է միայն երեւում, մնացածը լրացնում է երեւակայութիւնը: Մանրանկարի շրջանակը գծական արմաւենիկի ոլորապտոյտ է կարմիր գարգերով:

Սկզբնազարդը երկու շարք երեք եւ յետք քառանկիւնիների մէջ եռատերեւների և նրանց ցողունների հիւստեւածքի վարդեակներ են, ինչ վերից վար այնպիսի հիւստեւածք, իսկ տառի բնորոշիչ կեռը վիշապագլխով վերջացած. և եւ կ կապուած են ի ի հետ պարանահիւսով:

Բազմաթիւ են մանրանկարչական տառերն ու լուսանցքի զարդերը. գոյների մէջ իշխողը կապոյտ լաճուարդն է, իսկ մօտիւններն են եռատերեւներ, արմաւենիկներ, ութաձեւ զարդեր, կանթեր և օղակներ, պարանահիւս և այլ հիւսկէն մօտիւններ արեւելեան բնոյթով:

Է.

Աւետարանի արտաքին և մանրանկարչական նկարագրութիւնն ու յիշատակարանները տալուց յետոյ՝ անցնինք այժմ բուն ուսումնասիրութեան: Նախ տեսնենք նորա պատմութիւնը, որ ամփոփել կարող ենք մէջ բերուած յիշատակարանների հիման վրայ, նրանցից 1-11 համարներով նշանակուածներն անմիջական կապ ունին ձեռագրի ծագման հետ, իսկ մնացածները յետագայ պատմութեան: Այդ յիշատակարաններից տեղեկանում ենք, որ աւետարանի ստացողն է Սահակ անունով կրօնաւոր քահանան, «աշակերտ սբ. ուխտիս Հաղբատայ, աղգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ.»^(*) Նորա ծնողներն են Ռոմանոս կամ Սիմանոս և Կատայ^(**), իսկ հարազատ եղբայրներն են Իսաատոս և Առաքել^(***) որի նկարն ունինք Սահակ ըստացողի հետ (17ա և պատկ. 4). նրանց քոյրերն են Զարհայ և Հոռոմտիկին^(****). Թէ եղբայրները և թէ քոյրերը ամուսնացած են և զաւակներ ունին, բայց անունները չեն յիշուած: Որպէս Սահակ ստացողի հոգեւոր

ծնող յիշուած է Սարգիս կրօնաւոր քահանան, որի եղբայրն է Շահեր^(*). Սարգիսը հաւանօրէն Հաղբատի միաբաններից է, ուր հոգեւորապէս ծնել և իւր կրթութիւնն է ստացել Սահակ կրօնաւորը: Յիշուած են և Յակովբոս ու Վարդ իրենց ծնողների եւ ընտանիքի հետ^(**), որոնք ստացողի հետ կարեւոր կապեր ունին, բայց մանրամասնութիւններ չգիտենք:

Ստացողի գլխաւոր յիշատակարանից (1. Զ-ի մէջ 348ա.) իմանում ենք, որ աւետարանը նուիրուած է Արջոյ առճի սուրբ ուխտին, որ շինուած է հէնց նուիրատուի և նորա հարազատների ծախքով. «զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ եղբարց ծախեցաք և շինեցաք զածաբնակ սբ. եկեղեցիքս»: Տարաբաղդաբար անձամբ չենք տեսել այս վանքը, որ գտնուած է Անիից ոչ հեռու, Ալաճա լեռան արեւելահարաւային փէշերին, դէպի Տեկոր տանող ճանապարհից քիչ աջ, բայց Սարգսեանի բերած արձանագրութիւնների մէջ չկայ շինութեան թուականը և ոչ որ եւ է տեղեկութիւն շինողների մասին, միայն հնագոյն թուականը 1207-ից է, ասել է, թէ այդ ժամանակներն էլ կամ քիչ առաջ շինուած է վանքը: «Եկեղեցիս այս թէպէտ և մեծութեամբն եւ հոյակապութեամբ զուգակշիռ չկայցէ ընդ Բագնայր, սակայն և ոչ շատ ստոր է քան զնա: Նոյն օրինակ բաժանեալ է և սա ի ներքնագաւիթ և ի տաճար, անսխն է ներքնագաւիթն և կամարաւ յարկեալ. և ի վերայ տաճարին եւ երկուստեք խորանին գեղեցկաչէն մատրոնք կամ աւանդատունք հանդերձ կաթողիկէիւք իւրեանց^(***), ուշադրութեան արժանի յատկապէս վերջին մասով, որպէս երկյարկանի եւ գմբէթով վերջաւորուած եկեղեցիների մի երեւոյթ մեր ճարտարապետութեան մէջ, որի մասին քիչ յետոյ եւս խօսք կ'ըլինի: Կարծում ենք, այս ուխտի առաջնորդն է հայր Եղբայրիկը, որի պատկերի նկարագրութիւնը տեսանք Դ. պրակում (պատկ. 1.) որովհետեւ Հաղբատի առաջնորդն էր «տր. Յոհաննէս», իսկ Հոռոմոսինը հայր Մխիթար, ուրեմն և Եղ-

(*) Յիշատ. 1. 2. 6. 7. 9. 10. 11. եւ 17ա. 2-ի մէջ, պատկերի վերնագիրը: (**) Յիշ. 1. 6. 8: (***) Յիշ. 1. 2. 8: (****) Յիշատ. 6:

(*) 1 և 3: (**) 1 և 6: (***) Տեղագրութիւնք ի Փաքր եւ ի Մեծ Հայոս. վննետիկ 1864, 190: Համ. և Ալիշան. Շիրակ. 121:

բայրիկը այս վանքերի հետ կապ չունէր:

Սակայն երկար չէ մնում աւետարանը իւր տեղում, այլ եւ ընդամէնը տասն եւ մէկ տարի. ոմն Սարգիս քահանայ (Ձեռ. 349ա. Յիշ. 2) «գտեալ զսա ի գաւառին Անոյ» գնում է և նուիրում «Մեծ կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան» ստանալով տարին երկու ժամ Ս. Սարգսի տօնին, «ի թուականութեանս: ՈՂԲ: ի յիշխանութեան հղաւրին Հասանայ որդոյ Վախտանգայ, և հայրապետութեան տն. Յոհանիսին»: Աւետարանի անմիջական գրողն և Անիի շրջանից բերողն է ոմն Մխիթար:

Մեծկողմանց կամ Մեծկուենից եպիսկոպոսարանը մէկն է Արցախի հնագոյն հոգեւոր կեդրոններից, որ Ձ. Դարից սկսած որոշ գեր է կատարել Աղուանից իշխանութեան մէջ: Յիշատակարանի Վախտանգայ որդի հօր Հասանը, ոչ այլ ոք է, բայց եթէ Հասան-Ջալալ-Դաւիթ կոչուածը, Գանձասարի շինողն ու Ջաքարէ եւ Իւանէ սպասաւարների խորհրդահարկ որդին: Այս խնդիրը մեզ համար պարզուած է յատուկ ուսումնասիրութեամբ, որ այստեղ կրկնել հնարաւոր չէ, միաժամանակ, վերին խաչնում էլ ապրում էր ԺԳ. դարի երկրորդ տասնամեակում նոյն անունով եւ հայրանունով մի այլ իշխան:

Յիշատակարանները ցոյց են տալիս, որ աւետարանը երկար ժամանակ մնացել է Մեծկողմանց եպիսկոպոսարանում. տէր վանականը ՉՀԴ = 1325 թուին նորոգել է տալիս ի յիշատակ իւր ծնողների և եղբայրների, կազմողն է Ստեփանոս քահանան (Յիշ. 13):

Ապա 1325-1383 թ. թ. Սաղմոսիկ քահանան գրել է իւր յիշատակարանը (14), խնդրելով յիշել Մուսայէլ և Սաղադիէլ որդիներին. յիշատակարանը թուական չունի, բայց ՊԼԲ = 1383 թուին Մովսէս քահանայի յիշատակարանն է գրուած (15), ուր ի միջի այլոց յիշել է խնդրում «և զհայրն իմ զՍաղմոսիկ քհ.»: Մովսէս քահանայի այս յիշատակարանի «պարոն Ջալալ»ը որի իշխանութեան մէջն է Մեծկողմանց եպիսկոպոսարանը, Գանձասարի գաւթի մէջ թողուած նոյնանուն իշխանն է. «Այս է հանգիստ մեծին Ջալալի յաղաթս յիշեցէք. թվ. ՊՁԵ»: արձանագրութիւնների

մէջ յիշուած են «Պատամ որդի մեծի Ջալալին», ՋԻ = 1471 և ապա ՋԽԲ = 1493 թուին «Տուրսուն թոռն մեծի Ջալալին»(*):

Չորս տարի յետոյ՝ ՊԼԶ = 1387 թուին գրուած է մի ուրիշ յիշատակարան նոյն Մովսէս քահանայի անունն հետ կապուած (16). Ովանէս և Թանգուզ ամուսինները սրտի յօժարութեամբ իրենց Մարգարէ որդւոյն տալիս են ցմահ որդեգրութեան Մովսէս քահանային, որպէսզի նա երէց անել տայ, վկայութեամբ Արուկանայ Ալփիկայ որդու և Լարեցի խոջոտայ որդի Բեկիկի: Նոյն յիշատակարանին կից գրուած է մի ուրիշը (17), որով Մայլիքայ որդի Սարխութան միաբանում է սուրբ աւետարանին եւ իւր էսան աղջկան տալիս նոյն Մովսէս քահանային: Կենցաղական նշանակութիւն ունեցող յիշատակարաններ, հաւանորէն մեռել է Մովսէս քահանայի Վարդան որդին և նա որդեգրել է յիշեալ տղային և աղջկան:

Թուականով վերջին յիշատակարանը ՋԽԶ = 1497 թուից է (18), երբ պարոն Ուլուխաթունը «յոյժ հնացեալ» աւետարանը նորոգել է տալիս, երբ Թավրէզ էր եկել Մատխանը:

Անթուական մի յիշատակարան ևս ունինք ոմն Շնահաւորիկի կողմից (19), որով յայտնում է, թէ միաբանել է «սբ. ուխտիս Մեծ կողմանց աթոռոյս», և ժամանակով Մովսէս քահանայից շատ հեռու չպէտք է լինի:

Աւետարանը էջմիածին է բերուած Գանձակի Գետաշէն գիւղից մեր ձեռքով և այժմ գտնւում է Ձեռագրատանը:

Ը.

Սահակ կրօնաւորի մեծ յիշատակարանից տեղեկանում ենք (1), որ Ձեռագիրը գրուած է «ի սբ. ուխտս Հաղբատայ» «ձեռամբ Յակովբայ», բայց գրիչն ինքն էլ ունի կարճ յիշատակութիւններ իւր մասին, ինչպէս Մարկոսի 173ա և Յովհաննու

(*) Բարխուդարեան, Արցախ 176. 178: Ջալալի հանգստեան արձանագրութեան թուականը ըստ Բարխուդարեանի ՊՁ. է, իսկ մեր նկատողութեան տեսրակում վերի թուականն ենք նշանակել, բայց, դուցէ, վերջին է-ն, էական բայն է և բուն թուականը «ՊՁ»:

վերջում 347բ (յիշ. 4. 7): Յակովբի գրությունների առանձնաշարակութիւնների մասին նշել ենք արդէն Ա. պրակի մէջ:

Գրութեան ժամանակն է «հարիւրից վեցից և նոյնքանեաց տասանց, իսկ նորոյ շրջանի միոյ հարիւրոյ քսան և ութեակ թուով»: առաջին թուականը Հայոց մեծ թուականն է, ներսէս Բ. ի օրով հաստատուած, իսկ երկրորդը Սարկաւազադիր, երկուսն էլ համապատասխան միմեանց և հաւասար փրկչական 1211 թուականին: Յիշատակարանը թուագրուած է նաև ըստ սովորութեան տեղական և աւելի ընդհանուր նշանակութիւն ունեցող իշխանաւորների անունով՝ «յառաջնորդութեան տն. Յոհաննիսի սրբասիրի, ի թագաւորութեանն Հայոց արեւմտայինն կողման Լեոնի քրիստոսասէր թագաւորի. և ի սպարապետութեան Զաքարիայ շահընշահի. յորոց յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց Աճ յաղթութիւն ի բազում տեղիս, զորմէ այլք պատմեցեն զայլ ինչ»: Այստեղ յիշուած Հաղբատի առաջնորդ «Յովհաննէս սրբասէր»ը նոյնանուն առաջինն է, մեծ շինարարներից մէկը, որի մասին քիչ յետոյ խօսք կը լինի: Մէջ բերուած վկայութիւնից առանձին ուշադրութեան են արժանի «զորմէ այլք պատմեցեն զայլ ինչ» արտայայտութիւնը, որ ակնարկ է Զաքարեանց եղբայրների ընդդէմ Օրբէլեանների կատարած դերի և վրաց արքունիքի հետ մշակած յարաբերութեան, որով նրանք առաջնութեան պատուին հասան վերահայկական պետութեան մէջ. նրանց վարքագիծը ըստ ամենայնի խրախուսիչ չէր ամէնքի կողմից, որի մասին խուլ ակնարկներ կան և ուրիշ տեղ:

Նկարիչն է Մարգարէ, որի մասին յիշում է ոչ միայն Սահակ կրօնաւորը իւր գլխաւոր յիշատակարանի մէջ, այլ և Մարգարէն ինքը (յիշ. 9 և 10), անուանելով իրեն գրիչ և նկարող. և յիշաւ յայդ փոքրիկ գրութիւնն էլ (15ա. խորանագարդի տակը, փոքր երկաթագրով) բաւական է տեսնելու, որ նա նոյնչափ շնորհալի գրիչ է, որչափ և տաղանդաւոր նկարիչ:

Ուղղողն է կամ սրբագրիչը Մխիթար Քոյքարեցի, ձեռագրի մէջ Քոյքարեցի (61ա. ք-ի հորիզոնական գիծը անուշադրութեամբ բաց թողուած). նա բնագրի մէջ կամ լու-

սանցքում աւելացնում է գրչի աչքից վրիպած բառերն ու երբեմն փոքրիկ նախադասութիւնները: Գրչութեան կեղծնեղած վանքերն առհասարակ ունէին այդպիսի սրբագրող վարդապետներ, հմուտները կամ վարդապետ-վարժապետները միաբանութեան մէջ. հէնց Հաղբատի վերաբերութեամբ առիթ կ'ունենանք քիչ յետոյ յիշելու Յովհաննէս Դ. Դոփեան առաջնորդը, «գիտնական» կոչուած ուրիշների կողմից եւ մեկենաս հանդիսացած մեր մատենագրութեան պատմութեան մէջ վարդանի նկատմամբ: Դլաձորի զպրօցում գրուած ձեռագիրներից ոմանք սրբագրուած են զպրօցի տեսուչ և մեծ վարդապետ Եսայի Նչեցու կողմից: Այդպիսիներից մէկն էր, հաւանօրէն, և Մխիթար Քոյքարեցին, իւր աշակերտների կողմից վայելած յարգանքից դատելով, թէև առայժմ նորա մասին աւելի մանրամասնութիւններ չգիտենք: Նորա 94ա. ներքևի լուսանցքի փոքրիկ նկատողութիւնից՝ «աստի յառաջ յառաջեա դու չորիկ» ուղղուած գրչին, երևում է, որ հայրական, մտերմական յարաբերութիւն ունէր դէպի Յակովբը, որ մարմնով չոր կամ ցամաք, նըւազ պիտի լինէր:

«Յառաջնորդութեան տն. Յոհաննիսի» յիշում է մի «Մխիթար սպասաւոր սրբոցս», որ Բեմի գլուխ կոչուած խաչարձաններից մէկը կանգնում է ի բարեխօսութիւն իւր ծնողաց և եղբորորդի Սարկաւազին. (*) մի ուրիշ արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ 1255 թուին, տէր Համազասպի առաջնորդութեան ժամանակ՝ Մխիթար վարդապետ Քոյքարեցու յիշատակին Յակոբ և Մարգարէ շինում են Ս. Սարգիս(**) կոչուած, բարձր պատուան-

(*) Խաչի յետեւ.

1. Յառաջնորդութիւն տն. Յ
2. ոհաննիսի ես Մխիթար սպասաւ
3. որ սրբոյս կանգնեցի զխաչս
4. ի բարեխաւսութե. (?) ինձ եւ ծն
5. ողաց իմոց եւ եղ(բ)աւրդո
6. իմո Սարկաւազին որք երկ
7. իր պաղանէք յաղաւթս յիշ
8. եցէք.

ՀԱՄ. ԵՐԶԵԿԵԱՆ. 69.

(**) Արձանագրութիւնը խաչարձանի յետեւում.

1. Շնորհիւն այ. ես
2. Յակոբ և Մարգարէս յ

դանի վերայ կանգնած խաչարձանը, վանքի պարսպից դուրս, դէպի արեւելք, աղբիւրի սրահի յետեւը: Ենթադրաբար միայն կարող ենք առաջին խաչարձանի Մխիթարին նոյնացնել սրբազրոյ Մխիթարին, բայց կասկածից վեր է, որ Ս. Սարգիս խաչարձանի արձանագրութեան մէջ յիշուած «Մխիթար Գորայրեցին», Յակոբ և Մարգարէն նոյն են յիշատակարանի մէջ յիշուած նոյնանուն անձնաւորութիւնների հետ, այսինքն մեր աւետարանի սրբազրոյի, գրչի և նկարչի: Այս հանգամանքը կարեւոր արժէք է ստանում մի այլ խնդրի վերջնական լուսաբանութեան համար. յիշատակարաններից պարզ էր, որ նկարիչը կամ ծաղկողը Մարգարէն, բայց անորոշ, թէ ո՞րտեղ էր ապրում և գործում, աւելի ճիշդ ո՞րտեղ է նկարագրողութեան մեր աւետարանը, Հաղբատում, թէ Հոռոմոսում, ուր կողմնուած է առաջին անգամ ձեռագիրը նոյն վանքի հայր Մըխիթարի հրամանով, ուր և հաւանորէն գրուած կարող է լինել յիշատակարանը: Արրահամ կաղմոյ և Մարգարէ նկարիչ միասին են յիշատակուած այդտեղ. որից մականքերի կարելի է, թէ երկուսն էլ Հոռոմոսումն են յիշատակարանի գրութեան ժամանակ և նոյն վանքի միարան: Բայց վերև մէջ բերուած տուեալներով այլ ևս

ոչ մի կասկածի տեղիք չէ մնում, թէ ոչ միայն ձեռագիրն է Հաղբատում գրուած, այլ և նկարուած է նոյն տեղում և նոյն ուխտի միարանի կողմից, ուստի և իրաւամբ ԺԳ. դարում արեւելեան Հայաստանի գրչութեան և մանրանկարչութեան արուեստների գլխաւոր կեդրոններից մէկը պիտի համարել այդ վանքը:

Պ.

Հաղբատի և դրացի Սանահին վանքերի հիմնարկութիւնը վերագրուած է Աշոտ Պողոսմածի թագուհի Խոսրովանոյշին, հնագոյն աղբիւրն այդ մասին Ասողկին է (*), Հաղբատի առաջին վանահայր Սիմէոնին համարելով. Սամուէլ Անեցին աւելի որոշ է դնում հիմնարկութեան թուականը. «Ի ՆԺԶ թվին շինեցաւ Հաղբատ, և Սանահինն՝ Ժ. ամաւ յառաջ քան զՀաղբատ շինեցաւ Ի Խոսրովանոյշ թագուհւոյն՝ Ի կընծէ Աշոտոյ Շահնշահին» (**): Վարդան 978 թուից առաջ է դնում նրանց ծագումը. «Խոսրովանոյշ շինէ զփառազարդ սուրբ ուխտն Սանահին և զՀաղբատ» (***) : Սամուէլի թուականը պէտք է համարել հաստատ, որ համապատասխան է այն թուականին, որ տալիս է Սանահինի Սիմէոնի գրիչն ըստ Զալալեանի (****): Վանքն սկըզբում իբրեւ կրօնաւորանոց, հետզհետէ դառնում է Արեւելեան Հայաստանի մտաւոր և հոգեւոր նշանաւորագոյն կեդրոններից մէկը՝ նախ Կիւրիկեանների և ապա Զաքարեանների ծաղկեալ շրջանում:

Ըստ արձանագրութիւնների ևս հաստատուում է Ասողկի վկայութիւնը, թէ առաջին վանահայրը Սիմէոնն էր, որ ՆՈՒ = 991 թուի արձանագրութեամբ Տիրանուն երեցի հետ շինել է տաճարը Սմբատի և Գուրգէնի փրկութեան համար, որոնց բարձրաքանդակն էլ գտնուում է արեւելեան պատին (պատկ. 9): Նոյն Սիմէոնի յիշատակութիւնն ունինք ՆԾԳ = 1004 թուին եկեղեցու Ատոմ վերակացուի կանգ-

3. առաջնորդութե. տն. 2
4. ամաղասպա կանգնե
5. ցաք զսր. Սարգիսս բարէ
6. խաւս մեղ եւ Մխիթար վղ.
7. Գորայրեցո եւ հաւր Բար
8. սղի եւ ննջեցելոց մեր
9. ոց ուք երկրպագէք քս.
10. ընկալ սր. նշանիս զմե
11. զ յաղաւթս յիշեալ
12. իք ի տր. յիշողքս (!) աւրհ
13. նիք ի տնէ. ի թվիս 2Դ.

Գիրքերը գեղեցիկ և կանոնաւոր: Խաչարձանը կանգնած մեծ պատուանդանի վերայ երեք քարից բաղկացած, ներքեւի երկու քարերի բարձրութիւնը 0.36 մետր, լայնքը 1.65 մետր, երրորդ քարի բարձր. 1.28 մետր, լայնքը 1.17 մետր: Բուն խաչարձանի բարձր. 2.47 մետր, լայնքը 0.91 մետր: Ուրեմն խաչարձանի բարձրութիւնն է, 5.11 մետր: Խաչը ելնդաւոր է, արմատից արմաւենիկի տերեւներ վեր բարձրացած. խաչի թևերը եռատերեւով վերջացած: Ճակատաքարն առանձին, զարդարուած ելնդաւոր գծադարգերով:


(*) Շահնաղ. հրատ. Փարիզ. 1859. 167:

(**) Հրատ. Էջմ. եր. 100:

(***) Վարդան. Մոսկուա. 1861. 122:

(****) Ճանապարհ. ի մեծն Հայաստան. Ա. 42. և Արարատ. 1901 թ. 272. յօդ. Ա. Մինասեանի:

նաժ խաչի արձանագրութեան մէջ, եւ վերջապէս Յառաջագէմ կոչուած աւերակ մատուռի մի խաչքարի վերայ ՆՄԴ=1005 թուին, կանգնած «յաւգնութիւն թագաւորիս մերոյ Դաւթի»(*): Նորա յաջորդն էր Հայր Յովսէփ, հաստատուն կերպով յիշուած ՆՄԷ=1008 թուին «Մասրոպ» խաչքարի արձանագրութեան մէջ՝ «ի թագաւորութեան Դաւթի եւ ի հայրութեան Յովսէփայ»(**):



(պատկեր 9)

Պողոտայ կոչուած միջանցքի մի կամարի վերայ (պատկ. 10) ՆԿԵ=1016 թուին Մուկիշխան որդի Հոնովարի նորոգում է շարժից խախտուած կաթողիկէն եւ նուէրներ տալիս, իսկ ՆՀԲ=1023 թուին իւր որդու Հոնովար «իշխանաց իշխան» յիշատակին խաչ կանգնում: Ո՞ր տոհմից էին այս իշխանները, չգիտենք, բայց այս ժամանակից Հաղբատում յիշատակներ ունին Պահլաւունիք, ինչպէս եւ Սանահնում. «Ապլղարիւր որդի Գրիգոր» ՆՀԹ=1030 թուին տալիս է «զԱրծուէրոյն ի Հաղբատ, գանձագին արարեալ վասն Յովանեսի (Յովհաննէս-Սմբատ) արեւատութեան եւ ինձ մեղաց թողութն»: Այս Ապլղարիւրը, նաեւ Տիգրան կոչուած, Գրիգոր եւ Շուշիկ Պահլաւունիների որդին էր, Վահրամի, Վասակի եւ Գրիգոր Համգէի եղբայրը, որ նըշանաւոր հանդիսացաւ Անիի Ամենափրկիչ եկեղեցու շինութեամբ՝ կալուածներ եւ

նուէրներ տալով եւ Ապուղամբենց գողտրիկ Ս. Գրիգորի նորոգութեամբ(*): Նա ունէր եւ անձնական մատենադարան, ուր գտնուել է Փռտի թուղթը Զաքարիա կաթողիկոսին գրած(**):

Բայց ամենից աւելի վանքը, Սանահնի հետ, Կիւրիկեանների ուշադրութիւնը պէտք է վայելած լինի, որպէս նրանց տոհմական գերեզմանատուն: Կիւրիկէի դուստր Մարիամ Ոժ եւ Ուրթ թուականներից մեծ յիշատակներ ունի այնտեղ. վերջին թուականի արձանագրութեան մէջ յայտնում է, թէ «մեծ յուսով շինեցի դռունս աղաթից ի վերայ հանգստարանացս մեր հաւր, քուեր իմոյ Ռուսուքանին մաւր իմոյ Թամուրային ինձ Մարիամու» եւ խնդրում է յիշել «զմեղ եւ զնախնի թագաւոր ազգականքս մեր, որ հանգուցեալ են առ դրունս սրբոյ կաթողիկէիս ի քս. յս.»։ Եւ յիրաւի այստեղ են Դաւիթ, Կիւրիկէ, Աբաս թագաւորների, Կիւրիկէի կնոջ Թամարի եւ նորա դուստր Ռուսուքանի գերեզմանները:

Կիւրիկեանների տկարանալու շրջանին վրաց թագաւորները նոյնպէս բարեացակամ վերաբերմունք ունին դէպի Հաղբատը(***)։ ԺԲ. դարի վերջին քառորդին՝ Գէորգի III ժամանակից Հաղբատը ենթարկուած էր անմիջապէս՝ ծագմամբ Արծրունի՝ Մահկանաբերդի իշխաններին, որոնք այդ ժամանակից կարեւոր դեր էին կատարում Հայոց եւ Վրաց պատմութեան մէջ(****)։ Հաղբատը եւ սրանց հանգստարանն էր, այնտեղ են թաղուած Գրիգոր Ամիրա, Քուրդ Ամիրա, Սաւուս, Սասնա. տոհմի նշանաւոր ներկայացուցիչներն են Քուրդ ամիրայից զատ՝ Սաղուն աթաբագ, սորա որդին Աղբուղայ, որի որմանկար պատկերը մնացած է մինչեւ այժմ տաճարի հարաւային պատին՝ ներսից(****)։ Այստեղ է թաղուած Դոփը, Զաքարէ եւ Իւանէ եղբայր-

(*) Ալիշան. Շիրակ. 82-84. 51-54: Կոստանեանց. Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910. ԺԷ. և 41:

(**) Տաթևի Զեռ. N. 122. «գտաւ թուխթ ի հնագրեանս Տիգրանայ Պահլաւունոյ...»:

(***) Երզնկեան. 32-33:

(****) Տեո. Շողակաթ. հայագիտական ժողովածու. Վաղարշ. 1913. մեր Զագաւանից ժողովը. եր. 26: Խաղբակեանք կամ Պողոտանք. Վաղարշ. 1928. եր. 3. 6. 21. 97. 134-5: Երզնկեան. Հնախոս. Հաղբատայ. 22:

(*) Այս եւ յետագայ արձանագրութիւնները ստուգել ենք եւ գրի առել անձամբ, տես եւ Զալ. Ա. 79: Երզնկեան. Հնախոս. Հաղբատայ. 17. 25. 68:

(**) Տեո եւ Երզնկեան. 24:

ների քոյրը, Քրդի քրոջ աղջիկը, որի որդին
և թոռնորդին Հաղբատի նշանաւոր եպիս-
կոպոսները եղան Յովհաննէս Ա. և Դ.: Ու-

Վաղուտեանք եւ նոյն իսկ հեռաւոր հայ
Օրբէլեանք:

Այսպիսի հովանաւորութեամբ, բնա-



(Պատկեր 10)

րիչ իշխանական տոհմեր ևս գերեզմանա-
տուն ունէին, շինարարութեամբ կամ նը-
ւիրատուութեամբ կապուած Հաղբատի
հետ, ինչպէս Դէսումեանք, Ուքանանք,

կանարար, Հաղբատը պէտք է հետզհետէ
բարձր դիրք ձեռք բերէր մեր եկեղեցական
նուիրապետութեան հոգեւոր կեանքի մէջ.
Ուսհայեցին և Գանձակեցին պատմում են,

թէ ինչպէս Դաւիթ Անհողինի որդին Կիւրիկէն՝ Անիի Բարսեղ եպիսկոպոսին ՇԼ = 1131 թուին Աղուանից Յովսէփ կաթուղիկոսի ձեռքով կաթուղիկոս է ձեռնադրել տալիս Հաղբատում, իսկ իւր դրաներէց Սարգսին՝ նորընծայ Բարսղի ձեռքով եպիսկոպոս նոյն վանքի (*): Սարգսի յաջորդն էր Գէորգ, ժամանակակից և թըղթակից Ներսէս Շնորհալու 1158 թ. նորամահարձանը գտնուում է պարսպից դուրս գէպի արևելք՝ Անապատ կոչուած փոքրիկ եկեղեցու բակում. «Այս է հանգիստ տն. Գեորգա» արձանագրութեամբ (**): Սորա յաջորդն էր Բարսեղ Ա., (արձանագրութիւնների մէջ 1180, 1185 և 1189 թ. թ. յիշուած) ոչ միայն իւր գեղեցկութեամբ Թամարա թագուհու մեծարանքին արժանացած, այլ և շինարար. նորա ձեռքով «աւարտեցաւ» Մարիամ Բագրատունու իւր նախնեաց և ազգականների գերեզմանների վերայ կանգնած ողջութատունը ՈԼԴ = 1185 թուին, այն երեք առաջնակարգ գեղեցկութեամբ խաչերը, որ հաստատուած են այդ շէնքի արևելեան պատին, ապացոյց են, թէ քանդակագործութիւնը ինչպիսի՝ ազնուութեան էր հասած այդտեղ (սրբկ. 10): Նա պատկանում էր Ուքանանց տոհմին, խնամութեամբ կապուած Կիւրիկեան տան հետ. նորա ազգականները գեղարուեստական, շինարարական և այլ յիշատակներ ունին Հաղբատում ըստ արձանագրութիւնների (**): Սորա ժամանակ էր, որ Գրիգոր Տղան թղթակցութեամբ կամենում էր համոզել Հաղբատեցիներին և Սանահնեցիներին զիջող գիրք բռնել Միութեան խնդրի նկատմամբ և Լամբրոնեցին իւր

զայրոյթն էր յայտնում առ Լեւոն գրած թղթի մէջ (*):

Բարսղի յաջորդն էր Գրիգորիս, որին «սուրբ» տիտղոսն է տալիս Գանձակեցին (**), Զաքարիայի և Իւանէի ազգականը, մասնակից Լօսուայ ժողովին, հին աւանդութիւններին նախանձախնդիր և հակառակ նորամոծութիւնների, ինչպէս վրանի մէջ պատարագելն էր, որի առթիւ և բրածեծ անել տուաւ Կիլիկիայից եկած Մինաս եպիսկոպոսին և նորա պաշտօնեաներին և զրկուեցաւ Հաղբատի առաջնորդութիւնից Զաքարիայի կողմից, նորա փոխարէն Յովհաննէս Ա. ին նշանակելով: Յովհաննէս արդէն Գրիգորիսից առաջ կարճ ժամանակով Հաղբատի առաջնորդ էր եղած (***), բայց թողած և հեռացած էր իւր հայրենիքը՝ Խաչեն, ուր ՈԾԳ = 1204 թ. եկեղեցի է շինում և իւր եղբորը Հասանին յանձնում, որ Դովի ամուսինն էր, իսկ ՈԾԶ = 1207 թ. արդէն Հաղբատումն է (****): Այս Յովհաննէսն է մեր աւետարանի յիշատակարանի նոյնանուն «սրբասէր» իսկ ըստ Գանձակեցու «այր առաքինի» առաջնորդը, որի վերայ կարելի է իրաւամբ «մեծ շինարար» մականունն աւելացնել. «բազում գործս արժանի յիշատակաց գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհռչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն» (*****): Արդա՛րեւ, Հաղբատի այս մեծ և հոյակապ գաւիթը հայ ճարտարապետութեան ամենափառաւոր կոթողներից մէկն է, իսկ գաւիթների ճարտարապետութեան մէջ առաջինը (սրբկ. 11) (*****): Նորա ժամանակի

(*) Ուռհայեցի. Էջմ. հրատ. 1898, 221: Գանձ. Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1909, 91: Ըստ Ուռհայեցու, Ստեփանոսն է Բարսեղին ձեռնադրողը:

(**) Զեռ. Էջմ. N 1687. նաեւ N 943 | 1525. «Թուղղ առ ի ներսիսէ եղբաւրէ տն. Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, Պատասխանի թղթոյն Գէորգայ արևելեան եպիսկոպոսի առաջնորդի սուրբ ուխտին Հաղբատայ, յաղագս հետազաւտելոյ առ ի ստուգութիւն զպատմութի. երանելոյ նահատակին Սարգսի զաւրաւարի մեծի»:

(***) Տեա Երզնկեան, 57-58, 25 (կասկածելի ընթերցմամբ):

(*) Ընդհանրական ներսիսի Շնորհալուայ Էջմ. հրատ. 1865, 426, 433. Լամբրոնացու թուղթը՝ «Առ քրիստոսազօր իշխանն մեր ինքնակալութեամբ՝ Լեւոն»: Գրիգոր Տղայի թղթերի հետ. վենետիկ, 1865:

(**) Գանձ. Ղուկ. հրատ. 92, 161-164:

(***) Երզնկեան, 24:


(****) Բարխուդարեան. Արցախ, Բագու, 1895. 154: Զեռ. Էջմ. N 203 | 194, 254ա:

(*****) Գանձ. 164, տ. և 92:

(******) Մեր նկատողութեան տեսրակից մէջ ենք բերում առաջին տպաւորութեան տակ ապրած յուզման և մտքերի նկարագրութիւնը. «Այսօր (1925, 26 0դ.) մեծ ժամատանն է ի աշխատում, մեծ և բարձր վայելքի բոլէներ ունեցայ այս հոյակապ շէնքի աւելի մանրամասն դիտողու»:

ուրիշ երևոյթների մասին չենք ուղղում կանգ առնել, նիւթից չատ չհեռանալու համար: Նա թաղուած է Գէորգ եպիսկոպոսի գերեզմանին կից և վերան իւր գեղարուես-

նորա յաջորդն էր Յովհաննէս Բ. իւր եղբորորդին, որ 1233 թուին շինեց Կայենոյ բերդը՝ տաճարի հետ միասին, «հրամանաւ քեռոյն իմոյ Իւանէի և որդոյ իւրո Ա-



(Պատկեր 11)

տասէր ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի աւելի մեծ խաչարձան կանգնած, անկիւնաձև ճակատին «✠ Այս է հանգիստ տր. Յովհաննիսի» գրուած (*):

Թեան ժամանակ: Հաղբատը պէտք է ունենայ իւր պատմութիւնը. ճարտարապետութեան, դարդարանքի, արձանագրական յիշատակարանների, պատկերաքանդակների, որմանկարչութեան մի թանգարան է սա: Կը կամենայի ապրել և աշխատել երկա՛ր, երկա՛ր, մինչև որ կարողանայի մի ամբողջական գաղափար տալ այն գեղարուեստական փառաւոր անցեալի մասին, որի տխուր մնացորդներն ենք մենք այժմ: Միջոցներ են պէտք աշխատելու, լուսանկարելու, որմանկարներն արտանկարելու, ճարտարապետական մասերը չափադրելու և գծագրելու, արձանագրութիւնները նոյնահանութեամբ կորստից փրկելու, դարդաքանդակների ժամանակագրութիւն կազմելու և սերտ աղերսը մանրանկարչութեան հետ ցուցադրելու, բայց ես խեղճ եմ, աղքատ, օրական ծախսերս հոգալ չեմ կարող և մտածում եմ շուտ հեռանալ: Այստեղ պէտք է նստիլ մէկ երկու, երեք ամիս մասնագէտ աշխատակիցների հետ»:

(*) Համ. երզնկեան, 64:

ւազին և Շահնշահի որդոյ Զաքարէի» (*), իսկ սորա յաջորդ Յովհաննէս Գ-ի կարճատև եպիսկոպոսութիւնից յետոյ, որդի Աղսարթանայ, Կիւրիկեան Բագրատունիներից, Տ. Համազասպ (1243 – 1257 ըստ արձանագրութիւնների) (**), երկրորդ մեծ և գեղարուեստասէր անձը Հաղբատի առաջնորդների մէջ, որի կարևոր գործերն են երկյարկանի զանգակատունը (պատկ. 12) ՈՂԴ = 1244 թուին և Համազասպ կոչուած «մեծ և սքանչելի» ժամատունը ՉԲ – ՉԶ = 1253–1257 թ. (պատկ. 13) (**): Վերջին թուականին մեռաւ Համազասպը և նորան յաջորդեց Յովհաննէս Դ. Դոփեան՝ գիտութեան, արուեստի, վանքի պայծառութեան մեծ աշխատաւորներից մէկը:

Այսպիսի դիրքի եւ զարգացման համընթաց էր եւ մատենագրութեան ու ձեռագրական արուեստի զարգացումը Հաղ-

(*) Համ. երզնկ. 72:

(**) Գանձ. 93:

(***) Գանձ, 93: Համեմ. արձ. երզնկեան. 51, 38:

բատում: Արևելեան Հայաստանի ԺԲ. դարի և ԺԳ-ի առաջին կիսի նշանաւոր հեղինակների մեծագոյն մասը Հաղբատից են կամ Հաղբատի հետ կապուած. Յովհաննէս Սարկաւազ վարդապետի ընդարձակ և բազմապիսի գործունէութիւնը մատենագրական-գիտական-վարժապետական ասպարիզում այդ զարգացման բարձունքներից մէկն է կազմում. նորա աշակերտներն են Երեմիա Անձրեիկ, Խաչատուր, Գրի-

վերջին երկուսը թղթակցում են Գրիգորիս Գ. Պահլաւունու հետ(*): ԺԲ. դարի վերջին և ԺԳ-ի առաջին քառորդներին Հաղբատում նշանաւոր էին Իգնատիոս «ուսմամբ հռչակեալ», Պետրոս, Վարդան և Դաւիթ վարդապետները(**): Գուցէ նոյն լինի այս Պետրոս վարդապետի հետ «ծերոմն Պետրոս սպասաւոր սր. նշանիս Հաղբատայ», որ «բաղձանաւք սիրոյս» Յովհաննէս կրօնաւոր քահանային գրել է տուել



(Պատկեր 12)

գոր, Յովհաննէս և Սամուէլ Անեցիները(*), առաջինը իբրեւ վարժապետ Անիում և երկրորդը յայտնի ժամանակագիրը: Նորա ժամանակակից վարդապետներն էին նոյն վանքում Դաւիթ Ալաւկայ որդի, «որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս զեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միով, որում անուն էր Արքայութիւն» և Գրիգոր որդի Թոքակերի.

Դաւթի սահմանաց գիրքը «առ ի յուսումն մակայողաց» և ինքն էլ կազմել ՈՂԲ = 1243 թուին(**): Վարդանը Հաղբատեցին է, Շնորհալու ժամանակակից՝ հեղինակ Պատճառաց գրքի, որ հասել է մեզ, նորա Տիրացու և Յովսէփ աշակերտների արտագրութեամբ, ուսուցչի մահուանից յետոյ՝

(*) Վարդան. 159: Գանձ. 107, 188:


(**) Ընդհ. էջմ. հրատ. 1865. 427 և Գանձ. 162:

(***) Զեռ. էջմ. N 1890|1747. 121բ:

(*) Սամուէլ Անեցի. հրատ. էջմ. 128: Վարդան. Մոսկուա. 1861, 159:

1267 թուին (*): Չպէտք է շփոթել սորան Վարդան պատմիչի հետ, որ սրանց կըրտսեր ժամանակակիցն է: Դաւիթ վարդապետը Բոքայրեցին է, դարձեալ հեղինակ Պատճառաց գրքի և ուրիշ աշխատութիւններին, բայց նաև ԶԶ-ի ստացող, անձամբ արտագրել է Դրիգոր աստուածաբանի «Ժճնունդն քի.», «Առ որս» և «Յաղագս Եւնոմիոսացն և ալլոցն չար աղանդից» աշխատութիւնները և արտագրել տուել Գոշ Մխիթարի Երեմիայի մեկնութիւնը, «զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել և գրոշմել զսա, այլ և ալլում տըխ-

օրինակութիւնը կատարուած դարձեալ նոյն Տիրացու գրչի ձեռքով (*). դժուար է մեզ ասել, թէ Հաղբատի այս արհին Յովհաննէս առաջինն է, թէ Յովհաննէս Դ. Դոփեանը, որովհետեւ պարզուած չէ թէ ո՛ր Վարդանն է հեղինակը: Արարածոց մեկնութեան հեղինակ Վարդանը գրել է իւր աշխատութիւնը «ի թվիս ԶԺ (= 1261) ի խնդրոյ արհիական ան. Համաղասպայ և վարդապետին Դրիգորի փակակալին սր. ուխտին Սանահնին», ինչպէս և Օձնեցու վկայարանութիւնը (**): Իսկ Յովհաննէս Դ. Դոփեանը սրբագրել է Վարդանի հըն-



(Պատկեր 13)

մարաց ետու գծել և ապաշաւ ունիմ, թէ պէտ և ուղղեցի յետոյ», վերջում մի պատմական կարեւոր յիշատակարան աւելացնելով Օրբէլեանց ապստամբութեան մասին ընդդէմ Գէորգի III-ի (**): Սաղմոսի մեկնութեան հեղինակ Վարդանը գրել է «չարժեալ ի հոգւոյն սրբոյ և յարհիականէն Հաղբատայ և յաշակերտաց իւրոց», ընդ-

գամատեանի այս մեկնութիւնը, որ և Գէորգ Սկեռացու աշակերտ Երեմիան 1296 թ. ընդօրինակել տալով Աւշին գրչի ձեռքով, բերում է և այդ օրինակի յիշատակարանը. «յիշման բարւոյ արժանաւորն և զմեծապատիւ արհիեպիսկոպոսն մեծահռչակ սր. ուխտին Հաղբատայ զտր. Յոհաննէս, որ զաւրինակս էր սրբագրեալ և զնոր(ին ձե)ռասուն զեղբաւորորդին հարազա(տ) Սարգիս քահանայ, որ ի վարժս կրթ(ութե.)

(*) Զեռ. էջմ. N 4139 (բերուած Տաթևից N 9) 516բ:

(**) Զեռ. էջմ. N 163|260. 233ա. և N 913 նժ.: Թորգոմ արքեպիսկոպոսի Յուլ. Սերաստ. Սուրբ Նշանի Զ. N 153: Գերեզմանը Հաղբատումն է:

(*) Զեռ. էջմ. N 1204|1119:

(**) Զեռ. էջմ. N 1204|1119 և N 920 նժ.:

բանի է պարապեալ, որ և շնորհեաց իսկ զաւրինակս» (*):

Հաղբատի ձեռագրական ժողովածուի կամ մատենադարանի մասին խօսք կայ դեռ ևս Յովհաննէս Սարկաւազ վարդապետի ժամանակից (**). անշուշտ, այստեղ պահում էին նաև տեղական վարդապետների աշխատութիւններն ու գրիչների արտագրութիւնները, ինչպէս և վերեր ակնարկներ տեսանք: Կարինեան ցուցակի N 1535-ի համաձայն գրուած է եղել մի շարական «ի մագաղաթի ի վանս Հաղբատայ ի հայրապետութեան Պետրոսի Ա. Գետադարձ կաթուղիկոսի ի Յովհաննէս գրչէ ի թուին Հայոց ՆԿԸ» (= 1019) (***): Հաղբատում է գրուած Յովհաննէս Սարկաւազ վարդապետի «Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց» աշխատութիւնը, խոշոր և ընտիր արեւելեան բոլորգրով, ոչ ուշ քան ԺԳ. դարի առաջին կէսը (****): Յովհաննէս Ա. ՈՀ (= 1221) թուին մի արձանագրութեան մէջ ամփոփելով իւր երկարամեայ գործունէութիւնը, յիշում է և մատենաներ ձեռք բերելու մասին (*****). գրքերի նուիրատուութիւններ կան Հաղբատի արձանագրութիւնների մէջ նրանից առաջ և յետոյ, նաև գրատան յիշատակութիւն 1179 թուականին և յետոյ (*****). բացի գրքերից գրատան անունով նուիրատուութիւններ են լինում և կալուածներով. Համագասպայ որդի Արամը կրօնաւորում է և «ետու զիմ հայրենիք այգին՝ որ առաջի է Կղաձորոյ ի գրատունս Հաղբատայ». Վահրամ Կուլաղեանց միաբանում է և «ետու զիմ գնած այգին որ ի Բերդիկ է ի գրատունս իմ հոգոյս պաշար». յայտնի է ևս Գ-ի ուղարկած նուէրը Հաղբատին՝ Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութեան

թիւնն՝ ընդարձակ յիշատակարանով, որ Լեոնի համար ասուած է, թէ Մեծ Հայքի վանքերը «միշտ գովէր և տենչէր (?) իբրև հարազատ ժառանգ, և մանաւանդ քան զբազում տեղիս զմեծ և զհոչակաւոր երկնահաւասար սուրբ ուխտն զմայրավանքն Հաղբատ» (*): ԺԳ. դարի երկրորդ կիսում այնքան էր ընդարձակուած վանքի դատունը, որ Յովհաննէս Դ. Դովեան ստիպուած էր յատուկ շէնք շինել (**):

Հաղբատի անունը մեծ էր նաև իբրև գրչութեան դպրոցի, և այդ հասկանալի է. մի տեղ, որ այնքան ստեղծագործական կեանք կար, վարդապետների և աշակերտների բազմութիւն, պէտք է ծագէր և գրչութեան արուեստը: Արդէն խօսք եղաւ մի քանի գրիչների և սրբագրողների մասին. բայց ձեռագիրների մէջ չեն պակասում նորա հոչակի ուրիշ ապացոյցներ: Սարկաւազ վարդապետի համար յիշում է, թէ «զՍաղմոսն բազում ճգամբ ի թարգմանչազիր սաղմոսարանէ գաղափարեաց», ԺԳ. դարի առաջին տասնամեակներում Յովհաննէս Գառնեցին հանդիպել է Հաղբատում և ամենայն ճշգրտութեամբ ընդօրինակել նորա պատրաստած օրինակից (**): Գլաձորի դպրոցի նշանաւոր տեսուչը՝ Եսայի Նչեցին՝ Դիոնեսիոս Արիսպագացու ձեռագիրը ընդօրինակել է տալիս Յովհաննէս Հոռոմայրեցու ձեռքով «ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ ի հոչակաւոր ուխտէն Հաղբատայ» (****): Յովհաննէս արեղան ԶԾԴ = 1305 թուին «ի գաւառիս Խաղտեաց ի հոչակաւոր մենաստանս, որ կոչի Բերդակն, ընդ հովանեաւ հրաշագարդ և գեղեցկաշէն տաճարի, որ յանուն սրբուհոյ Աճածնին եւ սր. Լուսաւորչին Դրիգորի Հայաստանեաց» թողել է ընտիր, բոլորգիր գրչութեամբ մի կէս Աստուածաշունչ, «ի ստոյգ և ընտիր աւրինակէ, որ կոչի Բաղնայրեցի, զոր սր. վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (*****): «Թարգման-

(*) Զեռ. էջմ. N 2604. 186 ա.: Ձեռք յիշում նորա ընդարձակ գործունէութիւնն առ հասարակ, ներկայ աշխատութեան շրջանից դուրս լինելով:

(**) Զեռ. էջմ. N 2680. 579 ա.: «Հանդէս բանի վասն երանեալ առնն ԱՃ. Սարկաւազին կենաց և ժահուն եւ այլոց հուպ յայն ժամանակս»:

(***) Ներսէս Տ. Միքայէլեան ժխտում է այդպիսի շարականի գոյութիւնն էջմիածնում:

(****) Մեր Քարտէզ հայ հնագրութեան § 112:

(*****) Երզնկեան. Հնախոս. 24:

(*****) Զալալ. Ա. 61, 62, 70, 72. Երզնկեան. 30, 34, 35, 45, 49:

(*) Արարատ. 1878, 98: Տես և Սամուէլ Անեցի, էջմ. հրատ. յաւելուածների մէջ. եր. 240:

(**) Երզնկեան. 44, 47:

(***) Զեռ. էջմ. N 4037: Այլշան. Հայապատում. 460:

(****) Զեռ. էջմ. N 60|167:

(*****) Զեռ. էջմ. N 920 նժ.:

չազիր» կամ «թարգմանչացն գրած» արտայայտութիւնները ցոյց են տալիս, թէ Հաղբատի մատենադարանի մէջ հին ձեռագիրներ եւս կային պահուած, բայց տեղում պատրաստուածներէն, որոնցից մէկի մասին՝ Ն (= 951) թուականից՝ հաստատ տեղեկութիւն ունինք (*):

Փ.

Տարաբաղդարար մեր նկարագրած շրջանից գեղարուեստական ուրիշ ձեռագիրներ չեն հասել մեզ, որով կարողանայինք աւելի լրիւ և բազմակողմանի գաղափար կազմել Հաղբատի մանրանկարչական դպրոցի մասին. միայն մի ձեռագիր ունինք աւետարանից գոտ՝ ոչ չքեղ նկարագրողով, բայց բաւական՝ տեսնելու նորագրչութեան եւ մանրանկարչութեան արուեստի ազնուութիւնը: Զեռագրի բովանդակութիւնն է Եսայի և Պօղոսի 14 թղթերը իրենց նախագրութեամբ և ցանկով գրուած բամպակեայ թղթի վերայ, արեւելեան գեղեցիկ բսլորգրով. երկսիւն՝ իւրաքանչիւրը $16\frac{1}{2} \times 5$ սմ. մեծութեամբ: Գրիչն է, հաւանօրէն և նկարիչը, Առաքել քահանայ, ստացողը Յունան քահանայ, կազմուած ՈԾԸ (= 1209) թուին, «ձեռամբ իմոյս (տ)խմարհեստ Սուքիասի»: Դրութեան տեղը ջնջուած է, բայց անկասկած է, որ Հաղբատն է. «Գրեցաւ խոշորագիր գրով գիրքս այս ձեռամբ նուաստ եւ ամենամեղ քահանայի Առաքելոյ, ի սուրբ և ի հոգակաւոր ուխտս. . . (ջնջուած), ընդ հովանեաւ սրբոյ նշանիս եւ մաւրս լուսոյ կաթուղիկէի, յառաջնորդութե. սր. հայրապետիս մերո տն. Յոհաննիս: Ի թուիս հայոց ՈԾԶ»: Զեռագիրն, ուրեմն, ժամանակակից է մեր աւետարանին և նոյն Տ. Յովհաննէս Ա-ի ժամանակ պատրաստուած, ինչպէս և աւետարանը. նկարչութիւնը թէև պարզ, առանց մեծ մանրանկարների, միայն սկզբնազարդեր, մանրանկարչական տառեր և լուսանցքի զարդեր, բայց անպայման կարող գրչի և արուեստագէտի գործ, զուտ արեւելեան մոտիւններով, ինչպէս և մեր բե-

րած օրինակներն են ցոյց տալիս (*): Սորանով մի իրական նոր ապացոյց եւս ունինք, որ մեր աւետարանի արուեստագէտները, Յակովբ գրիչ և Մարգարէ նկարիչ, բացառիկ երևոյթ չէին իրենց ժամանակի համար. Հաղբատի հոգևոր և գեղարուեստական կեանքի այն ծաղկեալ շրջանը, ինչպէս տեսանք նախընթաց պրակի մէջ, եւ երբ ապրում էին մեր արուեստագէտները, պէտք է ուրիշ նման գործեր ևս արտադրած լինէր. դո՛ւ լինինք, որ, գոնէ, այս ձեռագիրը ձեռքի տակ ունինք, որ իւր մանրանկարչութեան եւ գրչութեան որակով շատ պատուաւոր տեղ պիտի բռնէ մեր արուեստի պատմութեան մէջ, գաղափար տալով Հաղբատի դպրոցի մասին:

Մարգարէի մանրանկարչութեան առանձնայատկութիւնների մասին առիթ ենք ունեցել մատնանշելու հարկաւոր տեղերում՝ նկարագրութեան ժամանակ (պրակ Դ-Զ). այստեղ կը կամենայինք նորա արուեստի ամփոփ գնահատականը տալ: Մանրանկարչական, հին արուեստի մէջ, առհասարակ, արուեստագէտը շատ էր կաշկանդուած աւանդական տուեալներով. այդ պատճառով էլ նրանցից շատերը պարզ արտանկարողի գերութիւնն են, հետեւելով իրենց օրինակներին. միայն տաղանդաւորներն են, որ աւանդականի վերայ իրենց անհատական դրոշմն են դնում տեխնիկայի առաւելութիւններով և նոր ստեղծագործութիւններով ու գծերով: Արտաքին ձևերից ու գծերից զատ, յատկապէս զարդագրութեան նկատմամբ, շատ կարևոր դեր են կատարում գոյների համադրութիւնն ու ներդաշնակութիւնը, նրանց կենդանի, խօսուուն առանձնայատկութիւնը, կախարհական հրապոյրը, որ արեւելքի գեղեցկագիտական ճաշակի և մտքի արտայայտութեան միջոցներ են: Մարգարէի արուեստի առաւելութիւնն է և գնահատելի կողմը,

(*) Երզնկեան. 48:

(*) Զեռ. էջմ. N 203|194. ձեռագիրը յետոյ անցնում է ոմն Սարգիս արեղայի ձեռքը. որ 22Ա = 1332 թուին նուիրում է Դաստակերայ եկեղեցուն Տէր Սարգսի առաջնորդութեամբ: Դաստակերը գտնւում է Արցախի մէջ, Թարթառ գետից դէպի ձախ, Եղիշէ Առաքեալ կամ Ջըրվըշտի վանքից դէպի արեւմուտք, Տօնիշէն գիւղին հասած: Յիշատակարանը 254ա: Բարխուդարեան. Արցախ. 233:

որ նա չի հետևում մեքենական կերպով միայն սովորական, ընդունուած ձևերին, այլ ստեղծագործում է ուրոյն, անհատական եւ կենցաղական գծերով եւ արտայայտութիւններով, եւ դորանով բարձրացընում իւր նկարների գեղարուեստականի հետ եւ պատմական-ազգագրական մեծ արժէքը: Բայց նոյն իսկ ընդհանուր հետեւողութիւն եւ բնոյթ կրող մանրանկարների մէջ, թէ խորանազարդերի եւ թէ աւետարանիչների պատկերների, արտացոլում են նկարչի անհատական կարողութիւնն ու շնորհքը. դոյներն էլ լուրջ եւ իրենց տրւալորութեամբ համապատասխան պատկերազրութեան մէջ արտայայտուած մտայնութեան եւ հոգեբանութեան:

Բայց անցնինք փաստական ցուցումներին. 8բ եւ 9ա. (պատկ. 1) խորանների լուսանցքներում նկարելով ձուկ բերող Շերենիկի, անանուն սպասուորի, ինչպէս եւ երկու վանականների պատկերը, գաղափար է տալիս մեզ ժամանակակից հասարակ դասակարգի, երիտասարդ քաղաքացու եւ վանականների զգեստաւորութեան մասին. աշուղի նկարով 15ա. (պատկ. 2) տարազի հետ սաղի, փռուածքի կամ կապերտի, բանաստեղծական մտայնութեան մասին; անկախ աւանդութիւնից, իւր ազատ կամքով: Այս պատկերների մէջ, տարազի որոշ մասերի նմանութիւնը միմեանց հետ, որ մենք մատնանշել ենք նկարազրութեան ժամանակ, ինչպէս անանուն սպասուորի եւ աշուղի գլխարկների նմանութիւնը, Շերենիկի եւ ծառի վերայ բորձրացած, աղջիկների հետ խօսող երիտասարդի զգեստի եւ կօշիկների նմանութիւնը են. անհերքելի ապացոյց են, որ նրանք առնուած են ժամանակակից կեանքից, տարազի պէս պէս ձևերի հետ, գաղափար տալով եւ նրանց կտորների, կերպասների եւ ծաղկաւոր չիթերի մասին:

Խորանների կողքերից ոճաւորած թրուչունները՝ 9ա. 10բ. 11ա. 14բ., ծառերը՝ 10բ. 11ա. 14բ. 15ա. 16բ. (պատկ. 1, 2) խորանների սիւններն իրենց ձևերով եւ օրնամենտացիայով, բուսական զարդարանքները պահում են իրենց վերայ նկարչի ուրոյն գրոյմը եւ հայ-արեւելեան արուեստի առանձնայատկութիւնները, ընդհանուր ձևակերպութեամբ աւանդական լինելով

հանդերձ: Աւետարանիչների հագուստը, նստուածքը, գրելու եղանակը, գրական ու սեղանը հետեւողութիւն է ընդհանրացած աւանդութեան, բայց աթոռի, սեղանի, գործիքների եւ անօթների, ճարտարապետական եւ շրջանակների դրաֆիկ զարդարանքների մէջ արտացոլում է տեղական բնոյթն ու արուեստը: Տեսէ՛ք, թ՛րչափ զեղեցկութիւն եւ շնորհալիութիւն կայ աւետարանիչների հագուստի եւ ծալուածքների մէջ, դէմքերի արեւելեան արտայայտութեան, մազերի անփոյթ թափվածութեան մէջ (պատկ. 5, 6, 7). Յովհաննու մանրանկարը Պրոխորոնի հետ ամենից աւելի է կրում աւանդութեան ազդեցութիւնը, բայց այստեղ էլ ճարտարապետական շէնքը դուրս հայկական է, բոլորակ կկեղեցի, կեղծ սիւնների վերայ հաստատուած կամարների ներքոյ լուսամուտներով եւ աղեղնամէջերով, գմբէթի թմբուկով եւ վեղարով (պատկ. 8):

Զօնի կամ ընծայաբերութեան մանրանկարը (17ա. պատկ. 5) նոյնպէս մեզ տալիս է անհատական բնոյթ կրող հանգամանքներ. պատկերների ընդհանուր ձևն ու դասաւորութիւնը՝ Յիսուս մէջ տեղ եւ աւելի բարձր հասակով, երկու կողմից աւետարանի ընծայաբերող եղբայրները՝ Սահակ կրօնաւոր եւ Առաքել. աւելի փոքր հասակով, ընդհանրացած էր արեւելքում եւ բիւզանդական նման պատկերազրութեան մէջ, բայց այստեղ թէ ընդհանուր մանրանկարը եւ թէ, մանաւանդ երկու եղբայրների, պատկերները տալիս են անհատական եւ պատմական արժէք ունեցող գծեր, տարազ: Սահակ կրօնաւորը, թէեւ բիւզանդականի մէջ եւս ընդհանրացած զգեստաւորութիւն ունի, բայց դէմքն ու վեղարը տեղական է եւ անհատական. Առաքելի պատկերը տալիս է մեզ ԺԴ. դարու Անեցու տարազն առանց վերնազգեստի: Իսկ Յիսուսի դէմքի եւ խաղաղ աչքերի, վահափառական կեցուածքի եւ հասակի եւ անդամների համաչափութեան մէջ գեղարուեստական մի բարձր գործ ունինք մեր առաջ:

Բայց ամենից աւելի ուշագրաւը Յիսուսի մուտքն է Երուսաղէմ (16ա. պատկ. 3), որ ամենեւին չի նմանում աւանդական պատկերացումներին, այլ ամբողջապէս նկարչի

մի նոր յղացումն է անկախ ձեռակերպութեամբ: Այս մանրանկարը մեզ համար արժէք ունի այլ և այլ կողմերով՝ ժողովրդական կենցաղի, տարազի և ճարտարապետութեան. Յիսուսի ընդունելութեան՝ նկարիչը տուել է տեղական-կենցաղական բնոյթ, նմանեցնելով մի բարձրաստիճան անձի կամ թագաւորի ընդունելութեան, ժողովրդի այլ և այլ դասերի և սեռերի ներկայացուցիչները հանելով պատշգամբներն ու կտուրները, ծառերի վերայ, պահպանելով միայն աւետարա-



(Պատկեր 14)

նական պատմութեան որոշ տուեալները, հանդերձների փոփոխութիւնը, իշի վերայ նստելը, ձիթենու ճիւղերը, որի մասին նկարիչը հաւանօրէն գաղափար չուներ: Ապա վերին աստիճանի հետաքրքրական է, որ ժողովրդական դասերի և սեռերի ներկայացուցիչներին զգեստաւորել է համապատասխան իրական կեանքին, առատ նիւթ տալով հայ ժամանակակից տարազի պատմութեան: Այստեղ մենք տեսնում ենք բարձր դասի ծերունի ներկայացուցիչը իւր զարդարուն ապարդիւ, փաթթոցի ծայ-

րերը կախուած կողքից, և ծաղկաւոր վերնազգեստով, համեմատելի Գագիկ Ա.ի արձանին Անիում (պատկ. 14), Սմբատ Բ.ի և Գուրգէնի բարձրաքանդակին Հաղբատի տաճարի արեւելեան պատին, Կիւրիկէ եւ Սմբատ թագաւորների բարձրաքանդակներին Սանահնի տաճարի արեւելեան ճակատին (պատկ. 15), բայց առաւել նման Աւշինի որդի Հեթում Սեւաստոսի բժշկարանի մագաղաթ պահպանակների բժշկաների հագուստին(*): Կանանց, նրանց հետ խօսող երիտասարդի, ինչպէս և Շերենիկի տարազների նմանութիւնները մատնանշել ենք վերեւ (Պրակ Ե. և Դ.). կացնով ձիթենու ճիւղ կտրող պատանիները հասարակ դասի ներկայացուցիչներն են, հագուստներն էլ համապատասխան իրենց ծագման. կարճ բաճկոնակի մէջքն ու կուրծքը թեթեւ զարդարուն, նեղ անդրավարտիկի փոխանցքները նոյնպէս թեթեւ զարդարուն (պատկ. 3):

Ոչ պակաս հետաքրքրական է մեր ճարտարապետական արուեստի պատմութեան համար Երուսաղէմի տաճարը ներկայացնող շէնքը. նախ դարպասը իւր վերնայարկ, վանդակազարդ պատըզգամբով, ուր երիտասարդի հետ խօսող երկու աղջիկներն են կանգնած, բայց առաւելապէս կրկնայարկ և ազատ սիւնների վերայ հանգչող գմբեթով վերջաւորուած եկեղեցին: Շէնքը երկու տեսակէտով գրաւում է մեր ուշադրութիւնը. նախ իւր ազատ սիւնների վերայ հանգչող գմբեթով, որ աւելի հին է, քան մեր ճարտարապետութեան մէջ նման երեւոյթների իրական յայտնի մնացորդներն են, ինչպէս Յոհաննայ վանքի կամ Հաղբատի Համազասպաշէն զանգակատները: Մանրանկարչութեան մէջ միայն ունինք մի երկրորդ աւելի հնագոյն երեւոյթ, քան Հաղբատի աւետարանն է, Շխնոցի աւետարանի մէջ ՆՁԷ = 1038 թուականից, որ դարձեալ Յիսուսի մուտքն է Երուսաղէմ: Աւետարանն այժմ գտնւում է Էջմիածնի պետական մատենադարանում և մէկն է մեր մանրանկարչական արուեստի

(*) Երուս. Հայոց մատ. N 370 բժշկարան: Գունազարդ արտանկարութիւնը կը տպագրուի մեր մանրանկարչական գործում:

պատմութեան կարևորագոյն աղբիւրներից:

Երկրորդ կարևոր հանգամանքը մեր մանրանկարի շէնքի՝ նորա երկյարկանի լինելն է. եկեղեցական երկյարկանի շէնքերի մասին մեր մէջ խօսք կայ ժ. դարից (*). մանրանկարչական հնագոյն մնացորդները տեսանք Շխնոցի և ապա մեր աւետարանի մէջ, իսկ ճարտարապետական «ղոշաները» Հոռոմոսի վանքի դիմաց, Անիից եկող ճանապարհի վերայ, բայց նաև բուն վանքում, ապա Տեղերի վանքում,



(Պատկեր 15)

որ շինուած է կամ սկսուած ՈԿԲ = 1213 թուին եւ արդէն վերջացած ՈՀ = 1221 թուին Աղբայրիկ ճարտարապետի ձեռքով, Վաչէ Վաչուտեանի և նորա ամուսին Մամախաթունի կողմից, Եղիպատրուշ դիւղում, այժմ Տամշլու կոչուած, Արարանի շրջանում, դարձեալ Վաչուտեանների ժամանակից. եկեղեցու գաւթի երկու կողմից կան այդպիսի երկյարկանի, գմբեթաւորած շէնքեր, բայց ոչ անջատ սիւների վերայ, այլ թմբուկով: Նոյնը պիտի լինէր և Արջուառնի վանքում Հ. Սարգիսեանի

նկարագրութիւնից դատելով: Գաւթներից անկախ նման շէնքեր, բացի Հաղբատի Համազասպաշէն զանգակատնից և Սանահնի նման շէնքից ժ. դարում, բազմաթիւ են և սիրուած ժ. դարի առաջին կիսում, ինչպէս Եղվարդի Ս. Յակոբն է, Կարբիի զանգակատունը, Ամազուի Բուրթելաշէնը և այլն, որոնց ծագումը մենք բացատրել ենք զանգակների գործադրութեան ընդունելութեան, արձանագրական կամ յիշատակարանների տուեալներին հետեւելով (*):

Բայց վերջերս արուեստի պատմութեան յայտնի մասնագէտ Գրաբարը նրանց ծագման մասին մի նոր տեսութիւն է տալիս, կապելով արեւելեան քրիստոնէութեան հնագոյն դարերի դամբարանների կամ վրկայարանների (μαρτύριον) հետ, Ասորիքում, Փոքր Ասիայում և Հիւսիսային Աֆրիկայում, որոնց զարգացումը յետոյ Հայաստանում և Բուղարիայում (**), կ'աւելացնենք մեր կողմից նաև Սելջուկեան արուեստի մէջ (***) : Մի ուրիշ գիտնական, Ն. Բրունով, ազդուած Գրաբարի աշխատութեամբ, այդ զարգացման միջին օղակն է համարում Հռիփսիմէի տիպի Մցխէթի Ս. Խաչը՝ Վրաստանում: Այս ցուցումներից տեսնում ենք, թէ մեր մանրանկարի շէնքը ճարտարապետական ինչպիսի կարևոր հարցի հետ է կապուած, հայ շրջանակից էլ դուրս, ընդհանուր արուեստի պատմութեան համար: Այս տիպի շէնքերը փոփոխակներով իրենց ազդեցութիւնը պահում են մինչև ժ. դարը, որի փառաւոր վերջին ձեակերպութիւնը Էջմիածնի զանգակատունն է: Մեր հաւաքած առատ նիւթերը այս տիպի շէնքերի լուսաբանութեան համար, յոյս ունենք կը յաջողուի կարճ ժամանակից յետոյ՝ յաւուկ ուսումնասիրութեամբ մատուցանել պիտութեան:

Նկարչի տեխնիկան բարձր է և իւրատեսակ. գոյները նուրբ են և բարակ քսուած, կարծես լօսած՝ մագաղաթի վերայ:

(*) Բանբեր, Հայաստ. Գիտական ինստիտուտի. 1921-1922. 188-190:

(**) Bi AB. I-1. 1922. Bolgarskia Zerkwi-Grobnizi.

(***) Bi AB. 1927. 135. K Woprosu o Bolgarskich dwychetajnich zerkwach-Grabnizach.

(*) Թովմա Արծրունի, Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1916. 405, 409, 412:

ափսոս, որ խորաններն մի մասը թօշնած է, վատ պահուած լինելու պատճառով: Նորա սիրած գոյների մէջ ամենից աւելի աչքի է ընկնում մոյգ կապոյտը՝ լաճուարդը, որ գործադրում է աւետարանիչների պատկերների համար իբրեւ ֆոն, այլ եւ բուսական զարդարանքների, խորանների շրջանակազարդերի մէջ: Բիւզանդական և մեր կիլիկեան շրջանի համար այնքան սիրուած ոսկի ֆոնը վտարուած է մեր նկարչի գործերի մէջ. ոսկին գործադրւում գծերի համար միւս գոյների հետ, յաճախ կարմրի, որ առանձին ազնւութիւն է տալիս նրանց, և նիւթուսների համար, բայց փոշոսկի և ոչ երբեք թերթոսկի: Կապոյտից յետոյ կանաչն է աւելի շատ գոր-

ծադրութիւն ստացած. ձօնի մանրանկարի ֆոնը մուր կանաչ է, բաւական մեծ չափով գործադրուած է նաեւ խորանազարդերի, սիւնների և բուսական օրնամենտացիայի մէջ: Կարմիրը որ մանրանկարչութեան ամենից բնորոշ գոյնն է, համեմատաբար քիչ է գործադրուած, մեծ մասով գծերի և եզերազարդերի համար: Գործադրուած են նաեւ սևն ու դեղինը. առաջինը կերպական մեծ մանրանկարների շրջանակազարդերի և դէմքը բնորոշող գծերի համար, իսկ երկրորդը՝ սիւնների, նաեւ նիւթուսների համար, ինչպէս երուսաղէմ մըտնելու մանրանկարի մէջ, Յիսուսի և Պետրոսի համար: Գրչով կատարուած զարդարանքները սև են, ինչպէս Մատթէոսի շրջանակն է:

Դեկտեմբեր 1933

Էջմիածին



82

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես 2	Բ.	սխառակ «որ դմբեթի այս»	պէտք է լինի «որ դմբեթի այս»
5	Բ.	» ջալալին	» » Ջալալին
9	Բ.	» զկարս	» » զկարս
11	ա.	» «դուան»	» » դիւան
13	ա.	» հոգո	» » Հոգո
14	Բ.	» եւ Սահմադին	» » եւ Սահմադին
14	Վերջին հատուածը «Համեմատութեան նիւթ» եւն. մինչև վերջ, պէտք է ղե- տեղել եր. 9-10 «Որչափ մեծ էր» եւն. հատուածից յետոյ, իբրեւ լրացումն: Սխալմամբ այդ հատուածը տպուած է վերջում:		
22	Բ.	սխառակ ովաստիկաձև	պէտք է լինի սվաստիկաձև
22	Բ.	» իւն	» » ի-ն
23	Բ.	» ովաստիկաձև	» » սվաստիկաձև
25	ա.	» Աղատիկին	» » Տղատիկին
27	ա.	» Աղատիկին	» » Տղատիկին
27	Բ.	» Աղատիկին	» » Տղատիկին
28	ա.	» Աղատիկնոջ	» » Տղատիկնոջ
28	Բ.	» Աղատիկնոջ	» » Տղատիկնոջ
30	ա.	» Աղատիկինը	» » Տղատիկինը
31	ա.	» պատմութեան	» » պատմութեան մէջ
31	ա.	» Յովհաննէս Գ.	» » Յովհաննէս Դ.
34	Բ.	» ծանօթ. Վաճրիկ	» » Վաճրիկ
40	ա.	» սխառակ եռանկիւններ	» » եռանկիւններ
43	Բ.	» նոյն	» » նոյն
43	Բ.	» սրահաց	» » սրահաց (!)
44	ա.	» զիմաստուն	» » զիմաստուն
44	ա.	» հոգով և մարմնով	» » հոգով և մարմնով
47	Բ.	» ճիտկենի	» » ճիտկերի
52	ա.	» իսկ, գրեթէ	» » և գրեթէ
53	Բ.	» կապիւնները	» » կապիւնները
60	ա.	» այնպիսի հիւսուածք	» » նոյնպիսի հիւսուածք
60	ա.	» Ռոմանոս կամ Սիմանոս	» » Ռովմանոս կամ Սիմանոս
61	ա.	» ալլ եւ	» » ալլ
61	ա.	» գրողն	» » գնողն
61	ա.	» վանականը	» » Վանականը
63	Բ.	» ծանօթ. Ա. Մինասեանի	» » Տ. Մինասեանի
64	Բ.	» սխառակ Թամարային	» » Թամարայ եւ
65	ա.	» Յովհաննէս Ա.	» » Յովհաննէս Բ.
65	Բ.	» Վաղուտեանք	» » Վաչուտեանք
74	Բ.	» Ամաղուի	» » Ամաղուի

Երես 10, 12, 31, 35, 43, 45, 48, ?! պէտք է լինի s!, այսինքն sic!

Էջմիածնի Գիտական ինստիտուտի ժողովածուից, 1921, էջ 12:

22. Izwlechnié iz istorii Grigoria Kamachskawo ili Daranagskawo kasattelno Garni (Otdelnij Ottisk iz «Christianskawo Wostoka» T. 1):

(ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ)

23. ԽԱՂՐԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊԹՕՇԵԱՆՔ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԷՋ: Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ. Մասն առաջին. 120 ցինկա-

տիպ պատկերներով: Վաղարշապատ, 1928, X111 + 304 էջ:

24. ՄԻ ԷՋ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ. զբեց Գար. Արքեպ. Յովսէփեան, Առաջնորդ Հայոց Նոր-Նախիջևանի: 1930, տպագրություն «Արաքս»-ի. Բ. Յ. Թոփալեան, Հալէպ. Մատենադարան «Տաթև»-ի. թիւ 1, էջ 56:

25. ՄԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ Նորագիտ Արձանագրություն և երկեր: Երեսուցէմ. տպարան Սրբոց Յակոբեանց 1931, էջ 23: (Արտատպւած ՍԻՈՆ Ամսագրից):

ԱՅԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

(ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ)

Եղիշէ ձեռագիրների համեմատություններ (Կիւսաս):

Ս. Լուսաւորիչ և Հայաստանեայց Ս. Եկեղեցի, «Արարատ». 1890 Գ.:

Քրիստոնէի գերակայ գաղափարը, «Արարատ». 1897 Ե.:

Եկեղեցին և աղքատների խնամատարութեան գործը. անդ 1897 Ձ. Է., 1898 Ձ. Է. Ը.:

Կրօնի կենսատու գործությունը, անդ 1897 Ձ.: Լուսաւորչի կողմ. անդ Ձ.:

(ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ)

Կամիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրություն. «Արարատ». 1898 Ժ.:

Ծրդութի հին աւետարանը. անդ ԺԲ.:

Ժողովրդական բանահիւսութեան հետքեր միջնադարեան տաղարաններում, անդ ԺԲ. 1899 Ա.:

Շնորհաւոր Նոր Տարի. անդ Ա.:

Հայագիտական տեղեկություններ, անդ Բ., Գ., Դ., Ե., Զ.:

Անշափահաս ամուսնություն, անդ 1900 Բ.:

Քահանաների ընտրություն և զանազան, անդ Գ.:

Գիտություն և եկեղեցի, անդ Ե.:

Կրօնական անձնաւորությունը, անդ Ժ.:

Աշխատանքի գաղափարը քրիստոնէությունում, անդ ԺԲ.:

Մատենախօսություն. H. Marr. Texti i Rasiskania po armiano-grusinskoj philologii i Ephrem Syrin:

Մայր Աթոռի մատենադարանը անդ 1901 Ա.:

Դասի փոխադրման բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց. անդ 1906 Գ.:

Կատարելություն ձեռագրաւոր, անդ 1907 Ա.:

Հայոց եկեղեցին 1906 թուին, անդ 1907 Ա.:

Մի կարեւոր գիւտ. իրենիտի Յոյցք առաքելական քարոզություն, անդ Ա.:

Նահապետ եպիսկոպոս Նահապետեան, անդ Ա.:

Դասի փոխադրման (Հարքացի). անդ Ա., Գ.:

Սրտի սրբությունը, անդ Բ.:

Դպրոցը եկեղեցու նախագահի մէջ, անդ Բ.:

Ապաշխարություն քարոզը անդ Գ.:

Պէտք է կազմակերպուինք. անդ Գ.:

Վշտի և տառապանքի բովից. անդ Ե.:

Ժողովները եկեղեցական կեանքում. անդ Ե.:

Աղօթքի սրբարար գործությունը, անդ Ձ.:

Հայրենասիրություն և քրիստոնէություն, անդ Է., Ը.:

Դարձեալ դպրոցների մասին, անդ Է., Ը.:

Մեր հոգեւոր հայրենիքը. անդ Բ.:

Աստուած կա՞յ (փոխ). անդ ԺԲ.:

Ստեղծեան և կեղծիքի ճանապարհով, անդ ԺԲ.:

Փրկչի ծնունդը. անդ 1908 Ա.:

Հայոց Հայրապետական Աթոռը. անդ Ա.:

Գիտությունը սահմանաւոր է (փոխադր). անդ Բ.:

Ս. Էջմիածնի Միաբանությունը, անդ Բ.:

Դասի միջնադարի և Պիտոյից գիրքը. անդ Բ.:

Մայր Աթոռի տպարանը, անդ Գ.:

Քննություն և գրախօսություն, անդ Գ.:


Անձանօթ Աստուածը (փոխ). անդ Գ.:

Կեանքի բանալին, անդ Ե. — Ձ.:

Եկեղեցու ջօրություն (փոխադր.), անդ Բ.:

Եկեղեցւոյ կոչումը. անդ Ժ.:

Նախնաց յիշատակներ, անդ. 1910 Ա., Գ.:



Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի դար-
դանկարչութիւնը, անդ Բ.:

Մանրանկարչութեան արուեստը հայոց մէջ,
(Լեոն Գ.ի պատկերի առթիւ), «Լուսա»,
1902, N° 1:

Գրախօսութիւն. Atlas zum Katalog der Ar-
menschen Handschriften. Von Fink. u. Strzi-
gowski. Tübingen. 1907, «Ազգագրական
Հանդէս», 1908, Գիրք XVII Ա.:

Կաթուղիկոսական ընտրութիւն և օծումն,
«Ազգագրական Հանդէս», 1910, Գիրք XIX
Ա.:

Կաթուղիկոսական յուշարկաւորութիւն եւ
թաղումն, անդ 1907, Գիրք XVI:

Հին հայոց դրամներ, «Տարազ», 1900, թ.
20 և 22:

Հնութեան նշխարներ, «Տարազ», 1909 N° 1:

Ռոստամ-Ջալ, ժողովրդական վէպ. «Ազգա-
գրական Հանդէս», 1901, VII և VIII Գիրք:

Ռոստամ-Ջալ (ուսումնասիրութիւն), «Ազ-
գագրական Հանդէս», 1904, Գիրք VII:

Անդրանիկ կոնդակի դարդանկարչութեան
մասին, «Հովիտ», 1910, N° 4:

Գառնիի աւերակները, անդ N° 8:

Ուշագրութեան արժանի, անդ N° 32:

Մի նոր պատմագիր, անդ N° 35:

Յայտնութիւն Յովհաննու հին հայ թարգմ.,
Հրատ. Ֆ. Մուրատ (Մատենախօսութիւն),
անդ N° 36 — 37:

Անիի ներկայ տարուայ պեղումներից, անդ
1912, N° 29:

Մատենախօսութիւն. «Christanskij Wostok»
T. I., «Հովիտ», 1912, N° 38:

Անհետ կորչում են, անդ 1912, N° 43:

Ազապի հաստատութիւնը Հայոց եկեղեցւոյ
մէջ, «Արարատ», 1912, թ.:

Հայոց գրի գլխաւոր տեսակները, «Տարազ»,
1912, N° 10:

Համառօտ տեղեկութիւններ Էջմիածնի մի-
ջանի մանրանկարների մասին, «Անահիտ»
ԺԲ. 97 — 115, 12 պատկերով:

Ս. Էջմիածնի տաճարի պատկերագրութիւնը
Սիմէոն կաթուղիկոսի ժամանակ, «Անա-
հիտ» ԺԲ. 67 — 70:

Ձագաւանից ժողովը, «Շողակաթ» ժողովա-
ծու, 1913:

Քարտէզ հայ հնագրութեան և գրի նոյնա-
տիպ օրինակներ, 90 տախտակով, «Շողա-
կաթ» ժողովածու, 1913:

Նոր նիւթեր թուրք Մեծօփեցու կենսագրու-
թեան, «Արարատ» 1913, Ը-թ, ԺԲ, 1914 Ա.
Հայագիտական այլ եւ այլք, անդ թ. 1915,
Բ., Գ.:

Հանգիստ Տ. Կարապետ եպիսկոպոսի, 1915
ԺԱ — ԺԲ.:

Մկրտիչ Նազաշի թուղթը Ֆլորենտինոյ ժողո-
ւի առթիւ, անդ 1916, Ե., Զ.:

Դաւիթ-փիլիսոփայ (Հարքացի), անդ ԺԱ-ԺԲ.
Տարեկան տեղեկագիր Գէորգեան Հոգեւոր
ձեմարանի, 1914 — 15, ուս. տր., անդ ԺԱ-
ԺԲ.:

Ձեռագրաւան նորութիւններ, անդ 1917, Բ-
Գ.:

Պատմութիւն Յովհաննու Մայրապոմեցւոյ,
անդ Թ — ԺԲ.:

Հանգիստ Տ. Մեսրոպ վարդապետի, անդ 1918
Ա.:

Յովասափ Սեբաստացի, անդ 1918 Դ — ԺԲ.:

Գրիգորիս Աղթամարցի, անդ 1919 Ա — ԺԲ.:

Համալսարանի բացումը, «Էջմիածին» շա-
բաթաթերթ, 1920 N° 6:

Հայ գիտութեան կորուստներից — Կարա-
պետ կոստանեան, «Բանբեր», Էջմիածնի
Գիտական ինստիտուտի, 1921 — 22. էջ 314
— 316:

Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, «Հան-
դէս Ամսօրեայ», 1930, Յունուար — Փետր-
էջ 42 — 60:

Սեանայ Առաքելոց վանքի հարաւային դու-
ռը, «Անահիտ», Նոր Շրջան, Գ. Տարի,
թիւ 5 — 6, 1932 ամի:

Մի պտոյտ Եւհաննում, «Անահիտ», Յուն. —
Ապրիլ, 1931:

Եղիշէ Թադէոսեանի էտիւզների ցուցահան-
դէսը, «Անահիտ», Յուն. — Փետր., 1935:

Էջմիածնի մեծ խորանի ասեղնեգործ վարա-
գոյրը, «Անահիտ», Մարտ — Յունիս, 1935:

Սասանեան կերպասի կտոր Էջմիածնի թ.
1759 նժ. Ձեռագրի կազմի մէջ, «Հանդէս
Ամսօրեայ», Մայիս — Յունիս, 1935:

Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի զարդանկարչութիւնը, անդ Բ.:

Մանրանկարչութեան արուեստը հայոց մէջ, (լեռն Գ.ի պատկերի առթիւ), «Լուսա», 1902. N^o 1:

Գրախօսութիւն. Atlas zum Katalog der Armenischen Handschriften. Von Fink. u. Strzizgowski. Tübingen. 1907, «Ազգագրական Հանդէս», 1908, Գիրք XVII Ա.:

Կաթուղիկոսական ընտրութիւն և օծումն, «Ազգագրական Հանդէս», 1910, Գիրք XIX Ա.:

Կաթուղիկոսական յուշարկաւորութիւն եւ թաղումն, անդ 1907, Գիրք XVI:

Հին հայոց դրամներ, «Տարազ», 1900, թ. 20 և 22:

Հնութեան նշխարներ, «Տարազ», 1909 N^o 1:

Ռոստամ-Ձալ, ժողովրդական յէպ. «Ազգագրական Հանդէս», 1901, VII և VIII Գիրք:

Ռոստամ-Ձալ (ուսումնասիրութիւն), «Ազգագրական Հանդէս», 1904, Գիրք VII:

Անդրանիկ կոնդակի զարդանկարչութեան մասին, «Հովիտ», 1910. N^o 4:

Գառնիի աւերակները, անդ N^o 8:

Ուշադրութեան արժանի, անդ N^o 32:

Մի նոր պատմագիր, անդ N^o 35:

Յայտնութիւն Յովհաննու Հին հայ թարգմ., Հրատ. Ֆ. Մուրատ (Մատենախօսութիւն), անդ N^o 36 — 37:

Անիի ներկայ տարուայ պեղումներից, անդ 1912, N^o 29:

Մատենախօսութիւն. «Christanskij Wostok» T. I., «Հովիտ», 1912, N^o 38:

Անհետ կորչում են, անդ 1912, N^o 43:

Ազապի հաստատութիւնը Հայոց եկեղեցւոյ մէջ, «Արարատ», 1912, թ.:

Հայոց գրի գլխաւոր տեսակները, «Տարազ», 1912, N^o 10:

Համառօտ տեղեկութիւններ Էջմիածնի միջանի մանրանկարների մասին, «Անահիտ» թ. 97 — 115, 12 պատկերով:

Ս. Էջմիածնի տաճարի պատկերագրութիւնը Սիմէոն կաթուղիկոսի ժամանակ, «Անահիտ» թ. 67 — 70:

Ձագալանից ժողովը, «Շողակաթ» ժողովածու, 1913:

Քարտէզ հայ հնագրութեան և գրի նոյնատիպ օրինակներ, 90 տախտակով, «Շողակաթ» ժողովածու, 1913:

Նոր նիւթեր թուրք Մեծփեցու կենսագրութեան, «Արարատ» 1913, Ը-թ, թ. 1914 Ա.:

Հայագիտական այլ եւ այլք, անդ թ. 1915, Բ. Գ.:

Հանգիստ Տ. Կարապետ եպիսկոպոսի, 1915 թ. — թ.:

Մկրտիչ Նաղաշի թուղթը Ֆլորենտիոյ ժողովի առթիւ, անդ 1916, Ե. 2.:

Դաւիթ-փիլիսոփայ (Հարքացի), անդ թ. — թ.:

Տարեկան տեղեկագիր Գէորգեան Հոգեւոր ձեմարանի, 1914 — 15, ուս. տր. անդ թ. — թ.:

Ձեռագրաւան նորութիւններ, անդ 1917, Բ. Գ.:

Պատմութիւն Յովհաննու Մայրագոմեցւոյ, անդ թ. — թ.:

Հանգիստ Տ. Մեսրոպ վարդապետի, անդ 1918 Ա.:

Յովսէփ Սեբաստացի, անդ 1918 Դ — թ.:

Գրիգորիս Աղթամարցի, անդ 1919 Ա — թ.:

Համալսարանի բացումը, «Էջմիածին» շաբաթաթերթ, 1920 N^o 6:

Հայ գիտութեան կորուստներից — Կարապետ կոստանեան, «Բանբեր», Էջմիածնի Գիտական ինստիտուտի, 1921 — 22. էջ 314 — 316:

Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, «Հանդէս Ամսօրեայ», 1930, Յունուար — Փետր. էջ 42 — 60:

Սեանայ Առաքելոց վանքի հարաւային դռնը, «Անահիտ», Նոր Շրջան, Գ. Տարի, թիւ 5 — 6, 1932 ամի:

Մի պտոյտ Երեանում, «Անահիտ», Յուն. — Ապրիլ, 1931:

Եղիշէ Թաղէսեանի էտիւդների ցուցահանդէսը, «Անահիտ», Յուն. — Փետր., 1935:

Էջմիածնի մեծ խորանի ասեղնագործ վարագոյրը, «Անահիտ», Մարտ — Յունիս, 1935:

Սասանեան կերպասի կտոր Էջմիածնի թ. 1759 Ն. Ձեռագրի կազմի մէջ, «Հանդէս Ամսօրեայ», Մայիս — Յունիս, 1935:

ЦЕНА

А-III
1328